Հաստատում եմ՝
Տնօրեն՝ Ն. Տողանյան
01.09.2023թ.

Ստուգված է
Տարրական մ/մ
Նախագահ՝ Կ.Չիբուխչյան

Երևանի Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի թ.57 հիմնական դպրոց

2023-2024 ուստարի

Մայրենիի

թեմատիկ պլանավորում

Դասարան՝ 4-րդ

Ուսուցիչներ՝ Ա. Հովհաննիսյան
Տ. Աբրահամյան

MI NOTE 8 PRO
QUAD CAMERA

Թեմատիկ պլանավորում
Մայրենի - 4-րդ դասարան
Տարեկան՝ 272 ժամ
Շաբաթական՝ 8 ժամ
Դասագրքի հեղինակներ՝ Վ. Սարգսյան և ուրիշներ, 2021թ.

Թեմատիկ պլանը կազմող ուսուցիչներ՝
Գայանե Դաշտոյան (Գլոբալ Բրիջ),
Աստղիկ Բալայան (ԿԶՆԱԿ հիմնադրամ),
Գոհարիկ Մելքոնյան (հ. 131 դպրոց),
Անահիտ Հակոբյան (հ. 152 դպրոց),
Լիլիթ Ավետիսյան (Այբ),
Աիդա Կուջոյան (հ. 131 դպրոց)

Համակարգող՝ ԿԶՆԱԿ-ի ուսումնական բնագավառների մշակման և զարգացման բաժնի մասնագետ՝ Գայանե Մկրտչյան, մ. գ. թ.

Թեմա	Նպատակ	Վերջնարդյունքներ
Հայաստան նի յոթ և բյուր հրաշալ իքները	.Ստեղծագործության հիմնական գաղափարի ընկալման կարողության զարգացում: Տարբեր ժանրերի և ծավալների ստեղծագործությունները հասկանալով կարդալու կարողության տիրապետում .Կարդացածի հիմնական մտքի առանձնացում: Տեքստի վրա ինքնուրույն աշխատելու և դատողություններ անելու կարողությունների զարգացում: Ստեղծագործության հերոսի նկարագրում: Դեպքերի նկարագրության տրամաբանական հաջորդականության և մտքի ճշտության պահպանում: .Դարձվածային իմաստով գործածված բառակապակցությունների ճանաչում տեքստում: .Անցած խոսքի մասերի վերաբերյալ	Բառի մեջ ճանաչել արմատը և ածանցը, տարբերել պարզ, բարդ և ածանցավոր բառերը, ածանցներով կազմել նոր բառեր:Կրկնել և ամրապնդել հնչյունները և տառերը, այբուբենը, տառանունները, բառերի իմաստային խմբերը բառերի փոխա-բերական իմաստները գոյականը, ածականը, բայը, թվականը: Հասկանալ կարդացած տեքստի բովանդակությունը: Հասկանալ տեքս-տում նկարագրված իրադարձությունների միջև առկա կապերը: Հասկանալ տեքստի բովան-դակության, նկարագրման և սեփական կենսափորձի միջև կապերը: Սահուն, գրական շեշտի և առո-գանության պահպանումով բարձ-

	գիտելիքների խորացում և ամրակայում: .Առարկայի թիվ և թվային կարգ ցույց տվող բառերի գործածության և ճիշտ գրության կարողությունների զարգացում:	բաձայն ընթերցել տեքստը: Պատմել կամ վերապատմել տեքստը՝ պահպանելով դեպքերի տրամաբանական հաջորդականու-թյունը և վերաբերմունք դրսևորելով նկարագրվող դեպքերի, հերոսների վարքագծի վերաբերյալ: Ձևավորել իր ազգային պատկանելու-թյան, մայրենի լեզվի անհրա-ժեշտության և առաջնայնության գիտակցում, հարգանք դիմացինի արժանապատվության և ինքնության նկատմամբ, գեղեցիկը, բարին, մարդկայինը տեսնելու, ընկալելու և գնահատելու կարողություն:

Ժամ	էջ	Դաս
1/1	3	<<Հայաստանի յոթ և բյուր հրաշալիքները>> մուտքի զրույց
1/1	4-6	Գրքի զրույցը քեզ ծանոթ և անծանոթ հրաշալիքների մասին
3/1	7-10	Հովհաննես Թումանյանի արձանի մոտ
3/1	7-10	Հովհաննես Թումանյանի արձանի մոտ
1/1		Ինք/ընթ. Աշխատանք՝ամառային արձակուրդի ընթացքում ընթերցած գրքերի շուրջ
1/1		Խ/հ Ինչպե՞ս ենք շփվում միմյանց և ուրիշների հետ
1/1		Գրավոր աշխատանք
1/1		Գրավոր աշխատանք
3/1	7-11	Հովհաննես Թումանյանի արձանի մոտ
3/1	**12-13**	Արամ Խաչատրյանի հետ
3/1	**14-15**	Արամ Խաչատրյանի հետ
3/1	12-16	Արամ Խաչատրյանի հետ
1		Ինք/ընթ. Ուսուցչի հայեցողությամբ
1		Խ/հ Շփում և հաղորդակցություն (պատմել, հաղորդել, ասել)
1		Գրավոր աշխատանք
1		Գրավոր աշխատանք

3/1	17-18	Սարյանի նկարներում շողշողում է Հայաս տանի հավերժությունը:
3/1	17-19	Սարյանի նկարներում շողշողում է Հայաս տանի հավերժությունը:
3/1	17-19	Սարյանի նկարներում շողշողում է Հայաս տանի հավերժությունը:
1	20	Թեմայի ամփոփում: Հարցնում է գիրքը
1		Ինք/ընթ. Ուսուցչի հայեցողությամբ
1		Խ/հ Շփում և հաղորդակցություն (պատմել, հաղորդել, ասել)
1		Գրավոր աշխատանք
1		Թեմատիկ գրավոր աշխատանք հ.1
1Թեմ. Պլան.-2	21-23	Անակնկալը
2/1	24-28	Մասիսից դեպի Ագռավաքար: Դարձվածք
2/1	24-28	Մասիսից դեպի Ագռավաքար: Դարձվածք
2/1	29-30	Ճամփորդությունը շարունակվում է:
1		Ինք/ընթ Ուսուցչի հայեցողությամբ
1		Խ/հ Խոսքային և ոչ խոսքային հաղորդակցություն
1		Գրավոր աշխատանք
1		Գրավոր աշխատանք
1	29-30	Ճամփորդությունը շարունակվում է:
4/1	31-32	Իշխանը:Դարձվածք
4/1	33-34	Իշխանը:Դարձվածք
4/1	31-34	Իշխանը:Դարձվածք
1		Ինք/ընթ Ուսուցչի հայեցողությամբ
1		Խ/հ Բանավոր կամ գրավոր հաղորդակցություն
1		Թեմատիկ գրավոր աշխատանք հ.2
1		Գրավոր աշխատանք
4/1	31-35	Իշխանը:Դարձվածք
4/1	36-37	Սասունցի Դավիթը կռվում է դևերի դեմ
4/1	37-38	Սասունցի Դավիթը կռվում է դևերի դեմ
4/1	39-40	Սասունցի Դավիթը կռվում է դևերի դեմ
1		Ինք/ընթ Ուսուցչի հայեցողությամբ
1		Խ/հ Բանավոր կամ գրավոր հաղորդակցություն
1		Գրավոր աշխատանք
1		Գրավոր աշխատանք
4/1	36-42	Սասունցի Դավիթը կռվում է դևերի դեմ
1	43	Ամփոփիր իմացածդ: Ստուգիր ինքդ քեզ:

Թեմա	Նպատակ	Վերջնարդյունքներ
«Ա՛յ քեզ բան, ինչ կա-չկա, ինչ երևում-չի երևում՝ հա՛յ-րե՛-նի՛ք է»	. Ճիշտ, հասկանալով, արտահայտիչ ընթերցանություն՝ գրական արտասանության հիմնական կանոնների պահպանումով: Ստեղծագործության հիմնական գաղափարի ընկալման կարողության զարգացում: Ընթերցանությունը պլանավորելու, ապա վերլուծելու կարողության զարգացում .Ստեղծագործության հերոսին, հետաքրքիր հերոսին, բնության նկարագրում: Դեպքերի նկարագրության տրամաբանական հաջորդականության և մտքի ճշտության պահպանում: .Բառերի, բառակա պակցությունների և դարձվածքների գործառական կարո ղությունների զարգա ցում: Դարձվածային իմաստով գործածված բառակապակցությունների ճանաչում տեքստում: Առարկայի թիվ և թվային կարգ ցույց տվող բառերի գործածության և ճիշտ գրության կարողությունների զարգացում:	Հասկանալ կարդացած տեքստի բովանդակությունը: Հասկանալ տեքստում նկարագրված իրադարձությունների միջև առկա կապերը: Հասկանալ տեքստի բովանդակության, նկարագարդման և սեփական կենսափորձի միջև կապերը: .Արտահայտիչ արտասանել չափածո և արձակ գրական ստեղծագործություններից հատվածներ: Պատմել կամ վերապատմել տեքստը՝ պահպանելով դեպքերի տրամաբանական հաջորդականությունը և վերաբերմունք դրսևորելով նկարագրվող դեպքերի, հերոսների վարքագծի վերաբերյալ: Առաջադրված հարցերին պատասխանելու համար տեղեկություններ որոնել, գտնել: Օգտվել բառարաններից, մանկական հանրագիտարաններից, ուսումնական ձեռնարկներից:

Ժամ	էջ	Դաս
1	45	«Ա՛յ քեզ բան. Ինչ կա-չկա, ինչ երևում-չի երևում՝հա՛յ-րե՛-նի՛ք է» թեմայի մուտք:
2/1	46-47	Թորգոմ Նահապետի և Հայկ Նահապետի զրույցը:
1		Ինք/ընթ Ուսուցչի հայեցողությամբ
1		Խ/հ Բարեկիրթ հաղորդակցություն
1		Գրավոր աշխատանք
1		Գրավոր աշխատանք
2/1	46-47	Թորգոմ Նահապետի և Հայկ Նահապետի զրույցը:
2/1	48-49	Քիչ ենք, բայց հայ ենք:Գաղափար բառի ուղիղ և փոխաբերական իմաստի մասին

2/1	48-50	Քիչ ենք, բայց հայ ենք:Գաղափար բառի ուղիղ և փոխաբերական իմաստի մասին
2/1	51-53	Օջախի հիմքը:Գաղափար բառի ուղիղ և փոխաբերական իմաստի մասին
1		Ինք/ընթ Ուսուցչի հայեցողությամբ
1		Խ/հ Բարեկիրթ հաղորդակցություն
1		Թեմատիկ գրավոր աշխատանք հ.3
1		Գրավոր աշխատանք
2/1	51-53	Օջախի հիմքը: Գաղափար բառի ուղիղ և փոխաբերական իմաստի մասին
2/1	54-55	Մայրս: Բառի ուղիղ և փոխաբերական իմաստ
2/1	54-55	Մայրս: Բառի ուղիղ և փոխաբերական իմաստ
2/1	56-59	Չնվաճված աշխարհամաս:
1		Ինք/ընթ Ուսուցչի հայեցողությամբ
1		Խ/հ Բարեկիրթ հաղորդակցություն
1		Գրավոր աշխատանք
1		Գրավոր աշխատանք
2/1	56-59	Չնվաճված աշխարհամաս:
3/1	60-61	Հայրս: Բառի ուղիղ և փոխաբերական իմաստներ
3/1	60-61	Հայրս: Բառի ուղիղ և փոխաբերական իմաստներ
3/1	60-61	Հայրս: Բառի ուղիղ և փոխաբերական իմաստներ/ անգիր/
1		Ինք/ընթ Ուսուցչի հայեցողությամբ
1		Խ/հ Բարեկիրթ հաղորդակցություն
1		Գրավոր աշխատանք
1		Գրավոր աշխատանք
3/1	62-64	Ա՛յ թեզ բան. Ինչ կա-չկա, ինչ երևում-չի երևում՝հա՛յ-ռե՛նի՛ք է: Դարձվածք
3/1	62-64	Ա՛յ թեզ բան. Ինչ կա-չկա, ինչ երևում-չի երևում՝հա՛յ-ռե՛նի՛ք է: Դարձվածք

3/1	62-64	Ա՛յ քեզ բան. Ինչ կա-չկա, ինչ երևում-չի երևում՝հա՛յ-րե՛նի՛ք է: Դարձվածք
1	65-66	Հայոց լեզուն: Դարձվածք
1		Ինք/ընթ Ուսուցչի հայեցողությամբ
1		Խ/հ Տեքստը՝որպես խոսքային հաղորդակցական գործունեության արդյունք
1		Գրավոր աշխատանք
1		Թեմատիկ գրավոր աշխատանք հ.4
2/1	67-68	Հայոց ուսուցիչ: Դարձվածք
2/1	67-68	Հայոց ուսուցիչ: Դարձվածք
2/1	69-71	Կաղինը
2/1	69-71	Կաղինը
1		Ինք/ընթ Ուսուցչի հայեցողությամբ
1		Խ/հ Տեքստի իմաստային ազդանշանները
1		Գրավոր աշխատանք
1		Գրավոր աշխատանք
2/1	72-73	Եղեգնը, որը շատ էր ուզում դառնալ սրինգ
2/1	72-73	Եղեգնը, որը շատ էր ուզում դառնալ սրինգ
2/1	74-75	Գետը: Թվական
2/1	74-75	Գետը: Թվական
1		Ինք/ընթ Ուսուցչի հայեցողությամբ
1		Խ/հ Տեքստի տեսակները
1		Գրավոր աշխատանք
1		Գրավոր աշխատանք
2/1	76-77	Ախ, այս Մասիսը: Թվական
2/1	76-77	Ախ, այս Մասիսը: Թվական

2/1	78-79	Հայրենիք: Թվական
2/1	78-79	Հայրենիք: Թվական
1		Ինք/ընթ Ուսուցչի հայեցողությամբ
1		Խ/հ Տեքստի տեսակները
1		Գրավոր աշխատանք
1		Թեմատիկ գրավոր աշխատանք հ.5
2/1	80-81	Նոր տարվա գիշեր: Թվական
2/1	80-81	Նոր տարվա գիշեր: Թվական
2/1	82	Ամփոփի՛ր իմացածդ, ստուգի՛ր
2/1	82	Ամփոփի՛ր իմացածդ, ստուգի՛ր
1		Ինք/ընթ Ուսուցչի հայեցողությամբ
1		Խ/հ Պատմվածքների հորինում
1		Գրավոր աշխատանք
1		Գրավոր աշխատանք
1		«Ա՛յ քեզ բան. Ինչ կա-չկա, ինչ երևում-չի երևում՝ հա՛յ-ռե՛-նի՛քէ» թեմայի ամփոփում:
1		Ինք/ընթ Ուսուցչի հայեցողությամբ
1		Խ/հ Պատմվածքների հորինում
1		Կիսամյակային ամփոփիչ գրավոր աշխատանք հ.1
1		Գրավոր աշխատանք

Թեմա Թեմ. պլան-3	**Նպատակ**	**Վերջնարդյունքներ**
«Ես այսպես ասեմ, դուայնպես հասկացիր»	.Ճիշտ, հասկանալով, արտահայտիչ ընթերցանություն՝ գրական արտասանության հիմնական կանոնների պահպանումով: Կարդացածի հիմնական մտքի առանձնացում: . Տեքստի վրա ինքնուրույն աշխատելու և դատողություններ անելու կարողությունների զարգացում:	. Իմանալ թվականը, թվական + գոյական կառուցվածքով բառակապակցությունները, բառը, բառերի որոշակի քանակի բացատրությունը համատեքստում: . Հասկանալ կարդացած տեքստի բովանդակությունը: Վերաբերմունք դրսևորել գործող անձանց արարքների նկատմամբ:

	. Առարկայի թիվ և թվային կարգ ցույց տվող բառերի գործածություն և ճիշտ գրության կարողությունների զարգացում: Բառերի, բառակապակցությունների և դարձվածքների գործառական կարողությունների զազացում:	. Տարբերել և կիրառել թվական+գոյական բառակապակցու-թյունները: Սահուն, գրական շեշտի և առոգանության պահպանումով բարձրաձայն ընթերցել տեքստը: Անգիր արտասանել չափածո գրական ստեղծագործություններ: Բանավոր վերարտադրել տեքստի բովանդակությունը՝ վերաբերմունք դրսևորելով հերոսների վարքագծի նկատմամբ: . Փոքր խմբերի միջավայրում հարցեր ուղղել և պատասխանել տրված հարցերին, պարզ՝ 2 – 3-քայլանի հրահանգներ տալ : . Բեմադրությունների ժամանակ կատարել հերոսների դերերը՝ օգտագործելով շարժման ու խոսքի տարբեր ձևեր, բեմադրվող սցենարին համապատասխան ստեղծել բեմական կահավորանք: . Ըստ անհրաժեշտության կարդացած գրքի բովանդակությունը մտովի բաժանել իմաստային ամբողջական հատվածների, կազմել պլան: . Ձևավորել ընթերցասիրություն, գեղեցիկը, բարին, մարդկայինը տեսնելու, ընկալելու և գնահատելու կարողություն:

Ժամ	էջ	Դաս
1	83	«Ես այսպես ասեմ, դուայնպես հասկացիր» թեմայի մուտք
2/1	84-85	Արջն ու օձը
2/1	84-85	Արջն ու օձը
2/1	86-88	Վեճը: Թվական

1		Ինք/ընթ Ուսուցչի հայեցողությամբ
1		Խ/հ: Պատմության պլանի կազմում
1		Գրավոր աշխատանք
1		Գրավոր աշխատանք
2/1	86-88	Վեճը: Թվական
2/1	89-91	Ճպուռն ու մրջյունը: Թվական
2/1	89-91	Ճպուռն ու մրջյունը: Թվական
2/1	92-93	Առյուծն ու մուկը: Թվական
1		Ինք/ընթ Ուսուցչի հայեցողությամբ
1		Խ/հ: Պատմության պլանի կազմում
1		Գրավոր աշխատանք
1		Գրավոր աշխատանք
2/1	92-93	Առյուծն ու մուկը: Թվական
2/1	94-95	Տակառի լողը : Թվական
2/1	94-95	Տակառի լողը: Թվական
3/1	96-97	Այրի կինը և որդին: Թվական
1		Ինք/ընթ Ուսուցչի հայեցողությամբ
1		Խ/հ: Հայտարարություն
1		Գրավոր աշխատանք
1		ԹԵՄԱՏԻԿ ԳՐԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔ Հ.6
3/1	96-97	Այրի կինը և որդին: Թվական/վերարտադրել/
3/1	96-97	Այրի կինը և որդին: Թվական/վերարտադրել/
2/1	98-99	Առյուծն ու նապաստակը: Թվական
2/1	98-99	Առյուծն ու նապաստակը: Թվական/վերարտադրել/
1		Ինք/ընթ Ուսուցչի հայեցողությամբ
1		Խ/հ: Հայտարարություն
1		Գրավոր աշխատանք
1		Գրավոր աշխատանք
2/1	100-102	Շախմատ
2/1	100-102	Շախմատ
1		Ամփոփիր իմացածդ, ստուգիր ինքդ քեզ:
Թեմա	**Նպատակ**	**Վերջնարդյունքներ**
«Յոթ սարից, յոթ ձորից այն կողմ»	.Ստեղծագործության հիմնական գաղափարի ընկալման կարողության զարգացում:	. Բառերի որոշակի քանակի բացատրությունը համատեքստում: Թվական: Նախադասության

	Արտահայտիչ ընթերցանության կատարելագործման խթանում: Գեղարվեստակամ ստեղծագործությունների դերերով ընթերցում և բեմականացում: . Գործող անձանց հոգեվիճակները, զգացմունքներն ու մտքերը ձայնի ելևէջների փոփոխմամբ ճիշտ արտահայտելու և ապրումակցելու կարողության մշակում: . Իր կարծիքը, գաղափարները հաստատելու համար վկայությունների, փաստարկների օգտագործու՝ դրսևորելով խոսքի նկարագրական ոճը: .Հեղինակային հեքիաթների առանձնահատկությունները: Հեքիաթի ժանրային առանձնահատկությունների վերաբերյալ գիտելիքների և կարողությունների խորացում: . Առարկայի թիվ և թվային կարգ ցույց տվող բառեր: Ընդհանուր հասկացություն թվականների մասին: Բառակապակցություն և դարձվածք: Նախադասությնա տեսակներն ըստ հաղորդակցման նպատակի, դրանց կետադրությունը:	տեսակներն ըստ արտասանական երանգի: Արտասանական տարբեր երանգի նախադասությունների կետադրությունը, ձևավորման միջոցները: Հայերենի կետադրական նշանները. Վերջակետը, ստորակետը, հարցական նշանը, շեշտը: Բացականչական նշանը, միջակետը, չակերտները, անջատման գիծը: . Հասկանալ տեքստում նկարագրված իրադարձությունների միջև առկա կապերը: Վերաբերմունք դրսևորել գործող անձանց արարքների նկատմամբ, հասկանալ նրանց զգայական ապրումները: Հասկանալ տեքստում նկարագրված իրադարձությունների միջև առկա կապերը: Հասկանալ տեքստի բովանդակության, նկարագարդման և սեփական կենսափորձի միջև կապերը: . Պատմել կամ վերարտադրել հեքիաթներ՝ պահպանելով դեպքերի տրամաբանական հաջորդականությունը: . Գրել կարդացածի համառոտ բովանդակությունը, օգտվել բառարաններից: . Ձևավորել հարգանք դիմացինի արժանապատվության և ինքնության նկատմամբ, գեղեցիկը, բարին, մարդկայինը տեսնելու, ընկալելու և գնահատելու կարողություն:

Ժամ Թեմ.պլան-4	էջ	Դաս
1	103	«Յոթ սարից, յոթ ձորից այն կողմ» թեմայի մուտք:
1		Ինք/ընթ Ուսուցչի հայեցողությամբ

1		Խ/հ: Նամակ
1		Գրավոր աշխատանք
1		ԹԵՄԱՏԻԿ ԳՐԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔ Հ.7
2/1	104-105	Ամենաթանկը հավասարների մեջ։ Նախադասության տեսակներն ըստ հաղորդակցման նպատակի
2/1	104-105	Ամենաթանկը հավասարների մեջ Նախադասության տեսակներն ըստ հաղորդակցման նպատակի
2/1	106-108	Թող ուրիշն անի Նախադասության տեսակներն ըստ հաղորդակցման նպատակի
2/1	106-108	Թող ուրիշն անի Նախադասության տեսակներն ըստ հաղորդակցման նպատակի
1		Ինք/ընթ Ուսուցչի հայեցողությամբ
1		Խ/հ: Գովազդ
1		Գրավոր աշխատանք
1		Գրավոր աշխատանք
2/1	109-111	Երկու եղբայր Նախադասության տեսակներն ըստ հաղորդակցման նպատակի
2/1	109-111	Երկու եղբայր Նախադասության տեսակներն ըստ հաղորդակցման նպատակի
3/1	112-114	Գրքից փախած մկնիկը
3/1	112-114	Գրքից փախած մկնիկը
1		Ինք/ընթ Ուսուցչի հայեցողությամբ
1		Խ/հ: Գովազդ
1		Գրավոր աշխատանք
1		Գրավոր աշխատանք
3/1	112-114	Գրքից փախած մկնիկը
3/1	115-118	Բուրատինոն իմանում է ոսկե բանալու գաղտնիքը Պատմողական նախադասություններ
3/1	115-118	Բուրատինոն իմանում է ոսկե բանալու գաղտնիքը Պատմողական նախադասություններ
3/1	115-118	Բուրատինոն իմանում է ոսկե բանալու գաղտնիքը Պատմողական նախադասություններ
1		Ինք/ընթ Ուսուցչի հայեցողությամբ
1		Խ/հ: Բնագրի սեղմագիրը
1		Գրավոր աշխատանք
1		Գրավոր աշխատանք

2/1	119-122	Սև արկղի գաղտնիքը Հարցական նախադասություն
2/1	119-122	Սև արկղի գաղտնիքը Հարցական նախադասություն
3/1	123-125	Քաջ արտուտիկը
3/1	123-125	Քաջ արտուտիկը
1		Ինք/ընթ Ուսուցչի հայեցողությամբ
1		Խ/հ: Բնագրի սեղմագիրը
1		Գրավոր աշխատանք
1		Գրավոր աշխատանք
3/1	123-125	Քաջ արտուտիկը/անգիր/
2/1	126-128	Թագավորն ու խաբեբան Հրամայական նախադասություն
2/1	126-128	Թագավորն ու խաբեբան Հրամայական նախադասություն
4/1	129-131	ՔաջՆազարը Բացականչական նախադասություն /Ամաս ընթերցել/
1		Ինք/ընթ Ուսուցչի հայեցողությամբ
1		Խ/հ: Բնագրի սեղմագիրը
1		ԹԵՄԱՏԻԿ ԳՐԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔ Հ.8
1		Գրավոր աշխատանք
4/1	129-131	ՔաջՆազարը Բացականչական նախադասություն / IIմաս ընթերցել/
4/1	129-131	ՔաջՆազարը Բացականչական նախադասություն/վերարտադրել/
4/1	129-131	ՔաջՆազարը Բացականչական նախադասություն/վերարտադրել/

Նպատակ	• Մեկ և մեկից ավել մտքերից կազմված նախադասությունները գործնականում տարբերակելու կարողությունների ձևավորում (շաղկապով և առանց շաղկապի) • Տեքստը ճիշտ հնչերանգով կարդալու և այն ճիշտ կետադրությամբ գրելու կարողությունների զարգացում • Տեքստն իբրև թեմատիկ-իմաստային միասնություն ընկալելու կարողությունների ձևավորում • Տարաբնույթ խոսք կառուցելու կարողությունների ձևավորում • Տեքստի հիմնական միտքը որոշելու և դրա շուրջ դատողական խոսք

		կառուցելու կարողությունների զարգացում ● Տեքստի առաջին և վերջին նախադասությունները, հիմնական միտքը, հենակետային բառերը որոշելու կարողությունների ձևավորում
Վերջնարդյունքներ		● Տրված տեքստերի սկիզբը օգտագործելով՝ կազմել տարաբնույթ տեքստեր՝ պատմողական, նկարագրական, դատողական ● Անծանոթ տեքստի վերաբերյալ առաջադրված հենակետային բառերի և նախադասությունների միջոցով վերականգնել տեքստը, վերնագրել ● Տեքստից առանձնացնել կերպարներին բնութագրող հատվածները և կազմել հերոսների համեմատական բնութագիրը ● Կերպարներին արդարացնելու հիմնավորումները ներկայացնել դատողական խոսքով ● Կերպարների բնութագրման մեջ փորձել գտնել սխալ վարքագծի դրսևորումներ և հիմնավորել ● Բանավեճեր՝ մարդկանց վարքագծի, արարքների, բարեկրթության թեմաներով ● Որոշել տեքստի ընդգծված բառերի իմաստները և դրանք օգտագործել բառակապակցություններում կամ նախադասություններում՝ փոխաբերական իմաստով ● Տեքստում գտնել փոխաբերական իմաստով գործածված բառերը և ասել դրանց հոմանիշները ● Տրված բառերը ուղիղ և փոխաբերական իմաստներով գործածել նախադասություններում ● Որոշել նախադասությունների բնույթը, համառոտել և ընդարձակել
Ժամ	***Էջ***	***Դաս***
3/1	132-134	Ղազարոս Աղայան, «Անահիտ»
3/2	132-134	Ղազարոս Աղայան, «Անահիտ»:Նախադասության տեսակները՝ ըստ արտասանության երանգի
3/3	132-134	Ղազարոս Աղայան, «Անահիտ»:Նախադասության տեսակները՝ ըստ արտասանության երանգի
1	135-136	«Յոթ սարից, յոթ ձորից այն կողմ» թեմայի ամփոփում
1		Ինքնուրույն ընթերցանություն
1		Խ/հ. **Սեղմագիր**
1		Գրավոր աշխատանք
1		Գրավոր աշխատանք
1	137	«Այս զարմանահրաշ մոլորակը» թեմայի մուտք
3/1	138-139	Աղասի Այվազյան, «Խայծը»: Կոչական
3/2 3/3	138-139	Աղասի Այվազյան, «Խայծը»: Կոչական
1		Ինքնուրույն ընթերցանություն
1		Խ/հ. **Սեղմագիր**

1		Գրավոր աշխատանք
1		Գրավոր աշխատանք
	141	Երբ մտքերը սառչում են օդում: Թվական
	144	Երբ մտքերը սառչում են օդում: Թվական
	141-144	Երբ մտքերը սառչում են օդում: Թվական
	141-144	Երբ մտքերը սառչում են օդում: Թվական
1		Ինքնուրույն ընթերցանություն
1		Խ/հ. **Տեքստի իմաստային և կառուցվածքային հատկանիշները**
1		Գրավոր աշխատանք
1		Գրավոր աշխատանք
	147-149	Գուլիվերի Ճանապարհորդությունը
	147-149	Գուլիվերի Ճանապարհորդությունը
	147-149	**Գուլիվերի Ճանապարհորդությունը**
1		Ինքնուրույն ընթերցանություն
1		Խ/հ. **Տեքստի իմաստային և կառուցվածքային հատկանիշները**
1		Գրավոր աշխատանք
1		Գրավոր աշխատանք
3/1	152-153	Բարոն Մյունխհաուզենի ճանապարհորդությունը դեպի Լուսին
3/2	152-153	Բարոն Մյունխհաուզենի ճանապարհորդությունը դեպի Լուսին
3/3	152-153	Բարոն Մյունխհաուզենի ճանապարհորդությունը դեպի Լուսին
3/1	155-156	Էլեկտրոնիկի արկածները
1		Ինքնուրույն ընթերցանություն.
1		Խ/հ **Տեքստի իմաստային և կառուցվածքային հատկանիշները**
1		Գրավոր աշխատանք
1		Գրավոր աշխատանք
3/2	155-156	Էլեկտրոնիկի արկածները
3/3	155-156	Էլեկտրոնիկի արկածները
3/1	158-160	Ոտնահետքեր Լուսնի վրա
1		Ինքնուրույն ընթերցանություն
1		Խ/հ. **Տեքստի իմաստային և կառուցվածքային հատկանիշները**
1		Գրավոր աշխատանք
1		Գրավոր աշխատանք
3/2	158-160	Ոտնահետքեր Լուսնի վրա
3/3	158-160	Ոտնահետքեր Լուսնի վրա
3/1	162-164	Փոքրիկ Իշխանը
1		Ինքնուրույն ընթերցանություն
1		Խ/հ. **Տեքստի իմաստային և կառուցվածքային հատկանիշները**
1		Գրավոր աշխատանք
1		Գրավոր աշխատանք
3/2	162-164	Փոքրիկ Իշխանը

3/3	162-164	Փոքրիկ Իշխանը
3/1	165-167	Հանելուկային մոլորակը
1		Ինքնուրույն ընթերցանություն
1		Խ/հ. **Պատմվածքի հորինում**
1		Գրավոր աշխատանք
1		Գրավոր աշխատանք
3/2	165-167	Հանելուկային մոլորակը
3/3	165-167	Հանելուկային մոլորակը
1	169	«Այս զարմանահրաշ մոլորակը» թեմայի ամփոփում
1		Ինքնուրույն ընթերցանություն
1		Խ/հ. **Պատմվածքի հորինում**
1		Գրավոր աշխատանք
1		Գրավոր աշխատանք

Թեմատիկ պլանավորում

Դաս 1. 1/1 «Հայաստանի յոթ և բյուր հրաշալիքները» մուտքի զրույց

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Ի՞նչ է նշանակում հրաշալիք։
2. Ի՞նչ է նշանակում բյուր։
3. Դիտե՛ք թեմատիկ խմբի նկարը։ Ի՞նչ եք կարծում, նկարիչն ինչո՞ւ է օդապարիկ պատկերել նկարում։
4. Ըստ քեզ՝ Հայաստանն ի՞նչ հրաշալիքներ ունի, որոնք ուսումնասիրելու ենք այս թեմայի շրջանակներում (դիտել թեմատիկ խմբի նկարը, թեմայի դասանյութերին կից նկարագրությունները)։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Հրաշալիք նշանակում է հրաշքով լի (բառն արմատային վերլուծության կենթարկի)։
2. Բյուր նշանակում է տասը հազար, շատ։

3. Աշակերտը կասի իր կարծիքը. «Նկարիչն օդապարիկ է նկարել, քանի որ օդապարիկով շրջելիս կարող ենք վերևից տեսնել Հայաստանի մի շարք տեսարժան վայրեր»։
4. Եկեղեցիներ, հայոց այբուբենը, հայ գրողներ, նկարիչներ….

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Բառն արմատային վերլուծության ենթարկելով՝ առանձնացնել նշված բառի իմաստը։

Օրինակ՝ Ի՞նչ է նշանակում **հրաշալիք**։

ա. հետաքրքիր
բ. հրաշքներով լի
գ. սարսափելի

2. Հիշել և տրվածներից առանձնացնել բյուր բառի իմաստները։
Օրինակ՝ Տրվածներից ընտրի՛ր և ներկի՛ր բյուր բառի իմաստները։



3. Վստահ արտահայտել սեփական կարծիքը։
4. Նկարագրդումներից օգտվելով՝ առանձնացնել որոշակի արժեքներ, որոնք ուսումնասիրելու են թեմայի շրջանակներում։

Դաս 2. 1/1 Գրքի զրույցը քեզ ծանոթ և անծանոթ հրաշալիքների մասին

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Որո՞նք են հրաշալիք բառի հոմանիշները։
2. Ո՞վ է խոսում իրենց հետ։
3. Ինչու՞ է հայոց այբուբենը համարվում հրաշալիք։
4. Բացի տառային արժեքից, ուրիշ ի՞նչ արժեք է ունեցել այբուբենը։
5. Քանի՞ կարգի էր բաժանված այբուբենի թվային աղյուսակը։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Հրաշալիք բառի հոմանիշներն են՝ սքանչելի, հմայիչ, զարմանալի, արտսովոր։
2. Իրենց հետ խոսում է գրիրքը։
3. Դրանով մենք խոսում ենք միմյանց հետ, հասկանում միմյանց և ճանաչում աշխարհը։
4. Այն ունեցել է թվային արժեք։
5. Աղյուսակը բաժանված է չորս կարգի՝ միավորներ, տասնյակներ, հարյուրյակներ, հազարյակներ։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Ընտրել՝ որ շարքում են բոլորը հրաշալիք բառի հոմանիշներ.
ա. սքանչելի, հմայիչ, զարմանալի, արտասովոր
բ. հրաշալի, զվարճալի, զզվելի, չքնաղ
2.Ընտրել ճիշտ պատասխանը.
ա. Գիրքը
բ. Մեսրոպ Մաշտոցը
3. Կարդալ համապատասխան տողերը.
<<Հրաշք չէ, որ դու հիմա կարդում ես ինձ…>>
<< Դա նրանից է, որ քո մեջ ապրում է….>>։
4. Օգտվելով տառերի թվային արժեքներից՝ կատարել գործողությունները.
Ճ+Ժ = 100+10=110= ՃԺ Ռ+ Բ =
Թ-Ա = Ս+Բ =

Հայոց այբուբենի տառերի թվային արժեքները

Ա_1	Ժ_10	Ճ_100	Ռ_1000
Բ_2	Ի_20	Մ_200	Ս_2000
Գ_3	Լ_30	Յ_300	Վ_3000
Դ_4	Խ_40	Ն_400	Տ_4000
Ե_5	Ծ_50	Շ_500	Ր_5000
Զ_6	Կ_60	Ո_600	Ց_6000
Է_7	Հ_70	Չ_700	ՈՒ_7000
Ը_8	Ձ_80	Պ_800	Փ_8000
Թ_9	Ղ_90	Ջ_900	Ք_9000

5.Նշել ավելորդ կարգը.

ա. միավորների կարգ

բ. հազարյակների կարգ

գ. հարյուրյակների կարգ

դ. տասհազարավորների կարգ

ե. տասնավորների կարգ

Դաս 3. 3/1 Հովհաննես Թումանյանի արձանի մոտ

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Ո՞վ էր Հովհաննես Թումանյանը։
2. Ե՞րբ է ծնվել։
3. Որտե՞ղ է ծնվել և ապրել։
4. Ո՞ր ստեղծագործությունները արտասանեցին երեխաները։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Հովհաննես Թումանյանը հեքիաթագիր էր, բանաստեղծ։
2. Նա ծնվել է 1869թ.-ին։
3. Նրա ծննդավայրը Լոռու դսեղ գյուղն է։ Ապրել է Թիֆլիսում։
4. Երեխաներն արտասանեցին «Դպրոցի ճամփան», «Մարտը», «Սևուկ ուլիկը», «Ուրագը», «Գրիչը», «Աշուն», «Տերևաթափ», «Սուտասանը», «Սուտլիկ որսկանը», «Ամենից լավ տունը», «Չարի վերջը», «Շունն ու կատուն», «Կաքավիկը»։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Կարդալ համապատասխան տողերը։
2. Ընտրել ճիշտ պատասխանը.
   ա. 1969թ. բ. 1869
3. Կարդալ համապատասխան տողերը։
4. Նշել իրեն ծանոթ ստեղծագործությունների վերնագերը՝ առնվազն 4-ը։

Թեմատիկ պլանավորում

Դաս 4. 3/1 Հովհաննես Թումանյանի արձանի մոտ / վերարտադրել/

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Ո՞վ էր Հովհաննես Թումանյանը։
2. Ե՞րբ է ծնվել։
3. Որտե՞ղ է ծնվել և ապրել։
4. Ո՞ր ստեղծագործությունները արտասանեցին երեխաները։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Հովհաննես Թումանյանը հեքիաթագիր էր, բանաստեղծ։
2. Նա ծնվել է 1869թ.-ին։
3. Նրա ծննդավայրը Լոռու դսեղ գյուղն է։ Ապրել է Թիֆլիսում։
4. Երեխաներն արտասանեցին «Դպրոցի ճամփան», «Մարտը», «Սևուկ ուլիկը», «Ուրագը», «Գրիչը», «Աշուն», «Տերևաթափ», «Սուտասանը», «Սուտլիկ որսկանը», «Ամենից լավ տունը», «Չարի վերջը», «Շունն ու կատուն», «Կաքավիկը»։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Պատմել Թումանյանի մասին,նշել՝ ինչ տեսակ ստեղծագործություններ է գրել։
2.Հիշել, որ ծնվել է 1869 թ.-ին։
3. Ասել, որ ծննդավայրը Լոռվա Դսեղ գյուղն է։ Ապրել և ստեղծագործել է Թիֆլիսում։ Մահացել է 54 տարեկանում։
4. Խմբավորել ստեղծագորությունների տեսակները.

Բանաստեղծություն - Դպրոցի ճամփան, Մարտը, Գրիչը,Աշուն, Տերևաթափ, Ուրագը,Կաքավիկը, Ամենից լավ տունը

Հեքիաթ- Սևուկ ուլիկը, Սուտասանը, Սուտլիկ որսկանը, Չարի վերջը

Բալլադ - Շունն ու կատուն։

Թեմատիկ պլանավորում

Դաս 5. 3/1 Հովհաննես Թումանյանի արձանի մոտ

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1.Ի՞նչ խոսքի մասերի հանդիպեցիր տեքստում։
2. Ո՞րն էգոյականը։
3. Ո՞րն է բայը։
4.Ո՞րն է ածականը։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Տեքստում հանիպել է գոյականների, ածականների, բայերի։
2.Գոյականը առարկա ցույց տվող բառն է։
3. Բայը գործողություն ցույց տվող բառն է։
4.Ածականը հատկանիշ ցույց տվող բառն է։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Դուրս գրել 5-ական գոյական, բայ և ածական։
2. Ընտրել ճիշտ սահմանումը։
ա. Առարկա ցույց տվող բառն է։
բ. Գործողություն ցույց տվող բառն է։
գ. Հատկանիշ ցույց տվող բառն է։

3. Ընտրել ճիշտ սահմանումը։
ա. Առարկա ցույց տվող բառն է։
բ. Գործողություն ցույց տվող բառն է։
գ. Հատկանիշ ցույց տվող բառն է։

4. Ընտրել ճիշտ սահմանումը։
ա. Առարկա ցույց տվող բառն է։
բ. Գործողություն ցույց տվող բառն է։
գ. Հատկանիշ ցույց տվող բառն է։

Թեմատիկ պլանավորում

Դաս 6. 3/1 Արամ Խաչատրյանի հետ

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Ինչպե՞ս հաջողվեց «տեսնել» Արամ Խաչատրյանի կյանքը։
2. Ինչպե՞ս որոշվեց՝ ով մեկնի «ժամանակի մեքենայով»։ Հայկի ընկերների և ուսուցչի նշած արժանիքները կարևո՞ր էին դրա համար։
3. Ի՞նչ տեսավ Հայկն առաջինը։
4. Արամ Խաչատրյանի հուշերից մեկում ինչո՞ւ էր նա լալիս։
5. Քանի՞ տարեկանում է Արամը սկսում դաշնամուր նվագել։
6. Ո՞վ է եղել նրա երգի ուսուցիչը։
7. Հայկի տեսած և պատմած հետաքրքիր տեղեկություններից ո՞րը տպավորվեց, պատմի՛ր։
8. Ինչո՞ւ Հայկը վերադարձավ։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Երեխաներից մեկը «ժամանակի մեքենայով» հայտնվեց Արամ Խաչատրյանի մանկության տարիները և պատմեց, թե ի՛նչ էր տեսնում։
2. Որոշվեց, որ Հայկը մեկնի, քանի որ երեխաները նշեցին, որ Հայկը դասարանի ամենալավ երգիչն է, լավ է պատմում։ Իսկ ուսուցչուհին ավելացրեց, որ Հայկը հիանալի մարզիկ է և լավ է գլուխ հանում զանազան սարքերից։

   Այո՛, կարևոր արժանիքներ էին։

3. Հայկը տեսավ և պատմեց ընկերներին այն, թե ինչպես է Արամը, նստած տան աստիճաններին, մատներով կտկտացնում դույլին ու երգում։
4. Փոքրիկ Արամը լալիս էր, քանի որ նրա հայրիկը մի անգամ նրան մի ուլիկ էր նվիրել, իսկ Արամը խնամում և հոգ էր տանում ուլիկին։ Բայց մի օր ուլիկը հիվանդացավ, ոչինչ չէր ուտում, իսկ հաջորդ օրը սեղանին առատ միս կար։ Արամը հասկացել էր, որ դա իր սիրելի ուլիկն էր։
5. Արամը սկսում է դաշնամուր նվագել ինը տարեկանում։
6. Արամի երգի ուսուցիչը եղել է Ղազարոս Աղայանի որդին՝ Մուշեղ Աղայանը։
7. Սովորողը կպատմի իր համար տպավորիչը։

Օրինակ՝ Արամը ոչ թե աստիճաններով է իջնում, այլ սահում է բազրիքի վրայով։ Պատահաբար ընկնում է, վնասում գլուխը։ Լավ է՝ շատ խիտ մազեր ուներ, թե չէ գլուխը ջարդվելու էր։

8. Հայկը վերադարձավ, քանի որ «ժամանակի մեքենայով» հայտնվել էր Մոսկվայում, որտեղ գտնվում էր Արամը, ձմեռ էր ու շատ ցուրտ։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Լիարժեք նախադասությամբ պատասխանել հարցին։
2. Կարդալ համապատասխան տողերը։
3. Ընտրել ճիշտ պատասխանը.
   ա. Արամը, նստած տան աստիճաններին, մատներով կտկտացնում դույլին ու երգում։
   բ.Արամն օպերա էր լսում։
   գ. Արամը դաշնամուր էր նվագում։
4. Կարդալ համապատասխան տողերը։
5. Ընտրել ճիշտ պատասխանը՝ օգտվելով բնագրից.
   ա. 10 բ.16 գ. 9
6. Կարդալ համապատասխան տողերը։
7. Կապակցված խոսքով կներկայացնի իրեն դուր եկած պատմությունը։
8. Կարդալ համապատասխան տողերը։

Դաս 7. 3/1 Արամ Խաչատրյանի հետ

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Ե՞րբ Արամը սովորեց հիանալի նվագել դաշնամուր։
2. Ի՞նչ նոր ու կարևոր իրադարձություն տեղի ունեցավ Արամ Խաչատրյանի կյանքում։
3. Ի՞նչ աշխատանքներով է զբաղվել Արամը գումար վաստակելու համար։
4. Խաչատրյանի կարծիքով՝ ո՞րն է լավ երեժշտությունը։
5. Ինչպիսի՞ հայ էր Արամ Խաչատրյանը։ Հիմնավորեք՝ օգտվելով տեքստից։
6. Ինչո՞ւ է հեղինակը Արամ Խաչատրյանին համարում Հայաստանի հրաշալիքներից մեկը։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Արամը սովորեց հիանալի նվագել դաշնամուր, երբ նա Թիֆլիսից տեղափոխվեց Մոսկվա՝ եղբոր տուն։ Այնտեղ դաշնամուր կար, նա սովորեց հիանալի նվագել։
2. Արամ Խաչատրյանն ընդունվեց Մոսկվայի համալսարանի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետի կենսաբանության բաժինը։
3. Գումար վաստակելու համար նա սկսեց բեռնակրություն անել գինու գործարանում, այնուհետև սկսեց մասնավոր դասեր տալ, երգել երգչախմբում։
4. «Եթե երաժշտությունը տաղանդավոր է, գրված է սրտով, ապա անպայման ձեզ կհասնի, կոգևորի, կհասնի նույնիսկ այն մարդկանց, ովքեր գիտակ չեն երաժշտությանը»։
5. «Սիրում եմ իմ հայրենիքը, նրա բնությունը, գեղեցկությունը, զովասուն օդը, նրա բույրը։ Սիրում եմ իմ տաղանդավոր ժողովրդին, որին ծառայելը կյանքի նպատակ է և երջանկություն։ Զգում եմ նրա կարիքը, կարոտում եմ նրան։ Ես չեմ կարող ապրել, գոյություն ունենալ առանց իմ հայրենիքի»։
6. Արամ Խաչատրյանը աշխարհի մեծագույն երգահաններից է։ Նա գիտնական էր, մանկավարժ, ժողովրդական արտիստ, ակադեմիկոս, արվեստագիտության դոկտոր։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Լիարժեք նախադասությամբ պատասխանել հարցին։
2. Կարդալ համապատասխան տողերը։
3. Ընտրել ճիշտ պատասխանը.

   ա. Բեռնակրություն անել գինու գործարանում, այնուհետև սկսեց մասնավոր դասեր տալ, երգել երգչախմբում։

   բ.Աշխատել հացթուխ, այնուհետև սկսեց մասնավոր դասեր տալ, երգել երգչախմբում։
4. Կարդալ համապատասխան տողերը։
5. Կարդալ համապատասխան տողերը։
6. Բնագրից ընտրել և ընթերցել պատասխանը։

Թեմատիկ պլանավորում

Դաս 8. 3/1 Արամ Խաչատրյանի հետ /վերարտադրել/

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Ինչո՞ւ որոշվեց, որ Հայկը պետք է մեկնի «ժամանակի մեքենայով»։
2. Ո՞վ է Արամ Խաչատրյանը։
3. Ի՞նչ տեսավ Հայկը։ Պատմի՛ր Արամ Խաչատրյանի մանկությունից։
4. Պատմի՛ր նրա «երաժշտական կյանքի» մասին։
   - Քանի՞ տարեկանում սկսեց դաշնամուր նվագել։
   - Ե՞րբ սկսեց հիանալի նվագել դաշնամուր։
   - Որտե՞ղ է սովորել։
5. Ներկայացրո՛ւ նրա արտահայտած մտքերից մեկը(հայրենիքի և հայ ժողովրդի մասին, լավ երաժշտության, կրթության մասին)
6. Ինչո՞ւ է հեղինակը Արամ Խաչատրյանին համարում Հայաստանի հրաշալիքներից մեկը։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Որոշվեց, որ Հայկը մեկնի, քանի որ երեխաները նշեցին, որ Հայկը դասարանի ամենալավ երգիչն է, լավ է պատմում։ Իսկ ուսուցչուհին ավելացրեց, որ Հայկը հիանալի մարզիկ է և լավ է գլուխ հանում զանազան սարքերից։
2. Հայ մեծ երգահան է։
3. Արամ Խաչատրյանի մանկության դրվագներից։
4. Նա սկսել է դաշնամուր նվագել ինը տարեկանից։ Արամը սովորեց հիանալի նվագել դաշնամուր, երբ նա Թիֆլիսից տեղափոխվեց Մոսկվա՝ եղբոր տուն։ Այնտեղ դաշնամուր կար, նա սովորեց հիանալի նվագել։ Իսկ հետո սովորեց նաև երաժշտական տեխնիկումում և կոնսերվատորիայում։
5. Նա մեծ հայրենասեր էր, սիրում էր իր հայրենիքը, տաղանդավոր ժողովրդին։
6. Արամ Խաչատրյանը աշխարհի մեծագույն երգահաններից է։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Պատմել իր բառերով, պարզ նախադասություններով։
2. Պատմել իր բառերով, պարզ նախադասություններով։

3. Պատմել իր բառերով, պարզ նախադասություններով։
4. Պատմել իր բառերով, պարզ նախադասություններով՝ օգտվելով հարցերից։
5. Պատմել իր բառերով, պարզ նախադասություններով՝ օգտվելով բնագրից։
6. Եզրակացություն անել և ներկայացնել իր բառերով։

Դաս 9. 3/1 Սարյանի նկարներում շողշողում է Հայաստանի հավերժությունը:

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Որտե՞ղ է անցել Մ.Սարյանի մանկությունը:
2. Ինչպիսի՞ն էր նա մանուկ հասակում:
3. Ե՞րբ է սկսել նկարել:
4. Որտե՞ղ է նա ստացել նկարչական կրթություն:
5. Ե՞րբ է տեղափոխվել Երևան:
6. Որքա՞ն է ապրել:
7. Ինչպե՞ս է արտահայտվել նրա հայրենասիրությունը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Մ. Սարյանի մանկությունն անցել է Նոր Նախիջևանում՝ Ռուսաստանում:
2.Օգնել է հորն ու եղ-բայրներին, մասնակցել է իրենց տան կառուցմանը:
Նա 7 տարեկանից դպրոց է հաճախել, սովորել է գրել – կարդալ երկու լեզուներով՝ հայերեն և ռուսերեն: Սիրում էր նայել կապույտ երկնքին, ամպերին, գիշերը՝ աստղերին ու լուսնին:Սիրում էր կարդալ, հատկապես «Ռոբիզոն Կրուզոն»:
3.Ուսումնարանն ավարտելուց հետո նա ցրիչ է աշխատում և երբեմն նկարում էր հաճախորդներին:
4.Մեծ եղբայրը նրան տանում է Մոսկվա՝ նկարչություն սովորելու:Սարյանը դառնում է նշանավոր նկարիչ, ստա-նում է տարբեր կոչում-ներ: Նա ստեղծում է նկարելու իր ոճը՝ սարյա-նական ուղղությունը: Նրա նկարները ամբողջ աշխարհում տարբերվում են իրենց գույներով ու ոճով:
5. 1921 թվականից նա ընտանիքով տեղափոխվում է Երևան:
6. Նա ապրել է 92 տարի:
7. Մարտիրոս Սարյանի հայրենասիրությունն արտահայտվում է հատկապես Մեծ Եղեռնի ժամանակ, երբ նա, իր կյանքը վտանգի ենթարկելով, օգնում է Թուրքիայից փախած հայերին:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Բնագրից կարդալ համապատասխան տողերը։
2. Բնագրից կարդալ համապատասխան տողերը։
3.Բնագրից կարդալ համապատասխան տողերը։
4.Բնագրից կարդալ համապատասխան տողերը։
5. Ընտրել ճիշտ պատասխանը.

ա. 1928 թ. բ. 1921թ.

6. Բնագրից կարդալ համապատասխան տողերը։
7. Բնագրից կարդալ համապատասխան տողերը։

Դաս 10. 3/1 Սարյանի նկարներում շողշողում է Հայաստանի հավերժությունը:

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Ի՞նչ զգացողություններ առաջացրեց տեքստը ձեր մեջ:
2. Ընտրե՛ք ձեզ դուր եկած տողերը, ընթերցեք և հիմնավորեք ընտրությունը:
3. Ըստ թոռնուհու՝ ինչպիսի՞ն էր Սարյանը:
4. Ինչպե՞ս է թոռնուհին պապին համեմատում հայ ժողովրդի հետ:
5. Կազմել 5 բարդ բառ՝ մեկական անգամ օգտագործելով երկու տողերից ընտրված արմատները.

ներկ, ջուր, գիրք, ամիս, դեմք
գիր, գիծ, հոր, դարան, պնակ

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Լիարժեք նախադասությամբ պատասխանել հարցին:
2. Ընտրել համապատասխան հատվածը և հիմնավորել:
3. Նա կարծում էր, որ Սարյանը մանկական անմիջականություն ուներ և իմաստնություն ուներ, որ միացնում էր իրար ու ստեղծում իր հրաշալիքը:
4. Սարյանն իր ժողովրդի նման կենսունակ էր ու չհուսահատվող:
5. Ներկապնակ, ջրհոր, գրադարան, ամսագիր, դիմագիծ:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Սովորողն ազատ կներկայացնի իր տպավորությունները:
2.Սովորողը կընթերցի իրեն դուր եկած հատվածը, կհիմնավորի:
3.Բնագրից կարդալ համապատասխան տողերը:
4. Բնագրից կարդալ համապատասխան տողերը:
5. Կազմել բարդ բառեր՝ օգտվելով բնագրից:

Դաս 11. 3/1 Սարյանի նկարներում շողշողում է Հայաստանի հավերժությունը: /վերարտադրել/

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Որտե՞ղ է անցել Մ.Սարյանի մանկությունը:
2. Ինչպիսի՞ն էր նա մանուկ հասակում:
3. Ե՞րբ է սկսել նկարել:
4. Որտե՞ղ է նա ստացել նկարչական կրթություն:
5. Ե՞րբ է տեղափոխվել Երևան:
6. Որքա՞ն է ապրել:
7. Ինչպե՞ս է արտահայտվել նրա հայրենասիրությունը:
8. Գոյականներից ստանալ բայեր.

կառույց - …
աշխատանք - …
հունձ - …
ուտելիք - …

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Մ. Սարյանի մանկությունն անցել է Նոր Նախիջևանում՝ Ռուսաստանում:
2. Օգնել է հորն ու եղ-բայրներին, մասնակցել է իրենց տան կառուցմանը:
Նա 7 տարեկանից դպրոց է հաճախել, սովորել է գրել – կարդալ երկու լեզուներով՝ հայերեն և ռուսերեն: Սիրում էր նայել կապույտ երկնքին, ամպերին, գիշերը՝ աստղերին ու լուսնին:Սիրում էր կարդալ, հատկապես «Ռոբիզոն Կրուզոն»:
3.Ուսումնարանն ավարտելուց հետո նա ցրիչ է աշխատում և երբեմն նկարում էր հաճախորդներին:
4.Մեծ եղբայրը նրան տանում է Մոսկվա՝ նկարչություն սովորելու: Սարյանը դառնում է նշանավոր նկարիչ, ստա-նում է տարբեր կոչում-ներ: Նա ստեղծում է նկարելու իր ոճը՝ սարյա-նական ուղղությունը: Նրա նկարները ամբողջ աշխարհում տարբերվում են իրենց գույներով ու ոճով:
5. 1921 թվականից նա ընտանիքով տեղափոխվում է Երևան:
6. Նա ապրել է 92 տարի:

7. Մարտիրոս Սարյանի հայրենասիրությունն արտահայտվում է հատկապես Մեծ Եղեռնի ժամանակ, երբ նա, իր կյանքը վտանգի ենթարկելով, օգնում է Թուրքիայից փախած հայերին։
8. Բայ ստանալու համար արմատին ավելացնում են -ել, -ալ վերջավորությունները.
   կառույց - կառուցել
   աշխատանք - աշխատել
   հունձ - հնձել
   ուտելիք- ուտել

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Պատմել իր բառերով, պարզ նախադասություններով։
2. Պատմել իր բառերով, պարզ նախադասություններով։
3. Վերականգնել նախադասությունը.
   հաճախորդներին Ուսումնարանն հետո նա ավարտելուց աշխատում և ցրիչ է երբեմն նկարում էր։
4. Պատմել իր բառերով, պարզ նախադասություններով։
5. Պատմել իր բառերով, պարզ նախադասություններով։
6. Պատմել իր բառերով, պարզ նախադասություններով։
7. Պատմել իր բառերով, պարզ նախադասություններով։
8. Ավելացնել արմատին -ել կամ -ալ վերջավորությունը։

Դաս 12. 1/1 Թեմայի ամփոփում: Հարցնում է գիրքը

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Ի՞նչ հրաշալիքների հանդիպեցիր :
2. Լրացրու՛ աղյուսակը հետևյալ բառերով.

Հովհաննես Թումանյան, Արամ Խաչատրյան, Մարտիրոս Սարյան, խոսք, գույն, մեղեդի, երաժշտություն, նկարչություն, գրականություն:

			

3.Գտնել նախադասության իմաստին համապատասխան դարձվածը և գրել:

Որևէ բան խնամքով պահել: Իրեն ասեղների վրա զգալ

Իրեն շատ ազատ զգալ և անկաշկանդ: Աչքի նլույսի պես պահել

Անհանգստանալ, տագնապել ինչ-որ բանի համար: Ինչպես ձուկը ջրում

4. ա. Բառերի վանկերը գրված են աղյուսակում: Վերականգնել բառերը:

բ. Ու՞մ կվերագրես:

տա	րե	դա	սեր
հայ	ղան	նա	վոր

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Մարդն էլ է հրաշալիք: Հանդիպել է Ա. Խաչատրյանին, Հովհ. Թումանյանին, Մ. Սարյանին:
2. Որ բառը ու՞մ և ո՞ր բնագավառին է վերաբերում:

	Հովհաննես Թումանյան	խոսք	գրականություն
	Արամ Խաչատրյան	մեղեդի	երաժշտություն
	Մարտիրոս Սարյան	գույն	նկարչություն

3. Դարձվածի իմաստը:

Որևէ բան խնամքով պահել: Աչքի լույսի պես պահել

Իրեն շատ ազատ զգալ և անկաշկանդ: Ինչպես ձուկը ջրում

Անհանգստանալ, տագնապել ինչ-որ բանի համար: Իրեն ասեղների վրա զգալ

4. տաղանդավոր- Ա. Խաչատրյան, Մարտիրոս Սարյան, Հովհաննես Թումանյան

   հայրենասեր-Ա. Խաչատրյան, Մարտիրոս Սարյան, Հովհաննես Թումանյան

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Նշել՝ ի՞նչ է հրաշալիքը և ու՞մ հանդիպեց:
2. Լրացնել աղյուսակը՝ ըստ բնագավառների:
3. Գտնել դարձվածի իմաստն արտահայտող նախադասությունը:
4. Վանկերից կազմել բառեր և վերագրել հանդիպած հրաշալիքներին:

Դաս 13. 1/1 Անակնկալը

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Ո՞րն էր անակնկալը: Ո՞վ էր ճամփորդության կազմակերպիչը: Ո՞րն էր նրա նպատակը:
2. Ինչպիսի՞ն էր երեխաների տրամադրությունը:
3.Ինչու՞ էին անհանգիստ ծնողները, տատիկ – պապիկները:
4. Ի՞նչ տեսան երեխաները Երևանում:
5. Երևանից դեպի ու՞ր շարժվեցին օդապարիկները:
6. Ուրիշ ի՞նչ հրաշալիքներ տեսան երեխաները վերևից:
7. Որտե՞ղ վայրէջք կատարեցին օդապարիկները: Ինչու՞:
8. Ի՞նչ եք կարծում, ինչու՞ էին կրակի նման փայլում երեխաների աչքերը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Ուսուցչուհին կազմակերպել էր,որ երեխաները օդապարիկով ճանապարհորդեին՝ Հայաստանի մյուս հրաշալիքներին ծանոթանալու համար:
2. Երեխաները շատ ուրախ էին և հիացած:
3. Նրանք վախեցան կամ շփոթվեցին:
4. Երեխաները Երևանում տեսան Հանրապետության հրապարակը, երգող շատրվանները, Վարդան Մամիկոնյանի, Հայկ Նահապետի արձանները:
5. Նրանք շարժվեցին դեպի Խոր վիրապ:
6. Տեսան Սարդարապատի հերոսամարտին նվիրված համալիրը:
7. Նրանք վայրէջք կատարեցին Դվին գյուղում՝ Արամի դարբին պապի հետ հանդիպելու և Խոր վիրապ այցելելու համար:
8. Նրանք ուրախ էին, հիացած և ոգևորված բացահայտումներով:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Օգտվելով բնագրից՝ եզրակացություն անել և վերարտադրել միտքը. «Ուսուցչուհին կազմակերպել էր,որ երեխաները օդապարիկով ճանապարհորդեին՝ Հայաստանի մյուս հրաշալիքներին ծանոթանալու համար»:
2. Օգտվելով բնագրից՝ եզրակացություն անել և վերարտադրել միտքը. «Երեխաները շատ ուրախ էին և հիացած»:
3. Օգտվելով բնագրից՝ եզրակացություն անել և վերարտադրել միտքը: «Նրանք վախեցան կամ շփոթվեցին»:
4. Օգտվելով բնագրից՝ եզրակացություն անել և վերարտադրել միտքը: «Երեխաները Երևանում տեսան Հանրապետության հրապարակը, երգող շատրվանները, Վարդան Մամիկոնյանի, Հայկ Նահապետի արձանները»:
5. Օգտվելով բնագրից՝ եզրակացություն անել և վերարտադրել միտքը: «Նրանք շարժվեցին դեպի Խոր վիրապ»:
6. Օգտվելով բնագրից՝ եզրակացություն անել և վերարտադրել միտքը: «Տեսան Սարդարապատի հերոսամարտին նվիրված համալիրը»:
7. Օգտվելով բնագրից՝ եզրակացություն անել և վերարտադրել միտքը: «Նրանք վայրէջք կատարեցին Դվին գյուղում ՝ Արամի դարբին պապի հետ հանդիպելու և Խոր վիրապ այցելելու համար»:
8. Օգտվելով բնագրից՝ եզրակացություն անել և վերարտադրել միտքը:

Թեմատիկ պլանավորում

Դաս 14. 2/1 Մասիսից դեպի Ագռավաքար: Դարձվածք

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Ի՞նչ էր պատրաստում Արամի դարբին պապը:
2. Ի՞նչն էր զարմացրել երեխաներին:
3. Ի՞նչ էր զգում Արամը:
4. Ի՞նչ է պատմում առասպելը Արտավազդ թագավորի մասին:
5. Ի՞նչ է առասպելը:
6. Ի՞նչ գիտեին երեխաները Արարատ սարի մասին:
7. Ի՞նչ չգիտեին Փոքր Մասիսի մասին:
8. Ինչու՞ երեխաներն առաջարկեցին գնալ և ազատել Արտավազդին:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Արամի դարբին պապը զարմանալի ու հիանալի իրեր է պատրաստում շիկացած երկաթից:
2. Երեխաները զարմանքով նայում էին, թե շիկացած երկաթն ինչպես է թշշալով մտնում ջրի մեջ ու դառնում մի գեղցիկ իր:
3. Արամը հպարտությամբ էր նայում դարբին պապի հզոր մկաններին, հատու շարժումներին:
4. Ըստ առասպելի՝ Արտավազդը շղթայված է Մասիս լեռան քարանձավում:Հավատարիմ շները կրծում են շղթաները, որ ազատեն նրան, դարբինները խփում են սալին, ու այդ ձայնից շղթաները նորից ամրանում են:
5. Առասպելը հին ժողովրդական զրույց է աստվածների ու դիցաբանական հերոսների և աշխարհի ու կյանքի ծագման մասին:
6. Նրանք գիտեին,որ Արարատն աշխարհի ամենաբարձր սարն է՝ հաշված ստորոտից:
7. Նրանք չգիտեին, որ Փոքր Մասիսը մի քանի միլիոն տարով փոքր է Մեծ Մասիսից, որ Արարատից ոչ մի գետ սկիզբ չի առնում, Մասիսը 3 կմ-ով բարձր է Սևանից:
8. Նրանք իմացան, որ Ագռավաքարն էլ է գերության մեջ՝ Վանում, ուր փակվել է Փոքր Միհրը, ով մի օր դուրս է գալու ազատելու հայոց աշխարհը չար ուժերից: Ուզեցին Արտավազդին ազատեն, որ աշխարհին տիրի, հողերն էլ գերությունից հանի:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Ընտրի և բնագրից կարդա համապատասխան տողերը։
2. Ընտրի և բնագրից կարդա համապատասխան տողերը։
3. Ընտրի և բնագրից կարդա համապատասխան տողերը։
4. Ընտրի և բնագրից կարդա համապատասխան տողերը։
5. Ընտրել ճիշտ սահմանումը.

ա. Առասպելը հին ժողովրդական զրույց է աստվածների ու դիցաբանական հերոսների և աշխարհի ու կյանքի ծագման մասին։

բ. Առասպելը պատմություն է, որի հերոսները կենդանիներն ու բույսերն են, իսկ վերջում ունի գլխավոր իմաստն արտահայտող նախադասություն։

6. Ընտրի և բնագրից կարդա համապատասխան տողերը։
7. Ընտրի և բնագրից կարդա համապատասխան տողերը։
8. Ընտրի և բնագրից կարդա համապատասխան տողերը։

Դաս 15. 2/1 Մասիսից դեպի Ագռավաքար: Դարձվածք

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Ի՞նչ են նշանակում հետևյալ հատուկ անունները.

Արտավազդ

Մասիս

Արարատ

Արագած

Նոյ

Փոքր Մասիս

Մեծ Մասիս

Սևան

Ագռավաքար

Փոքր Մհեր

Քուռկիկ Ջալալի

Վան

«Մհերի դուռ»

2.Նախադասությունից քայլ առ քայլ հանելով մեկական բառ՝ ստանալ համառոտ նախադասություն:

Հանկարծ հրապարակի վրա հայտնվեցին գույնզգույն օդապարիկներ՝ կարմիր, կապույտ, նարնջագույն զամբյուղներով:

3. Կազմել բարդ բառեր:

7 տարի - յոթնամյա

3 անկյուն -

2 սապատ –

5 նիշ –

4. Վերականգնել «քանդված» առածները:

Շատ կարդաս, քիչն էլ կկորցնի:

Լավ անես՝ քեզ կանես, սովորիր քեզ համար:

Աղքատը հացի կարոտ է, վատ անես՝ քեզ կանես:

Արա ուրիշի համար, հարուստը՝ ամեն բանի:

Շատի հետևից ընկնողը շատ բան կիմանա:

5. Խմբավորել դարձվածներն ըստ իմաստի.

ա) չափազանց զբաղված լինել

բ) ոչինչ չանել

գ) խաբել

թևերը ծալած նստել, քիթ սրբելու ժամանակ չունենալ, քթից բռած ման ածել, գլուխը յուղել, աչքերը կապել, պարապ-սարապ լինել, գործից աչք չթարթել, ճանճ բռնել, մինչև կոկորդը թաղված լինել գործի մեջ:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Հատուկ անունների բացատրությունը՝ օգտվելով բնագրից:

Արտավազդ	հայ թագավոր՝ շղթայված Մասիս լեռան քարանձավում
Մասիս	սար Թուրքիայի տարածքում, Արարատ
Արարատ	Արայի լեռ
Արագած	Արայի գահ

Նոյ	Նահապետ, որ տապանով փրկեց մարդկությանը
Փոքր Մասիս	Սիս, Արարատ լեռան փոքր սարը
Մեծ Մասիս	Արարատ լեռան բարձր սարը
Սևան	լիճ Հայաստանում
Ագռավաքար	Արագածի լեռնագագաթներից
Փոքր Միհր	հայկական էպոսի հերոս, Սասունցի Դավթի տղան
Քուռկիկ Ջալալի	Սասունցի Դավթի ձին
Վան	քաղաք Արևմտյան Հայաստանում
«Միհրի դուռ»	սրբազան քարաժայռ

2. 1) Հրապարակի վրա հայտնվեցին գույնզգույն օդապարիկներ՝ կարմիր, կապույտ, նարնջագույն զամբյուղներով:
2) Հայտնվեցին գույնզգույն օդապարիկներ՝ կարմիր, կապույտ, նարնջագույն զամբյուղներով:
3) Հայտնվեցին օդապարիկներ՝ կարմիր, կապույտ, նարնջագույն զամբյուղներով:
4) Հայտնվեցին օդապարիկներ՝ կապույտ, նարնջագույն զամբյուղներով:
5) Հայտնվեցին օդապարիկներ՝ նարնջագույն զամբյուղներով:
6) Հայտնվեցին օդապարիկներ՝ զամբյուղներով:
7) Հայտնվեցին օդապարիկներ:
3. Կազմել բարդ բառեր:

7 տարի - յոթնամյա	3 անկյուն -եռանկյուն
2 սապատ – երկսապատ	5 նիշ –հնգանիշ

4.Վերականգնել «քանդված» առածները:

Շատ կարդաս, շատ բան կիմանա:

Լավ անես՝ քեզ կանես, վատ անես՝ քեզ կանես:

Աղքատը հացի կարոտ է, հարուստ ամեն բանի:

Արա ուրիշի համար, սովորիր քեզ համար:

Շատի հետևից ընկնողը քիչն էլ կկորցնի:

5. Խմբավորել դարձվածներն ըստ իմաստի.

ա) չափազանց զբաղված լինել- քիթ սրբելու ժամանակ չունենալ,գործից աչք չթարթել,մինչև կոկորդը թաղված լինել գործի մեջ

բ) ոչինչ չանել- թևերը ծալած նստել,պարապ-սարապ լինել, ճանճ բռնել

գ) խաբել - քթից բռած ման ածել, գլուխը յուղել, աչքերը կապել:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Ըստ բնագրի բացատրել հատուկ անվան իմաստը:

2.Հանել այնպիսի բառեր, որ նախադասության իմաստը պահպանվի,մինչև գլխավոր անդամներ՝ ենթակա և ստորոգյալ:

3. Կազմել բարդ բառեր:

7 տարի - յոթնամյա 3 անկյուն -եռանկյուն

2 սապատ – երկսապատ 5 նիշ –հինգանիշ

4. Վերականգնել «քանդված» առածները՝ օգտվլով գույներից:

5. Խմբավորել դարձվածներն ըստ իմաստի.

ա) չափազանց զբաղված լինել- քիթ սրբելու ժամանակ չունենալ, գործից աչք չթարթել,մինչև կոկորդը թաղված լինել գործի մեջ

բ) ոչինչ չանել- թևերը ծալած նստել,պարապ-սարապ լինել, ճանճ բռնել

գ) խաբել - քթից բռած ման ածել, գլուխը յուղել, աչքերը կապել:

Դաս 16. 2/1 - Ճամփորդությունը շարունակվում է

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Ճանապարհորդությունը շարունակելիս Հայաստանի ո՞ր հրաշալիքները նրանք տեսան։
2. Ըստ ավանդության՝ ո՞վ է կառուցել Գառնիի ամրոցը։
3. Գառնիի ամրոցը պեղելիս ի՞նչ է հայտնաբերվել։
4. Ինչի՞ շնորհիվ է, որ մինչ օրս կանգուն է Գառնիի տաճարը։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Սևանա լիճը, Գառնիի տաճարը, Գեղարդը։
2. Ըստ ավանդության՝ Գառնիի ամրոցը կառուցել է Հայկ Նահապետի ծոռ գեղամը։ Նրա Գառնիկ թոռան անունով էլ ամրոցը կոչվել է Գառնի։
3. Գառնիի ամրոցը պեղելիս հայտնաբերվել է բնակավայր։ Այնտեղ կային տարբեր կենցաղային գործիքներ, զենքեր, գյուղատնտեսական գործիքներ։
4. Մինչև օրս կանգուն է Գառնիի տաճարը, քանի որ թե՛ բերդը, թե՛ տաճարը թեկուզև բազմաթիվ թշնամիներ ավերել են, մենք բազմիցս վերականգնել ենք դրանք։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Բնագրից ընտրել և նշել հրաշալիքների անվանումները։
2. Բնագրից ընտրել և ընթերցել համապատասխան տողերը։
3. Բնագրից ընտրել և ընթերցել համապատասխան տողերը։
4. Բնագրից ընտրել և ընթերցել համապատասխան տողերը։

Դաս 17. Ճամփորդությունը շարունակվում է

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Պատմի՛ր, թե ինչպե՛ս շարունակվեց ճամփորդությունը։
2. Պատմի՛ր, թե ինչ իմացար Գառնիի տաճարի մասին։
3. Նշի՛ր, թե ինչո՛ւ ենք հպարտանում մեր նախնիներով։
4. Բնագրից ընտրված բառերից ընտրի՛ր և զույգ առ զույգ գրի՛ր հետևյալ բառերի հականիշները։
   անազատ, կառուցել, նստել, փակվել, փոքր, նախորդ
   հսկայական, ավերել, ազատ, հաջորդ, բացվել, կանգնել
5. Վերականգնի՛ր քանդված առածները.
   - Շատ կարդաս, քիչն էլ կկորցնի։
   - Լավ անես՝ քեզ կանես, սովորիր քե՛զ համար։
   - Աղքատը հացի կարոտ է, վատ անես՝ քեզ կանես։
   - Արա ուրիշի՛ համար, հարուստը՝ ամեն բանի։
   - Շատի հետևից ընկնողը շատ բան կիմանաս։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Օդաչուները, ուսուցիչները, երեխաները հրաժեշտ տվին պապին, Մասիսին, Խոր վիրապին, Արարատյան դաշտին, արագիլներին ու նստեցին օդապարիկները, ուղևորվեցին հաջորդ հրաշալիք՝ Սևանա լիճը։
2. Գառնիի տաճարը կառուցվել է մեզանից մոտ 2300 տարի առաջ։ Այն կառուցել է Հայկ Նահապետի ծոռ Գեղամը, ում թոռի անունով էլ ամրոցը հետագայում կոչվել է Գառնի։ Գառնիի ամրոցը պեղելիս հայտնաբերվել է բնակավայր։ Այնտեղ կային տարբեր կենցաղային գործիքներ, զենքեր, գյուղատնտեսական գործիքներ։ Մինչև օրս կանգուն է Գառնիի տաճարը, քանի որ թե՛ բերդը, թե՛ տաճարը թեկուզև բազմաթիվ թշնամիներ ավերել են, մենք բազմիցս վերականգնել ենք դրանք։
3. Մենք հպարտանում ենք մեր նախնիներով, քանի որ նրանք կառուցել են տարբեր ամրոցներ, քաղաքներ, որոնք շատ ամուր են եղել։

4. Հակառակ իմաստ ունեցող բառերին անվանում ենք հականիշ բառեր։

անազատ - ազատ, կառուցել-ավերել, նստել-կանգնել, փակվել- բացվել, փոքր - հսկայական, նախորդ - հաջորդ

5. Վերականգնի՛ր քանդված առածները.

- Շատ կարդաս, շատ բան կիմանաս։
- Լավ անես՝ քեզ կանես, վատ անես՝ քեզ կանես։
- Արա ուրիշի՛ համար, սովորիր քե՛զ համար։
- Աղքատը հացի կարոտ է, հարուստը՝ ամեն բանի։
- Շատի հետևից ընկնողը քիչն էլ կկորցնի։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Պարզ նախադասություններով և բնագրից օգտվելով՝ պատմել։
2. Պարզ նախադասություններով և բնագրից օգտվելով՝ պատմել։
3. Եզրակացություն անել, արտահայտել միտքը։
4. Հականիշ զույգերն ընտրել և գրել։
5. Վերականգնել քանդված առածները։

Դաս 18. 3/1 Իշխանը

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Ինչպե՞ս էր կյանքն ընթանում լճում մինչև պայթյունը։
2.Ինչպե՞ս է հեղինակը ներկայացրել Իշխանին։ Ներկայացրե՛ք հեղինակի բառերով։
3. Ինչպե՞ս եք հասկանում ***«հաշտ ու համերաշխ էր ջրի ու արևի հետ»*** նախադասությունը։
4. Ի՞նչ եք կարծում, Իշխանը լա՞վ ղեկավար էր։ Պատասխանը հիմնավորե՛ք տեքստի հատվածներով։
5.Ինչպիսի՞ տանտեր էր Իշխանը։ Ինչպե՞ս էր հյուրեր ընդունում։ Պատասխանը հիմնավորե՛ք տեքստի հատվածներով։
6. Ի՞նչ նկատի ունի Իշխանը՝ ասելով. ***«Բոլորս էլ մեր ձագուկներին պահպանելու միջոց ենք գտնում, զարմանալի չէ»։*** Իշխանի խոսքերը հիմնավորե՛ք օրինակներով։
7. Ի՞նչ նոր բառեր սովորեցիք տեքստից։
8. Ինչու՞ են ձկների և թռչունների անունները գրված մեծատառով։
9. Բնագրից դու՛րս գրել Սևանա լիճը թափվող գետերի անունները։ Որոշել բարդ բառերը և բաժանիր բաղադրիչների։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1.Մինչ պայթունը ամեն ինչ խաղաղ էր և բոլորը համերաշխ էին ։
2.Նա շատ գեղեցիկ էր ու ճարպիկ,լավ որսորդ էր և շատ հյուրընկալ։
3. Նա չէր բողոքում բնության ոչ մի երևույթից՝ շոգից, ցրտից և այլն։
4. Լավ ղեկավար էր։
Հաճախ իր մոտ էր կանչում Կարմրախայտ արքայազնին ու հանձնարարում
- Մեր տերության մեջ 28 գետ ու գետակ է թափվում։ Գնա՛ և ստուգի՛ր Ձկնագետն ու Գավառագետը։….
  Այդպես բոլորին հանձնարարություններ էր տալիս, տիրություն էր անում իր թագավորությանը։
5.Նա հյուրասեր, բարի, հոգատար տանտեր էր։

Գիլլի անունով հատուկ լճակ էր առանձնացրել, որտեղ բազմաթիվ հյուրեր էր ընդունում աշխարհի տարբեր ծայրերից։

- Նա հյուր է մի՛ նեղացրու,- հորդորում է Իշխանը։-Տե՛ս,մեր տերության մեջ կողք կողքի հանգստանում են ձկնկուլն ու ջրարծիվը….

6. Նա համակերպվում էր բնության օրենքների հետ։

7. Համբավ- հռչակ, ճանաչում

հորդորել- խորհուրդ տալ, համոզել

մամուռ- արմատներից զուրկ բույս

Կողակ, տառեխ, ջրածիծառ, հավալուսն, ջրշուն, կարմրախայտ

8. Նրանք որպես հերոսներ են ներկայացել։

9. Ձկնագետ-ձուկն+գետ

Գավառագետ-գավառ+ա+գետ

Վարդենիս-

Կարճաղբյուր- կարճ+ աղբյուր

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Բնագրից կարդալ համապատասխան տողերը կամ արտահայտությունները։
2.Կարդալ բնագրից համապատասխան նախադասությունները։
3.Կարդալ բնագրից համապատասխան նախադասությունները։
4. Կարդալ բնագրից համապատասխան նախադասությունները։
5.Կարդալ բնագրից համապատասխան նախադասությունները։
6.Կարդալ բնագրից համապատասխան նախադասությունները կամ արտահայտությունները և հետևություն անել, բացատրել իր բառապաշարով։
7. Ընտրել բառերի բացատրությունները, նշել նոր սովորած ձկների, կենդանիների անունները։

Համբավ-	խորհուրդ տալ, համոզել
հորդորել-	արմատներից զուրկ բույս
մամուռ-	հռչակ, ճանաչում

8. Մեկնաբանել, որ կենդանիների անունները գրվում են մեծատառով, իսկ տեսակները ՝ ոչ։ Այստեղ դրանք իրենց անուններն են ՝ որպես հերոսներ։
9.Բնագրից դու՛րս գրել Սևանա լիճը թափվող գետերի անունները։ Որոշել բարդ բառերը և բաժանել բաղադրիչների։

Ձկնագետ-ձուկն+գետ-բարդ

Գավառագետ-գավառ+ա+գետ-բարդ

Վարդենիս-

Կարճաղբյուր- կարճ+ աղբյուր-բարդ

Թեմատիկ պլանավորում

Դաս 19. 3/1 Իշխանը

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Ինչպե՞ս փոխվեց կյանքը լճում: Ինչու՞ մեկուսացավ Իշխանը:
2.Լիճը փրկելու համար ի՞նչ քայլեր ձեռնարկեցին մարդիկ:
3.Մարդկանց ծրագիրն աշխատե՞ց:
4. Ո՞ր բառով կարելի է փոխարինել *փախչել* բառը «Պայթեցրեց, ու ջուրը սկսեց ***փախչել***, թագավորությունն սկսեց ցամաքել» նախադասության մեջ:
5.Ի՞նչ նկատի ունի հեղինակը՝ ասելով. ***«Մի Ագռավաքար էլ սա է»:***
6. Ի՞նչ եք կարծում, Իշխանը նորից կվերադառնա՞ իր երկիր:
7. Խմբավորել հետևյալ բառերը և լրացնել աղյուսակը:

թագավորություն, ջրանցք, լճակ, անհանգիստ, կարմրակատար, ձուկ, ձագուկ, լիճ, հսկայական, տխրություն, դժբախտ

պարզ	*բարդ*	*ածանցավոր*

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1.Պայթյունից հետո ջուրը սկսեց փախչել, էագավորությունը սկսեց ցամաքել։Գլլի լիճն էլ ցամաքեց։Իշխանը տեսավ, որ իր սպիտակ ապարանքները մնացին ջրից դուրս։Լճում հայտնվեց Սիգը և ….
Իշխանը տեսավ, որ իր բոլոր զավակների համար ապրելու տեղ չկար, սնվելու տեղեր չկային, ու նրանք կամաց-կամաց անհետացան։Լիճն իջավ 18 մետր։
Իշխանը փակվեց իր քարե ապարանքներից մեկում ու ասաց.
-Մինչև ջուրը չբարձրանա և չծածկի ինձ, ես դուրս չեմ գա։
2.Սևանը գրկող լեռների տակով փորեցին 48կմ երկարությամբ մի հրաշք ջրանցք, որով Արփա գետի ջրերը հոսում են դեպի Սևանա լիճը։
3. Լճի ջուրն սկսեց բարձրանալ։ Այն ամենաշատը կարող է բարձրանալ 6մ։ Միգուցե դա էլ բավական է , որ Իշխանը վերադառնա։
4.«Պայթեցրեց, ու ջուրը սկսեց ***հոսել***, թագավորությունն սկսեց ցամաքել»:
5. Նկատի ունի Փոքր Մհերի Ագռավաքարը, որտեղ Մհերը փակվել էր անարդարությունների, չարության պատճառով։Նույնն էլ Իշխնն էր անում։

6.Լիահույս ենք, որ երբ ջրի մակարդակը բարձրանա, կվերադառնա։

7. Խմբավորել հետևյալ բառերը և լրացնել աղյուսակը։

պարզ	*բարդ*	*ածանցավոր*
ձուկ, լիճ	*թագավորություն, կարմրակատար ջրանցք,*	*լճակ, անհանգիստ, ձագուկ, , հսկայական, տխրություն, դժբախտ*

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Կարդալ բնագրից համապատասխան նախադասությունները։
2. Կարդալ բնագրից համապատասխան նախադասությունները։
3. Կարդալ բնագրից համապատասխան նախադասությունները։
4. Գտնել մոտ բառը փոխաբերական մաստով՝ *հոսել*։
5. Հիշել Ագռավաքարի և Փոքր Մհերի առասպելը և զուգահեռ տանել։
6. Արտահայտի իր կարծիքը։
7.Լրացնել աղյուսակը։

Դաս 20. 3/1 Իշխանը

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Պատմել Իշխանի, Ջրշան, Սիգի անունից։
2. Որտե՞ղ իջան երեխաները
3. Ի՞նչ էին զգում երեխաները։
4. Եթե դու ճամփորդողը լինեիր, ինչը կպատմեիր ծողներիդ։
5. Համապատասխանեցնել դարձվածքը և բացատրությունը։

Դարձվածքներ	*Իմաստներ*
Ինչպես ձուկը ջրում	Շրջապատողներին շփոթեցնել, խորամանկել, շահադիտական նպատակով իրար խառնել իրադարձությունները։
Շատ ջրեր են հոսել	Իր միջավայրում է, իր ոլորտում, ազատ է զգում իրեն, լավ, անկաշկանդ։
Ջուր պղտորել	Օգտվելով ուրիշների դժվարությունից, շփոթմունքից, խառը վիճակից՝ շահ քաղել։
Պղտոր ջրում ձուկ որսալ	Շատ ժամանակ է անցել։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Պատմելիս կօգտագործի 1-ին դեմքը և կարտահայտի իր կարծիքը։
2. Երեխաներն իջան Սասունցի Դավթի արձանի մոտ, որտեղ իրենց սպասում էին ծնողներն ու պապիկ- տատիկները։
3. Նրանք ոգևորված էին։
4. Կպատմի իրեն շատ հուզած կամ դուր եկած հատվածը։

5. Համապատասխանեցնել դարձվածքը և բացատրությունը:

Դարձվածքներ	*Իմաստներ*
Ինչպես ձուկը ջրում	Իր միջավայրում է, իր ոլորտում, ազատ է զգում իրեն, լավ, անկաշկանդ:
Շատ ջրեր են հոսել	Շատ ժամանակ է անցել:
Ջուր պղտորել	Շրջապատողներին շփոթեցնել, խորամանկել, շահադիտական նպատակով իրար խառնել իրադարձությունները:
Պղտոր ջրում ձուկ որսալ	Օգտվելով ուրիշների դժվարությունից, շփոթմունքից, խառը վիճակից՝ շահ քաղել:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. 1-ին դեմքով, գրեթե իր անունից, պարզ նախադրություններով պատմել բնագիրը:
2. Բնագրից օգտվելով՝ պատասխանի:
3. Բնագրից օգտվելով՝ պատասխանի:
4. Պատմել իրեն շատ հուզած կամ դուր եկած հատվածը:
5. Համապատասխանեցնել դարձվածքը և բացատրությունը:

Դարձվածքներ	*Իմաստներ*
Ինչպես ձուկը ջրում	Իր միջավայրում է,իր ոլորտում, ազատ է զգում իրեն, լավ, անկաշկանդ:
Շատ ջրեր են հոսել	Շատ ժամանակ է անցել:
Ջուր պղտորել	Շրջապատողներին շփոթեցնել, խորամանկել, շահադիտական նպատակով իրար խառնել իրադարձությունները:
Պղտոր ջրում ձուկ որսալ	Օգտվելով ուրիշների դժվարությունից, շփոթմունքից, խառը վիճակից՝ շահ քաղել:

Դաս 21. 4/1 Սասունցի Դավիթը կռվում է դևերի դեմ

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Ի՞նչ է հայ ժողովրդի միակ էպոսի(դյուցազնավեպ) անվանումը։
2. Ո՞վ է առաջին անգամ գրառել «Սասունցի Դավիթ» դյուցազներգությունը։
3. Ինչո՞վ էր զբաղված Դավիթը։
4. Ի՞նչ առաջարկեց նախրորդներից մեկը։
5. Ի՞նչ տեղի ունեցավ նախիրի հետ Դավթի բացակայության ժամանակ։
6. Բնագրից ընտրի՛ր և կարդա՛ այն տողերը, որտեղ դրսևորվում են Դավթի հետևյալ հատկանիշները.
    - ուրիշին օգտակար լինելու պատրաստակամություն,
    - հսկայական ուժը,
    - ներողամտությունը թույլերի նկատմամբ,
    - վստահությունն իր ուժերի նկատմամբ։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Սասնա ծռեր կամ Սասունցի Դավիթ
2. Առաջին անգամ «Սասունցի Դավիթ» դյուցազներգությունը գրառել է Գարեգին Սրվանձտյանցը։
3. Դավիթը նախրորդ էր։
4. Նախրորդներից մեկն առաջարկեց հարիսա բերել և ուտել։
5. Դավթի բացակայության ժամանակ քառասուն ավազակ դևեր եկել ու քառասուն տավար էին տարել։
6.

- -Ո՞վ կգնա հարիսա բերի՝ ուտենք,
  Դավիթն ասաց.
  -Դուք իմ նախիրը պահեք, ես կգնամ։
- Տեսավ՝ հարիսայով լի չորսունկանի մի հսկա պղինձ թոնրի մեջ։
  Պղինձը շալակեց, եկավ-հասավ ընկերներին։
- Դավիթն ասաց.
  -Բան չկա, տղեկնե՛ր,
  Եկեք նստե՝ կուշտ ուտենք։
- -Գիտե՞ք, թե որ ճամփով տարան։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Հիշել և միտքն արտահայտել։
2. Հիշել կամ գրքում նշվախ հատվածից օգտվելով՝ միտքն արտահայտել։
3. Պարզ նախադասությամբ պատասխանել հարցին։
4. Պարզ նախադասությամբ պատասխանել հարցին։
5. Ընթերցել համապատասխան տողերը։
6. Համապատասխանեցնել տողերը նշված հատկանիշներին։

Դաս 22. 4/1 Սասունցի Դավիթը կռվում է դևերի դեմ

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Ի՞նչ արեց Դավիթը՝ կողոպուտի մասին իմանալով։
2. Ինչպե՞ս Դավիթը պատժեց դևերին։
3. Դավիթն ի՞նչ գտավ քարանձավում։
4. Ի՞նչ վերցրեց Դավիթը քարանձավից։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Դավիթը կողոպուտի մասին իմանալով՝ կոպալը դրեց ուսին ու ճամփա ընկավ դևերին փնտրելու։
2. Համա Դավիթը բռնեց,
   Դևերի վզերը մեկ-մեկ ոլորեց,
   Կտրեց, գցեց քարայրից դուրս։
3. Դավիթը նայեց տեսավ՝ քարայրը լիքն է
   Ոսկի, արծաթով,
   Ինչ որ մարդուն պետք է՝ լիքն է։
4. Դավիթն իր խուրջինը ոսկի լցրեց,
   Մորթված տավարի գլուխ ու ոտք լցրեց պղինձը,
   Ոսկի լցրեց պղինձը։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Պարզ նախադասությամբ պատասխանել հարցին։
2. Ընթերցել համապատասխան տողերը։
3. Ընթերցել համապատասխան տողերը։
4. Ընթերցել համապատասխան տողերը։

Դաս 23. 4/1 Սասունցի Դավիթը կռվում է դևերի դեմ

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Ինչպե՞ս է Դավիթն օգնում գյուղացիներին։
2. Դավիթը Սասուն վերադառնալուց հետո ի՞նչ հայտարարեց։
3. -Ելե՛ք, կերե՛ք հարիսան, գնացե՛ք,
   Իրիկունն էլ աղը ձեր տա՛նը կերեք։
   Այս տեղերով բնութագրվում է Դավթի.
   -միամտությունը,
   -անտարբերությունը,
   -բարկությունը և ծաղրը վախկոտության և անգործության նկատմամբ։

Ընտրի՛ր ճիշտ պատասխանը։

4.Քարայրից բերած հարստությունից ի՞նչ վերցրեց Դավիթը։

5.Դավիթն իր համար միայն ձի վերցրեց։

Այս տողերով բնութագրվում է Դավթի.

-ագահությունը,

-սակավապետությունը՝ քչով բավարարվելը,

-ըմբոստությունը։

Ընտրի՛ր ճիշտ պատասխանը։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Տարել եմ, կովերի կաշին տվել եմ տերերին,
   Ոսկի ու արծաթ եմ տվել,
   Էս յոթ դևի ականջներն էլ առեք,
   Ձեր գյուղին ասեք թող ջորիներ վերցնեն,
   Գնան քարայրից ապրանք տանեն։
2. Դավիթը Սասուն վերադառնալուց հետո հայտարարեց, որ էլ չի ուզում նախրորդ լինել։
3. Բարկությունը և ծաղրը վախկոտության և անգործության նկատմամբ։
4. Քարայրից բերած հարստությունից վերցրեց Դավիթը միայ մի ձի։
5. Սակավապետությունը՝ քչով բավարարվելը։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Ընթերցել համապատասխան տողերը։
2. Պարզ նախադասությամբ պատասխանել հարցին։
3. Վերլուծել ու ընտրել ճիշտ պատասխանը։
4. Պարզ նախադասությամբ պատասխանել հարցին։
5. Վերլուծել ու ընտրել ճիշտ պատասխանը։

Դաս 24. 4/1 Սասունցի Դավիթը կռվում է դևերի դեմ

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Ընթերցել այն տողերը, որոնք քեզ.
   - զարմացրին,
   - ծիծաղեցրին,
   - հիացրին,
   - հետաքրքրեցին,
   - ոգևորեցին։
2. Ընտրի՛ր այն որակներն ու հատկանիշները, որոնք խորհրդանշում են Սասունցի Դավթին։
   արդարամտություն, վախկոտություն, հայրենասիրություն, անտարբերություն, համարձակություն, ազնվություն, խիզախություն, հոգատարություն, ագահություն
3. Դարձվածքներից դո՛ւրս գրել հականիշ բառերը և բացատրել դրանցից երկուսի իմաստը։
   ծանր ու թեթև անել, կյանքի-մահվան հարց է, փոքր ու մեծ չճանաչել, գնալ-գալ ունենալ, աչքերը փակել, բերանը բանալ, գրի սևն ու սպիտակը ջոգել, գույն տալ, գույն առնել, դրսից հայելի, ներսից ածելի
4. Օտար բառերը փոխարինի՛ր հայերեն համարժեք բառերով.

կոմպյուտեր	ուղղաթիռ
մագնիտոֆոն	համացանց
տելեվիզոր	համակարգիչ
ինտերնետ	հեռուստացույց
վերտոլյոտ	ինքնաթիռ
սամոլյոտ	ձայնագրիչ

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Աշակերտը կընթերցի իր հույզերին համապատասխան տողերը։
2. արդարամտություն, վախկոտություն, հայրենասիրություն, անտարբերություն, համարձակություն, ազնվություն, խիզախություն, հոգատարություն, ագահություն
3. *ծանր - թեթև, կյանքի-մահ, փոքր- մեծ, գնալ-գալ, փակել- բանալ, սև - սպիտակ, տալ-առնել, դուրս-ներս*

   գույն տալ, գույն առնել - գունատվել,
   գնալ-գալ ունենալ - այցելել
4. կոմպյուտեր - համակարգիչ
   մագնիտոֆոն - ձայնագրիչ
   տելեվիզոր - հեռուստացույց
   ինտերնետ - համացանց
   վերտոլյոտ ուղղաթիռ
   սամոլյոտ - ինքնաթիռ

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Ընթերցել իր հույզերին համապատասխան տողերը, մեկնաբանել ընտրությունը։
2. Վերլուծել ու ընտրել հերոսին համապատասխան հատկանիշները։
3. Ընտրել հականիշ զույգեր, նշել իրեն ծանոթ դարձվածքների իմաստները։
4. Համապատասխանեցնել բառերը։

Թեմատիկ պլանավորում

Դաս 25. 1/1 Ամփոփիր իմացածդ: Ստուգիր ինքդ քեզ: («Հայաստանի յոթ և բյուր հրաշալիքները» թեմայի ամփոփում)

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Ինչու՞ է թեմատիկ շարքը կոչվում «Հայաստանի յոթ և բյուր հրաշալիքները»:
2. Ի՞նչ հրաշալիքների հանդիպեցիք:
3.Ուրիշ ի՞նչ վերնագիր կառաջարկեիք թեմատիկ շարքի համար:
4.Գտնել ընդհանուր սկիզբը ու վերջը:



5. Շարունակել միտքը.
Ես այնպես կանեմ, որ …

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Այս թեմայի շրջանակում ծանոթացանք յոթ հրաշալիքների և իմացանք, որ դրանք շատ ավելին են, դեռ պիտի ծանոթանանք մյուսներին: Հասկացանք, որ քանի հայը կա, Հայաստանի հրաշալիքները կշատանան:
2.Հանդիպեցինք Հովհ. Թումանյանին, Ա. Խաչատրյանին, Մ. Սարյանին: Տեսանք հրաշալի կոթողներ, որ կառուցել էր հայ մարդը՝ Գառնո տաճարը, Գեղարդավանքը, Սարդարապատի հուշահամալիրը: Ծանոթացանք կապուտաչյա Սևանի պատմությանն ու խնդիրներին, Փոքր Մհերի ու Արտավազդ թագավորի առասպելներին ծանոթացանք, մեր էպոսի հերոսին՝ Սասունցի Դավթին հանդիպեցնք:
3. Կարող է առաջարկել իր ուզած վերնագիրը, իրեն դուր եկած հրաշալիքի անունը, օրինակ՝ Սասունցի Դավիթ, Հայոց այբուբեն,Հրաշալիքների երկիր Հայաստան և այլն:
4. Ընդհանուր արմատը քարն է՝ քարայր, քարափ, քարաղ, քարայծ, քարանձավ, կայծքար, ջրաղացքար, խաչքար, նախշքար, ծեծքար:
5. Ես այնպես կանեմ, որ բոլորը ճանաչեն Հայաստանը և նրա հրաշալիքները:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Բացատրել մի քանի նախադասությամբ վերնագրի իմաստը։
2. Հիշել և նշել բոլոր այն թեմաները, ինչի շուրջ խոսել են երեխաները իրենց ճամփորդության ժամանակ։
3. Առաջարկել իր տարբերակը։
4. Կազմել բարդ բառեր նույն արմատով։
5. Պատասխանել ՝ արտահայտելով իր միտքը։

Դաս 26. 1/1 «Ա՛յ քեզ բան, ինչ կա-չկա, ինչ երևում-չի երևում՝ հա՛յ-րե՛-նի՛ք է» թեմայի մուտք.

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Ի՞նչ պատկերներ եք տեսնում նկարում։
2. Ու՞մ կտավն է, ինչո՞ւ է նկարը վերնագրված «Հայաստան», ի՞նչ գույներ է օգտագործել հեղինակը։
3. Ի՞նչ կապ կա վերնագրի և սկզբնանկարի միջև։
4. Ի՞նչ եք կարծում՝ ի՞նչ հնչերանգով կարելի է արտաբերել թեմատիկ խմբի վերնագիրը (զարմանքով, հիացմունքով, զայրույթով, վախով, հրճվանքով, ատելությամբ, սիրով)։
5. Ինչի՞ մասին է լինելու թեմատիկ խմբում ընդգրկված դասանյութերի բովանդակությունը։
6. Դուրս բերել նկարից բառակապակցություններ, ապա դրանք օգտագործելով՝ կազմել գրույթ թեմայի խորագրին համապատասխան։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Նկարում լեռներ են, անտառներ, դաշտեր, վանք, բնակավայր, պարող կանայք գետ և այլն։
2. Մ. Սարյանի կտավն է, այն ներկայացնում է Հայաստանի բնաշխարհի համայնապատկերը՝ լեռներ, ձորեր, անտառներ, ժայռի վրա վանք, տանիքում պարող կանայք։ Հեղնակն օգտագործել է կանաչ, դեղին, նարնջագույն, կապույտ գույները, որոնք բնորոշ են իր կտավներին և Հայաստանին։
3.Հայաստանը մեր հայրենիքն է, մեր բնությունը, մեր կենցաղը։
4.Կարելի է արտաբերել զարմանքով, հիացմունքով, հրճվանքով, սիրով։
5. Դասանյութերը մեր հայրենիքի՝ Հայաստանի,մեր հայկականի մասին կլինեն։
6. Գոյական + ածական կաղապարով բառակապակցություններ կազմել, ապա դրանցով կապակցված միտք արտահայտել՝ կազմելով պարզ նախադասություններ։ Օրինակ՝ կապույտ երկինք, սեգ լեռներ, անդնդախոր ձորեր, քչքչան գետ, հոյակերտ վանք, պարող կանայք քարքարոտ երկիր և այլն։
Հայաստանի սեգ լեռները հասնում են կապույտ երկնքին ու մխրճվում նրա մեջ։
Ամենուր քար է, ժայռ ու մեկ էլ կանաչ անտառ…

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Թվարկել նկարում պատկերվածը՝ լեռներ, անտառներ, դաշտեր, վանք, բնակավայր, պարող կանայք գետ և այլն։
2. Նշել հեղինակի անունը, վերնագիրը և օգտագործված գույները. Մ. Սարյանի կտավն է, այն ներկայացնում է Հայաստանի բնաշխարհի համայնապատկերը՝ լեռներ, ձորեր, անտառներ, ժայռի վրա վանք, տանիքում պարող կանայք։ Հեղնակն օգտագործել է կանաչ, դեղին, նարնջագույն, կապույտ գույները, որոնք բնորոշ են իր կտավներին և Հայաստանին։
3. Պատասխանել պարզ նախադասությամբ։
4. Ընտրել ճիշտ հնչերանգը, որով կարելի է կարդալ թեմայի խորագիրը.

ա) զարմանքով դ) վախով զ) ատելությամբ

բ) հիացմունքով ե) հրճվանքով է) սիրով

գ) զայրույթով

5. Կռահել, որ Հայաստանի մասին կլինեն դասանյութերը։
6. Ինքնուրույն կազմել բառակապակցություններ, ապա գրույթ։

Օրինակ՝ կապույտ երկինք, սեգ լեռներ, անդնդախոր ձորեր, քչքչան գետ, հոյակերտ վանք, պարող կանայք քարքարոտ երկիր և այլն։

Հայաստանի սեգ լեռները հասնում են կապույտ երկնքին ու մխրճվում նրա մեջ։

Ամենուր քար է, ժայռ ու մեկ էլ կանաչ անտառ…

Թեմատիկ պլանավորում

Դաս 27. 2/1 Թորգոմ Նահապետի և Հայկ Նահապետի զրույցը։

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Ըստ ավանդության՝ ինչի՞ մասին էին զրուցում Թորգոմ Նահապետն ու Հայկ Նահապետը։
2. Ի՞նչն էր մտահոգում Թորգոմ Նահապետին և ինչի՞ մասին էր երազում նա։
3. Ինչպե՞ս փորձեց մխիթարել Հայկ Նահապետը Թորգոմ Նահապետին։
4. Հայկ Նահապետն ինչո՞ւ համաձայնեց Թորգոմ Նահապետի հետ։
5.Հեղինակն ինչպե՞ս է հասկացնում, թե ինչ մեծ հարգանք ու ակնածանք ուներ Հայկ Նահապետը Թորգոմ Նահապետի նկատմամբ։
6. Բառախմբից առանձնացնել հոմանիշները.

Խոհեմ, ահեղ, ուժգին, վշտանալ, բանիմաց, մտասույզ, գիտուն, ողջամիտ, մտախոհ։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Խոսում էին, թե ինչպես են իրենց սերունդներն իմանալու նրանց արտաքինի մասին,եթե չտեսնեն նրանց։
2. Որ իրեն չեն հիշի իր թոռները։
3. - Մի՛ տխրիր, հա՛յր, ես նրանց կպատմեմ քո մասին,կնկարագրեմ, թե ինչ ահռելի ուժ ունեիր և ին իմաստուն խելք։
4. Ինքն էլ հասկացավ, որ նույն ճակատագիրն իրեն է սպասվում՝ իր հեռավոր զարմերն էլ իրեն չեն տեսնի։
5. «Մի՛ տխրիր, հա՛յր, ես նրանց կպատմեմ քո մասին, կնկարագրեմ, թե ինչ ահռելի ուժ ունեիր և ին իմաստուն խելք»,- խոսքերից։
6. Խմբավորել ըստ հոմանիշների.

խոհեմ- ողջամիտ	մտասույզ- մտախոհ
գիտուն- բանիմաց	ահեղ- ուժգին

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Կարդալ բնագրից համապատասխան տողերը։
2.Կարդալ բնագրից համապատասխան տողերը։
3. Կարդալ բնագրից համապատասխան տողերը։
4.Կարդալ բնագրից համապատասխան տողերը։
5. Կարդալ բնագրից համապատասխան տողերը։
6. Խմբավորել ըստ հոմանիշների։

Թեմատիկ պլանավորում

Դաս 28. 2/1 Թորգոմ Նահապետի և Հայկ Նահապետի զրույցը:

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Ի՞նչ է ավանդությունը:
2. Քո կարծիքով՝ «խոսքով ասվածը տեսնելուն հավասա՞ր է»: Ինչպե՞ս ես հասկանում այս խոսքերի իմաստը: Մեկնաբանի՛ր:
3. Ի՞նչ հնար գտան մարդիկ իրենց պատկերները պահելու համար:
4. Ինչո՞ւ էր հուզված դեսուդեն վազվզում փոքրիկ Հայկը:
5. Ինչպե՞ս հանգստացրեց նրան հայրիկը:
6. Ի՞նչ զգացմունքներ ունեցաք: Շարունակե՛ք նախադասությունը. Ես զգացի…..
7. Տրված բառերն արտահայտել բառակապակցությամբ:
   Բարձրահասակ, սևաչյա, շիկահեր, թիկնեղ, գեղեցկադեմ, սրամիտ, փոքրամարմին:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Ավանդությունը ժողովրդական բանավոր արձակի տեսակներից է, կարճ հուշապատում դեպքերի ու դեմքերի, առարկաների ու երևույթների մասին:
2. Ավելի լավ է մեկ նգամ տեսնել, քան հազար անգամ լսել:
3. Սկսեցին նկարել դիմանկարներ, ապա լուսանկարումը ստղծեցին:
4. Ուզում էր իմանալ՝ ինչպիսիսն է եղել իր նախահայր Հայկը, ու անունն էր կրում ինքը:
5. -Շրջվի՛ր ու տե՛ս.
   Մի հայելի կա ՝ կախված պատից…
   Նայիր ուշադիր և կգտնե
   Այն պատասխանը, որ քեզ հուզեց:
6. Ես զգացի ուրախություն, որ մեք այժմ կարող ենք մեր սերունդներին հասցնել մեր արտաքին տվյալները:
7. Արտահայտել բառակապակցությանբ:

բարձրահասակ - բարձր հասակ ունեցող գեղեցկադեմ- գեղեցիկ դեմք ունեցող
սևաչյա -սև աչքեր ունեցող սրամիտ- սուր միտք ունեցող
շիկահեր- շեկ մազեր ունեցող փոքրամարմին- փոքր մարմին ունեցող
թիկնեղ- լայն թիկունք ունեցող

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Արտահայտել ավանդության հատկանիշները։
2. Մեկնաբանել ասացվածքով կամ իր բառերով։
3. Արտահայտել պարզ նախադասությամբ՝ նշելով տեսակները։
4. Պատասխանել ՝ արտահայտելով իր կարծիքը։
5. Կարդալ բնագրից համապատասխան տողերը։
6. Շարունակել միտքը՝ արտահայտելով իր զգացումները։
7. Բացատրել բառերը բառակապակցությամբ։

Դաս 29. 2/1 Քիչ ենք, բայց հայ ենք: Գաղափար բառի ուղիղ և փոխաբերական իմաստի մասին

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Թվարկե՛ք՝ ովքե՞ր կամ ինչե՞րն էին հպարտության զգացում ծնում բանաստեղծի հոգում:
2. «Քիչ ենք» ասելով հեղինակն ի՞նչ նկատի ունի:
3. Ինչպե՞ս եք հասկանում «մենք մեզ ոչ մեկից չենք գերադասում…» նախադասությունը: Ի՞նչ է նշանակում «գերադասել» բառը:
4. Ի՞նչ նկատի ունի հեղինակը, երբ ասում է, որ մենք «եղել ենք կանգուն»:
5. Մտորե՛ք՝ ինչպես է հնարավոր գերել գրքերով:
6. Ի՞նչ եք կարծում, ինչո՞ւ է հեղինակը հպարտությամբ ասում, որ հայ ազգը ուրիշ ազգերին տիրել է լոկ իր ձիրքերով:
7. Մեկնաբանե՛ք «Կանք; Պիտի լինե՛նք: Ու դեռ շատանա՛նք» տողերը:
8. Գտնել բառերի բացատրությունները և լրացնել աղյուսակը.
   Միայն, շինել, կառուցել, ստեղծել բնածին ընդունակություն, շնորհք, տաղանդ, սոսկ, կրկնատիպ, կրկնօրինակ, խիզախ արարք, հերոսական գործ, վեհ, բարձր, բարձրա-գույն, գերագույն, գերա-զանց:

լոկ
սխրանք
պատճեն
վսեմ
ձիրք
կերտել

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Բանաստեղծը հպարտանում է Արարատով, Սևանով, վանքերով, քանդկներով, Սասունցի Դավթով, Նարեկով՝ Գրիգոր Նարեկացու ստեղծագործությամբ։
2. Հեղինակն ի նկատի ունի մեր ազգաբնակչության՝ հայերիս թիվը՝ քանակը։
3. Մենք մեզ նախապատվություն չենք տալիս, միայն մեր մասին չենք մտածում։ Գերադասել նշանակում է բոլորից վեր դասել, նախապատվություն տալ։
4. Նկատի ունի մեր հզոր պետականության շրջանը, օրինակ Տիգրան Մեծի օրերը…
5. Կարծում եմ մեր գլուխգործոց դարձած գրքերն ի նկատի ունի,որոնցով հիացած են օտարերկրացիները։
6. Հայերը սփռված են աշխարհով մեկ և իրենց տաղանդով զարմացնում են աշխարհին։
7. Նշանակում է մենք պայքարելու ենք մեր անկախ գոյության համար և հարատևելու ենք։
8. Իմանա բառերի բացատրությունը, լրացնի աղյուսակը.

լոկ -	միայն, սոսկ
սխրանք -	հերոսական գործ,խիզախ արարք
պատճեն -	կրկնատիպ, կրկնօրինակ
վսեմ -	բարձր, բարձրա-գույն, գերագույն, գերա-զանց , վեհ
ձիրք -	բնածին ընդունակու-թյուն,շնորհք, տաղանդ
կերտել -	շինել, կառուցել, ստեղծել

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Թվարկել, թե ինչերով կամ ումով է հպարտանում հեղինակը՝ օգտվելով բնագրից։
2.Բացատրել արտահայտության իմաստը։
3. Բացատրել գերադասել բառի իմաստն ու տվյալ արտահայտությունը։
4. Կարողանա բացատրել պարզ նախադասությամբ։
5.Կարողանա բացատրել նախադասությամբ։
6.Կարողանա բացատրել նախադասությամբ։
7.Բացատրել արտահայտության իմաստը։
8. Լրացնել աղյուսակը։

Թեմատիկ պլանավորում

Դաս 30. 2/1 Քիչ ենք, բայց հայ ենք:Գաղափար բառի ուղիղ և փոխաբերական իմաստի մասին

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1.Ըստ բանաստեղծության՝ ո՞ր հատկանիշներն են բնորոշ հայ ժողովրդին:

2.Բանաստեղծության ընդգծված տողերը հայ ժողովրդի ո՞ր հատկանիշներն են բնութագրում .

Պարզապես գիտենք ժայռից վանք կետել,
Քարից շինել ձուկ և թռչուն՝ կավից.
Երբ եղել ենք շատ
Ու եղել կանգուն
Դարձյալ չենք ճնշել մեկ ուրիշ ազգի,
Եթե գերել ենք՝
Լոկ մեր գրքերով,
Եթե տիրել ենք՝
Լոկ մեր ձիրքերով:

3.Ի՞նչ բառերով կբնութագրեք հայ ժոողովրդին: Այդ բառերը գրե՛ք շողերի վրա:

Հայ ժողովուրդ

4. Կատարել «Կարմիր կովն իր կաշին չի փոխի, բառը՝ կփոխի» առաջադրանքը.

Բացատրել ընդգծված բառերի իմաստները յուրաքանչյուր նախադասության մեջ:

Գայլը ***ոռնում էր*** ՝դունչը մեկնած լուսնին:

Քամին ***ոռնում էր*** ձյունոտ դաշտերում:

Խոր ձորում վշշում էր գետը:

Շատ կարդաս՝ ***խոր*** գիտելիքներ կունենաս:

5. ա) ***Քաղցր, ոսկի, պայծառ*** բառերը տեղադրել նախադասությունների մեջ:

1. Երգչուհին ուներ …… ձայն:
2. Ծիրանը …… պտուղ է:
3. Արարատյան դաշտում …….. աշուն էր:
4. …….. արևը փայլում է երկնքում:
5. Վիկտոր Համբարձումյանը ……. միտք ուներ:
6. Գծուծ մարդը ……. շատ է սիրում:

բ) Գրել ի՞նչ բառերի փոխարեն են գործածվել ***քաղցր, ոսկի, պայծառ*** բառերը 1-ին, 3-րդ և 5-րդ նախադասություններում:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1.Ըստ բանաստեղծի հայ ժողովուրդը սիրում է սովորել բարին,վսեմը, լավը, պատերազմ չի սիրում,չի ճնշում այլ ազգերի:

2. Բանաստեղծության ընդգծված տողերը հայ ժողովրդի ո՞ր հատկանիշներն են բնութագրում .

Պարզապես գիտենք ժայռից վանք կետել,
Քարից շինել ձուկ և թռչուն՝ կավից.-- **աշխատասիրություն**
Երբ եղել ենք շատ
Ու եղել կանգուն
Դարձյալ չենք ճնշել մեկ ուրիշ ազգի,--**բարի**
Եթե գերել ենք՝
Լոկ մեր գրքերով,
Եթե տիրել ենք՝
Լոկ մեր ձիրքերով:---**տաղանդավոր**

3.Բնութագրել հայ ժողովրդին.

տաղանդավոր ուրախ
աշխատասեր ուժեղ
բարի հյուրասեր ստեղծագործ

4. Ընդգծված բառերի իմաստները յուրաքանչյուր նախադասության մեջ:

Գայլը ***ոռնում էր*** ՝դունչը մեկնած լուսնին:- Գայլի հանած ձայնն է

Քամին ***ոռնում էր*** ձյունոտ դաշտերում:- Քամու հանած ձայնն է, որ նման է գայլի ձայնին
Խոր ձորում վշշում էր գետը:- մեծ խորություն ունեցող ձոր
Շատ կարդաս՝ ***խոր*** գիտելիքներ կունենաս:- հիմնավոր գիտելիքներ

5. ա) ***Քաղցր, ոսկի, պայծառ*** բառերը տեղադրել նախադասությունների մեջ:

1. Երգչուհին ուներ **քաղցր** ձայն:
2. Ծիրանը **քաղցր** պտուղ է:
3. Արարատյան դաշտում **ոսկի** աշուն էր:
4. **Պայծառ** արևը փայլում է երկնքում:
5. Վիկտոր Համբարձումյանը **պայծառ** միտք ուներ:
6. Գծուծ մարդը **ոսկի** շատ է սիրում:

բ) Ի՞նչ բառերի փոխարեն են գործածվել ***քաղցր, ոսկի, պայծառ*** բառերը 1-ին, 3-րդ և 5 -րդ նախադասություններում:
1-ին - հաճելի
3-րդ - դեղին
5-րդ - սուր, լուսավոր,ստեղծարար

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.
1. Ընտրել ճիշտ պատասխանները և թվարկել.
Սովորել բարին ,վսեմը, լավը, դաժան է, պատերազմ չի սիրում,չի ճնշում այլ ազգերի, կռվարար է:
2.Արտահայտել մեկ բառով՝ **աշխատասիրություն, բարի, տաղանդավոր:**
3. Ընտրել հայ ժողովրդին բնութագրող բառերը և գրել արևի շողերի վրա.

տաղանդավոր ուրախ վախկոտ
աշխատասեր ուժեղ նենգ
բարի ծույլ հյուրասեր
ստեղծագործ անհուրբնկալ
4. Բացատրել ընդգծված բառերի իմաստները յուրաքանչյուր նախադասության մեջ:
5. ա) ***Քաղցր, ոսկի, պայծառ*** բառերը տեղադրել նախադասությունների մեջ:
բ) Գրել ի՞նչ բառերի փոխարեն են գործածվել ***քաղցր, ոսկի, պայծառ***

Թեմատիկ պլանավորում

Դաս 31. 2/1 Օջախի հիմքը

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Բացատրի՛ր «օջախ» բառի իմաստը։ Այստեղ ո՞ր իմաստով է գործածված։
2. Ո՞ւմ տեսավ տանտիկինը տան մոտ։
3. Ովքե՞ր էին ծերունիները։
4. Ինչո՞ւ ներս չմտան ծերունիները։
5. Ընտանիքի յուրաքանչյուր անդամ ի՞նչ էր ուզում։
6. Ընտանիքն ընտրեց սերը. ինչո՞ւ բոլորը մտան։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Օջախ բառն ունի երկու իմաստ. քարերով սարքված կրակարան և գերդաստան, ընտանիք։ Այստեղ բառն օգտագործվել է երկրորդ՝ ընտանիք, գերդաստան իմաստով։
2. Տանտիկինը տան մոտ տեսնում է երեք ծերունու։
3. Ծերունիները սրբեր էին. մեկը սերն է, մյուսը՝ հաջողությունը, հաջորդը՝ հարստությունը։
4. Ծերունիները տուն չմտան, քանի որ տանտիկնոջ ամուսինը տանը չէր։
5. Ամուսինը հարստություն էր ուզում, կինը՝ հաջողությունը, հարսը՝ սեր։
6. Ծերունիներից մեկն ասաց, որ մի տեղ, որ սեր եղավ, այնտեղ հաջողությունն ու հարստությունն անպակաս կլինեն։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Հիշել և նշել բառի իմաստը։
2. Օգտվելով բնագրից՝ պատասխանել հարցին։
3. Կարդալ բնագրից համապատասխան տողերը։
4. Օգտվելով բնագրից՝ պատասխանել հարցին։
5. Կարդալ բնագրից համապատասխան տողերը։
6. Կարդալ բնագրից համապատասխան տողերը։

Դաս 32. 2/1 Օջախի հիմքը

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Պատմի՛ր, թե տանտիկինն ո՞ւմ տեսավ տան մոտ և ովքե՞ր էին նրանք։
2. Ընտանիքի յուրաքանչյուր անդամ տարբեր սրբերի ընտրեց, կարդա՛ բնագրի համապատասխան տողերը։
3. Բոլորն ընտրեցին սերը. ինչո՞ւ մտան երեք սրբերը։ Այս հարցի պատասխանը վերընթերցի՛ր բնագրից և մեկնաբանի՛ր։
4. Ինչպե՞ս եք հասկանում «մի տեղ, որ սեր եղավ, այնտեղ հաջողությունն ու հարստությունն անսպառ կլինեն» միտքը։
5. Ինչո՞ւ է վերնագրված բնագիրը «Օջախի հիմքը»։
6. Ի՞նչ նոր վերնագիր կդնես պատմվածքին։
7. Փակագծերում տրվածներից ընտրել այն բառը, որը նախադասության մեջ կունենա փոխաբերական իմաստ։
   - Ջորակում հոսում էր(լեռնային, զայրացած, վճիտ) գետակը։
   - Փարթամ կանաչի մեջ(աճել էր, ժպտում էր, երևում էր) մի գեղեցիկ կակաչ։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Տանտիկինն իրենց տան մոտ տեսավ երեք ծերունու, որոնք սրբեր էին։
2. Ուրիշի ուղղակի խոսքը, առանձնացնի հերոսների մտքերը և ընթերցի։
3. -Սիրելինե՛ր,- ասաց ծերունիներից մեկը, - մի տեղ, որ սեր եղավ, այնտեղ հաջողությունն ու հարստությունն անսպառ կլինեն։
   Սովորողը կարտահայտի իր կարծիքը։
4. Սովորողը կարտահայտի իր կարծիքը։
5. Սովորողը կարտահայտի իր կարծիքը։ Օրինակ՝ Այս բնագրում խոսվում է սիրո մասին և հետևաբար հաջողության և հարստության, որոնք օջախի հիմքն են։
6. Սովորողը կարտահայտի իր կարծիքը։
7. Բառի փոխաբերական և ուղիղ իմաստների տարբերությունը։
   Ջորակում հոսում էր զայրացած գետակը։
   Փարթամ կանաչի մեջ ժպտում էր մի գեղեցիկ կակաչ։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Պարզ նախադասություններով վերարտադրել բնագրի առաջին հատվածը։
2. Առանձնացնել հերոսների խոսքերը և ընթերցի։
3. Բնագրից առանձնացնել հարցի պատասխանը, արտահայտել իր կարծիքը։
4. Վերլուծել ու արտահայտել իր կարծիքը։
5. Վերլուծել ու արտահայտել իր կարծիքը։
6. Վերլուծել ու արտահայտել իր կարծիքը։
7. Ընտրել այն բառը, որը կօգտագործվի փոխաբերական իմաստով։

Դաս 33. 2/1 Մայրս

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Պատմի՛ր մայրիկիդ մասին։ Նկարագրի՛ր և բնութագրի՛ր նրան. ո՞վ է նա, ի՞նչ զբաղմունք ունի, ի՞նչ ես զգում, երբ մայրիկդ ժպտում է…
2. Ո՞վ էր մայրը բանաստեղծի համար։ Բանաստեղծը ո՞ւմ կամ ինչի՞ հետ էր համեմատում մորը։
3. Նշի՛ր տրված բառերի իմաստները. մատուռ, ամրոց, ճորտ, ճրագ։
4. Ի՞նչ հակադրություններով է բնութագրվում մայրիկը։ Շարունակի՛ր շարքը։ Հեր ու մեր, ճորտ ու տեր, …

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Նկարագրել և բնութագրել իր մայրիկին՝ օգտվելով տրված հարցերից։
2. Բանաստեղծի համար մայրն արեգակն էր, հացը, Աստվածը…

   Համեմատում էր անուշ քնի, տան ճրագի … հետ։

3. մատուռ-փոքրիկ եկեղեցի, աղոթատեղի, ամրոց-բերդ, ամրություն, ճրագ-լամպ, ճորտ-անազատ մարդ, ծառա
4. Հեր ու մեր, ճորտ ու տեր, ծառա ու արքա, անճար ու ճար, անքուն ու անուշ քուն, անտուն ու արծվաբույն, աղբյուր ու ծարավ։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Կապակցված խոսքով ու պարզ նախադասություններով նկարագրել ու բնութագրել իր մայրիկին։
2. Բանաստեղծությունից առանձնացնել հարցի պատասխանը։
3. Հիշել բառի իմաստները։
4. Բանաստեղծություն մեջ գտնել հակադրություններ՝ օրինակից օգտվելով։

Դաս 34. 2/1 Մայրս

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Բանաստեղծության ո՞ր տողը կընտրես որպես վերնագիր և ինչո՞ւ։
2. Ո՞ր տողերը կընտրես քո մայրիկին բնութագրելու համար։
3. Բանաստեղծությունից ընտրի՛ր փոխաբերական իմաստով գրված երեք բառ։
4. Նկարում պատկերված են բանաստեղծության հեղինակը և իր մայրը։ Ինչպիսի՞ն ես պատկերացնում հեղինակի մայրիկին։ Ասա՛ համապատասխան բնութագրող բառեր։
5. Բառերը և բացատրությունները համապատասխանեցրո՛ւ իրար և գրի՛ր։

մատուռ	բերդ, ամրություն,
ամրոց	լամպ,
ճրագ	փոքրիկ եկեղեցի, աղոթատեղի,
ճորտ	անազատ մարդ, ծառա

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Արտահայտել կարծիքը։
2. Արտահայտել կարծիքը և հիմնավորել։
3. «Փոխաբերական բառեր» հասկացության իմաստը։
4. Արտահայտել կարծիքը և բնութագրել հեղինակի մայրիկին։
5. Բառերի իմաստները։

մատուռ	փոքրիկ եկեղեցի, աղոթատեղի,
ամրոց	բերդ, ամրություն,
ճրագ	լամպ,
ճորտ	անազատ մարդ, ծառա

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Արտահայտած կարծիքը հիմնավորել։
2. Նորածանոթ բառերն օգտագործել խոսքում։
3. Առանձնացնել այն բառերը, որոնք օգտագործված են փոխաբերական իմաստով։
4. Բնութագրող բառերով բնութագրել հեղինակի մայրիկին։
5. Համապատասխանեցնել բառերը և բացատրությունները։

Դաս 35. 2/1 Չնվաճված աշխարհամաս։

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Ե՞րբ էր Հակոբիկն զգում, որ պապը խոսելու կարիք ունի։
2. Ի՞նչ իմացար՝ ինչն էր Արշակ պապը համարում չնվաճված աշխարհամաս։
3. Պապն ինչպիսի՞ տուն էր ուզում նկարեր Հակոբիկը։
4. Ո՞ւմ էր պապը համարում չնվաճված աշխարհամասի բնակիչ։
5. Բացատրել ***մամ, ըմբոստացած, շեն, սալ, շիկացած, հարդախառն, երկանք*** բառերի իմաստը։
6. Վերընթերցի՛ր այն տողերը, որոնք հաստատում են այս միտքը. «Ով-ով, բայց պապն ու թոռն իրար հասկանում էին»։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Երբ պապը նստում էր ճոճոան թախտին և թիկնում բարձին, Հակոբիկն զգում էր, որ խոսելու կարիք ունի։

2. Արշակ պապը չնվաճված աշխարհամաս համարում էր շեն տունը։

3. Պապն ուզում էր , որ համ դուրսը երևա, համ ներսը՝ շեն տուն նկարեր՝ անտաշ քարով, հարդախառն ցեխով շաղախած, հինգ օրորոցով, օջախի սալը շիկացած, կովերը կուշտ, Իսո պապն էլ թախտին քնած։

4. Պապը չնվաճված աշխարհամասի բնակիչ համարում էր Հակոբիկին։

5. Բացատրել բառերի իմաստը։

մամ- տատ

ըմբոստացած- ապստամբած, չենթարկված

շեն- կանգուն

սալ- մետաղյա հարմարանք, որի վրա երկաթ են կռում

շիկացած- տաքացած

հարդախառն- չոր խոտով խառնած

երկանք- ձեռքի քարե աղաց

6. Երբ պապը նստում էր ճոճոան թախտին և թիկնում բարձին, Հակոբիկն զգում էր, որ խոսելու կարիք ունի։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Ընթերցել համապատասխան նախադասությունը։
2.Ընթերցել համապատասխան նախադասությունը։
3.Ընթերցել համապատասխան նախադասությունը։
4.Ընթերցել համապատասխան նախադասությունը։
5.Օգտվելով բառարանից՝ բացատրել բառերի իմաստը։
6.Ընթերցել համապատասխան նախադասությունը։

Դաս 36. 2/1 Չնվաճված աշխարհամաս։

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Ի՞նչ ես կարծում՝ Արշակ պապն իրո՞ք մեկ հեքիաթ գիտեր։
2. Ո՞րն էր Արշակ պապի միակ հեքիաթը։
3. Ինչո՞ւ էր ըմբոստանում Հակոբիկը։
4. Ինչո՞ւ էր հուզվում մամը։
5. Արշակ պապն ինչո՞ւ տունն անվանեց աշխարհամաս, այն էլ՝ չնվաճված։
6. Հակոբիկն ինչո՞ւ հավատաց պապին, որ կա այդպիսի աշխարհամաս։
7. Ի՞նչ զգացողություններ ունեցաք։ Շարունակե՛ք նախադասությունը.

Ես զգացի….

8.Գտի՛ր ***աշխարհամաս, արտասվախառն, հարդախառն, ամենասիրուն*** բառերի բաղադրիչները։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Ոչ, ուղղակի միշտ ուզում էր իր հայրենի տան մասին խոսել։
2. Լինո՛ւմ է, չի՛ լինում՝ լեռների մեջ մոլորված մի գյուղ է լինում…
3.Ըմբոստանում էր, որ էլի մամը տխրում էր տան, գյուղի հեքիաթը լսելիս։
4. Կարոտում էր հայրենի տունը, ծննդավայրը։
5. Գյուղը, իր տունն անջնջելի հուշ է թողել պապի հիշողության մեջ, քանի որ իր ծննդավայրն է, հետևապես աշխարհամասի արժողությամբ ամենասիրուն, ամենաիսկական, միայն քե՛զ սիրելի, ոչ ոք այն քեզանից խլել, նվաճել չի կարող, ինչ ճակատագիր էլ ունենա։
6. Նա հասկանում էր պապին և ինքն էլ էր արդեն սիրում այդ տունը՝ ախարհամասը։
7. Ես զգացի, որ նույն սիրով սիրում եմ իմ տունը, քաղաքը, երկիրը։
8. Բառերի բաղադրիչները.

աշխարհամաս -աշխարհ+ա+մաս
արտասվախառն- արտասուք+ա+խառն
հարդախառն-հարդ+ ա+խառն
ամենասիրուն- ամենա+ սիրուն

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Արտահայտել իր կարծիքը։
2. Պատմի պապի հեքիաթը։
3. Մեկնաբանի ամբողջական նախադասությամբ։
4. Արտահայտել իր կարծիքը։
5. Արտահայտել իր կարծիքը։
6. Արտահայտել իր կարծիքը։
7. Ամբողջացնել նախադասությունը։
8. Բառերը բաժանել բաղադրիչների։

Դաս 37. 3/1 Հայրս: Բառի ուղիղ և փոխաբերական իմաստներ

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Կարդացե՛ք այն բարեմաղթանքները, որ տալիս է հայրը:
2. Ո՞ր բարեմաղթանքը կամ խրատը քեզ ամենից շատ դուր եկավ: Կարդա՛ և պատճառաբանի՛ր:
3. Բանաստեղծության հերոսն ինչպե՞ս էր վերաբերվել հոր բարեմաղթանքներին: Վերընթերցի՛ր այդ տողերը:
4. Բացատրել ***ունկ, գայթակղվել, խոթել, չճկել*** բառերի իմատը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Կարդալ խրատները.
   Գլուխդ սառը պահիր,
   Սիրտդ, սակայն, տաք,
   Ձեռքդ բաց պահիր,
   Ճակատդ հպարտ…
2. Ընտրել իրեն դուր եկածը:
3. -Հայր չեմ մոռացել մաղթանքները քո…՝ վերջին քառատողն ընտրել և կարդալ:
4. Բառերի իմաստը.

ունկ- ականջ
գայթակղվել - հրապուրվել
խոթել- մտցնել
չճկել- չծռել

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Կարդալ համապատասխան տողերը:
2. Ընտրել իրեն դուր եկածը և մեկնաբանել:
3. Կարդալ համապատասխան տողերը՝ վերջին քառատողը:
4. Համապատասղանեցնել բառերի բացատրությունները.

ունկ-չծռել
գայթակղվել - մտցնել
խոթել- ականջ
չճկել- հրապուրվել

Դաս 38. 3/1 Հայրս: Բառի ուղիղ և փոխաբերական իմաստներ

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Ինչպե՞ս են շարադրված հայրիկի խրատները՝ չափածո, թե՞ արձակ:
2. Բանաստեղծությունն ընթերցել՝ արտահայտելով տարբեր հույզեր .
   - զարմանք
   - ուրախություն
   - տխրություն
   - հիացմունք
   - բարկություն
   - կարոտ:
3. Օգտվելով բանաստեղծությունից՝ փոխաբերական և ուղիղ իմաստով բառակապակցությունները համապատասխանեցրո՛ւ միմյանց և գրի՛ր.

Առատաձեռն լինել	Ունկը բաց պահել
Հպարտ լինել	Լեզուն իրեն քաշել
Սակավապետ լինել	Սիրտը տաք պահել
Շատախոս չլինել	Ձեռքը բաց պահել
Ջերմ ու հոգատար լինել	Մեջքը պինդ պահել
Ուշադիր և լսող լինել	Գոհանալ քչով

4.Փոխաբերական իմաստով արտահայտված օրինանք - բարեմաղթանքները ներկայացրո՛ւ ուղիղ իմաստով .

Յոթ որդով սեղան նստես-…..

Աղ ու հացով լինես-……

Ճամփադ միշտ կանաչ լինի-…….

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Հայրիկի խրատները չափածո են շարադրված:

2. Տարբեր հույզերով ընթերցել:

3. Օգտվելով բանաստեղծությունից՝ փոխաբերական և ուղիղ իմաստով բառակապակցությունները համապատասխանեցնել միմյանց և գրել.

Առատաձեռն լինել	Ձեռքը բաց պահել

Հպարտ լինել	Մեջքը պինդ պահել
Սակավապետ լինել	Գոհանալ քչով
Շատախոս չլինել	Լեզուն իրեն քաշել
Ջերմ ու հոգատար լինել	Սիրտը տաք պահել
Ուշադիր և լսող լինել	Ունկը բաց պահել

4. Փոխաբերական իմաստով արտահայտված օրինանք - բարեմաղթանքները ներկայացնել ուղիղ իմաստով .

Յոթ որդով սեղան նստես- Յոթ որդին էլ եկել էին նստել սեղանի շուրջ։

Աղ ու հացով լինես- Աղն ու հացը միշտ սեղանին կար։

Ճամփաղ միշտ կանաչ լինի- Ճամփին միշտ բուսականություն, կանաչ լինի։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Որոշել տեքստ տեսակը։

2.Տարբեր հույզերով ընթերցել։

3.Օգտվելով բանաստեղծությունից՝ փոխաբերական և ուղիղ իմաստով բառակապակցությունները համապատասխանեցնել միմյանց և գրել։

4. Փոխաբերական իմաստով արտահայտված օրինանք - բարեմաղթանքները ներկայացնել ուղիղ իմաստով ։

Թեմատիկ պլանավորում

Դաս 39. 3/1 Ա՛յ քեզ բան. Ինչ կա-չկա, ինչ երևում-չի երևում՝հա՛յ-ռե՛նի՛ք է:

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Որտեղի՞ց էր վերադարձել տղայի հայրը:
2. Տղան ինչո՞ւ էր կարծում, որ հայրն ուշացել է:
3. Ինչպե՞ս էին բացատրում «հանուն հայրենիքի» արտահայտությունը.

ա/ ամեն ինչի դասատուն

բ/ հայրիկը:

4. Կարդա՛ տեքստի համապատասխան հատվածները:

Ինչպե՞ս էր անցկացրել տղան այն տարիները, երբ հայրը կռվում էր:

5. Այս զրույցից ի՞նչ եզրակացրեց տղան:
6. Տեքստի դարձվածքներն ու արտահայտությունները համապատասխանեցրո՛ւ իրար.

Լեզուն թառ անել	Շատ նման լինել հորը
Հոր քթից ընկնել	Զարմանալ, հուզվել
Ալավ-բոցին տալ	Լուռ մնալ, համրանալ
Հոր շունչն առնել	Խայտաբղետ, վառվռուն դառնալ
Աչքերը չռել	Հոր ներկայությունն զգալ

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Հայրը պատերազմից էր վերադարձել:
2. Ինքը մեծացել էր, իսկ հայրը չէր տեսել՝ ինչպես է մեծանում:
3. ա/ Կռվում են հանուն հայրենիքի,զոհվում են հանուն հայրենիքի,զոհվում են իրենց պատվի, արժանապատվության համար:

   բ/ Կռվի օրերին օր չի եղել,որ մոռանամ ձեզ՝ իմ մեծին, իմ պուճուրին, տունը, տեղը, այ էս քարափը…Հանուն հայրենիքի՝ մեր տան, մեր գյուղի,մեր սարի, մեր ծմակի երկինքն է , մեր ամեն օրվա, մեր գիշեր-ցերեկվա երկինքը.արև անի մերն է…

4.-Չէ , մաման ասում էր ՝ խաղո՛վ ընկեք, դասո՛վ ընկեք, գործո՛վ ընկեք, որ սովը մտահան անեք…

-Ես լծին եմ նստել,հոտաղություն եմ արել…

-Ես ջաղացի տեղն էլ գիտեմ: Աղուն եմ տարել, աղացել ենք:

5. Ես նայեցի կապու՛յտ-կապույտ երկնքին, մեր ծմակին, սարի ճամփին,քարափի կարմի՛ր-կարմիր պուտերին, հորս շունչն առա, նայեցի նրան, զգացի, որ ամեն նչ՝ հայրս էլ հետը, հայրենիք է:
6.Տեքստի դարձվածքներն ու արտահայտությունները համապատասխանեցնել իրար.

Լեզուն թառ անել	Լուռ մնալ, համբանալ
Հոր քթից ընկնել	Շատ նման լինել հորը
Ալավ-բոցին տալ	Խայտաբղետ, վառվռուն դառնալ
Հոր շունչն առնել	Հոր ներկայությունն զգալ
Աչքերը չռել	Զարմանալ, հուզվել

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.
1. Ընտրել ճիշտ պատասխանը.
ա/ Հեռավոր աշխատանքից էր վերադարձել:
բ/ Հայրը պատերազմից էր վերադարձել:

2. Ամբողջական նախադասությամբ պատասխանել.
Ինքը մեծացել էր, իսկ հայրը չէր տեսել՝ ինչպես է մեծանում:
3. Բնագրից կարդա համապատասխան հատվածները:
4. Բնագրից կարդա համապատասխան հատվածները:
5. Բնագրից կարդա համապատասխան հատվածը:
6. Տեքստի դարձվածքներն ու արտահայտությունները համապատասխանեցնել իրար:

Թեմատիկ պլանավորում

Դաս 40. 3/1 Ա՜յ քեզ բան. Ինչ կա-չկա, ինչ երևում-չի երևում՝հա՛յ-րե՛նի՛ք է:
Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1.Դու համաձայ՞ն ես, որ՝

ա/ պատերազմը միայն հեռու մարտադաշտում էր,

բ/ <<էստեղ>> գյուղում կռիվ չկար,

գ/ պատերազմին մասնակցում էին տղան, ամեն ինչի դասատուն, մայրիկը, ջրաղացը…

2. Ճիշտ լրացրո՛ւ խաչբառը և նրա ընդգծված տողերում կկարդաս «հայրենիք» բառի հոմանիշները:



3. ***Հայրենիք*** բառին և դրա հոմանիշներին վերագրի՛ր հատկանիշներ և կազմի՛ր նախադասություններ այդ բառակապակցություններով:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Արտահայտել իր սեփական կարծիքը, օրինակ՝ պատերազմին մասնակցում էին տղան, ամեն ինչի դասատուն, մայրիկը, ջրաղացը…. որովհետև իրենք էլ էին դժվարություններ կրում,հաղթահարում դրանք:
2. Հարցերի , առաջադրանքների պատասխանները և կգտնի բնօրրան, ծննդավայր հոմանիշները:
3. Կազմել բառակապակցություններ և նախադասություններ՝ քաղցր հայրենիք, հրաշագեղ բնօրրան, հարազատ ծննդավայր:

   Նա ամեն օր մտածում էր իր քաղցր հայրենիքի մասին:

   Օտարերկրացի ընկերոջը ծանոթացրեց իր հրաշագեղ բնօրրանին:

   Քայլում էր իր հարազատ ծննդավայրի հարազատ փողոցներով:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Արտահայտել իր կարծիքը և հիմնավորել։
2. Լրացնել խաչբառը։
3. Կազմել բառակապակցություններ և նախադասություններ։

Դաս 41. 1/1 Հայոց լեզուն: Դարձվածք

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1.Ո՞ւմ էր ուղղված այս բանաստեղծությունը

2. Ինչո՞ւ էր նրան ուղղում բանաստեղծությունը:

3. Ըստ բանաստեղծության ի՞նչ է պատգամում Մեսրոպ Մաշտոցը սփյուռքահայ պատանուն: Պատմի՛ր քո բառերով:

4. Ինչպե՞ս ես հասկանում բանաստեղծության հետևյալ տողերը.

Բայց նա հայ է, ով հովազի
Արնախում երախումն էլ
Իր մայրենի լեզվով խոսի:

5. Հեղինակն այս բանաստեղծությունը գրելով՝ ինչ նպատակ էր հետապնդում:

6. Հեղինակը մեզ ինչպե՞ս է հասկացնում, որ պետք է լավ սովորել մայրենի լեզուն:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Չնայած հասցեագրված է մի սփյուռքահայ պատանու, սակայն, իրավամբ, կարելի է ասել, որ այն հասցեագրված է բոլոր հայ պատանիներին Հայաստանի Հանրապետությունում և Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս ապրող:

2. Նա չգիտեր հայերեն, եկել էր հայրենիք և խոսում էր էլի օտար լեզվով:

3. Պատգամում է օտար երկրում անգամ չմոռանա իրեն հայ պահող հայոց լեզուն, որ օտար լեզուն սովորելուց առաջ իր մայրենին սովորի:

4. Անգամ, երբ վտանգավոր է ասել, որ հայ է, պետք է խոսել հայերեն ու ասել, որ հայ է:

5. Ուզում է պահպանել հայոց լեզուն, որով պահպանվում է նաև ազգությունը:

6. Բայց նա հայ է, ով հովազի
Արնախում երախումն էլ
Իր մայրենի լեզվով խոսի:

Խոսի լեզվով իր հայրենի,
Հայոց լեզվով, որ միշտ ջահել,
Մեզ բյուր դարեր հայ է պահել:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Իր բառերով պատասխանել։
2. Իր բառերով պատասխանել։
3. Իր բառերով պատասխանել։
4. Իր բառերով պատասխանել։
5. Եզրահանգում կատարել և իր բառերով պատասխանել։
6. Մեջբերել համապատասխան տողերը։

Դաս 42. 2/1 Հայոց ուսուցիչ: Դարձվածք

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Հեղինակն ի՞նչ բառով էր ինքն իրեն բնութագրում:
2.Հեղինակն ի՞նչ բառով էր ուսուցչին բնութագրում:
3. ***Սերմնացան*** բառի բաղադրիչներով բացատրե՛ք բառի իմաստը: Ի՞նչ եք կարծում, ինչո՞ւ է հեղինակը ուսուցչին համարում հոգու հերկերի սերմնացան:
4. Բացատրել տրված բառերը և դրանցով կազմել նախադասություններ:

Բառ	Բացատրություն	Կիրառություն
վսեմ		
ներբող		
արարել		
հայցել		
հերկեր		

5. Բանաստեղծությունից դո՛ւրս գրիր հականիշ բառազույգեր: Կազմի՛ր նախադասություններ՝ օգտագործելով այդ բառերը:
6. Բանաստեղծությունից դո՛ւրս գրիր հոմանիշ բառազույգեր: Կազմի՛ր նախա-դասություններ՝ օգտագործելով այդ բառերը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Ես՝ մի խոնարհ աշակերտ:
2. Դու՝ վեհ ու վսեմ:
3. Սերմնացան- սերմ + ցան/ ող/

Ուսուցիչը սաների մեջ սերմանում է սեր, բարություն, սովորեցնում է մայրենին, սովորեցնում է պայքարել, հասնել նպատակներին:

4. Օգտվելով բառարանից՝ բացատրել բառերի բացատրությունը։

Բառ	Բացատրություն	Կիրառություն
վսեմ	վեհ, բարձր	Հայ ժողովրդի զավակները բազմաթիվ վսեմ գործե է ստեղծել:
ներբող	գովերգ, փառաբանական խոսք, ճառ	Շատ գրողներ են մայրերի համար ներբողներ հյուսել:
արարել	անել, ստեղծել	Արամ Խաչատրյանն արարել է բազմաթիվ հրաշալի ստեղծագործու-թյուններ:
հայցել	աղաչելով խնդրել, աղերսել	Սխալ արարքի համար անհրաժեշտ է ներողություն հայցել:
հերկեր	վարած՝ հերկած արտ	Քամուց օրորվում էին ցորենի հերկերը:

5. Խավար- լույս
6. վեհ- վսեմ
   խիզախ- անահ

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Կարողանա կարդալ համապատասխան տողերը։
2. Կարողանա կարդալ համապատասխան տողերը։
3. Կարողանա բաժանել բաղադրիչների և բացատրել։
4.Օգտվելով բառարանից՝ բացատրել բառերի բացատրությունը։
5. Կարողանա գտնել հականիշ զույգը։
6. Կարողանա գտնել հոմանիշ զույգերը։

Թեմատիկ պլանավորում

Դաս 43. 2/1 Հայոց ուսուցիչ: Դարձվածք

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների ատարումը ստուգելու համար:

1. Ինչո՞ւ է հեղինակը ուսուցչին վեհ ու վսեմ համարում:
2. Բանաստեղծությունն ինչո՞ւ է վերնագրված հայոց ուսուցիչ: Ո՞ր դեպքում ենք կիրառում «հայոց» բառը:
3. Ընտրի՛ր հեղինակի ներկայացրած ուսուցչի կատարած գործերից մեկը և մեկնաբանի՛ր:
4. Համաձա՞յն ես, որ ուսուցիչը **նոր ոգի է հաղորդում մեր արյան հոսքին**, ինչպես փոխաբերական իմաստով ներկայացված է բանաստեղծության մեջ: Ինչպե՞ս ես հասկանում այդ արտահայտությունը:
5. Ի՞նչ բառերով կբնութագրեք ուսուցչին: Այդ բառերը գրե՛ք շողերի վրա:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Ուսուցիչը միշտ բարություն, ներողամտություն ու սիրել է սովորեցնում, մոռանում է աշակերտների չարաճճիությունները:

2. Հայոց ուսուցիչ, այսինքն՝ հայ ուսուցիչ: Այն օգտագործում են հայ կամ հայկական բառերի իմաստներով:

3. Դու բռնած մեր ձեռքը ամուր, այսօր էլ, ահա,
Նոր բարձունքներ ես տանում խիզախ ու անահ:
Սովորողներին քաջալերում է սովորել, սովորել հաղթահարել դժվարությունները, նոր գիտելիքներ ձեռք բերել, մրցել և չվախենալ, հավատալ սեփական ուժերին:

4. Սովորողները գիտելիքներ ձեռք բերելով՝ ավելի գիտակցաբար և սիրով են սովորում, որ պիտանի լինեն մարդկությանը, հայրենիքին, ընտանիքին:

5. Ընտրել այն բառերը, որոնցով կարելի է բնութագրել ուսուցչին.
ազնիվ, արդար,ծույլ, աշխատասեր, բարի, ընկերասեր, չար, վեհ, վսեմ, հոգատար, անխելք, անտարբեր,ժպտերես, ներողամիտ, հայրենասեր….

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Կարողանա արտահայտել իր սեփական կարծիքը ամբողջական նախադասությամբ։
2. Կարողանա բացատրել բառի իմաստն ու գործածությունը։
3. Կարողանա ընտրել որևէ գործողություն և բացատրել օրինակով։
4. Կարողանա արտահայտել իր սեփական կարծիքը ամբողջական նախադասությամբ։
5. Կարողանա ընտրել ուսուցչին բնութագրող բառեր։

Դաս 44. 2/1 Կաղինը

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Ինչո՞ւ էր ուրախանում կաղինը։
2. Ի՞նչ պատահեց կաղինին։
3. Ինչո՞ւ էր տխրել կաղինը։
4. Ինչպե՞ս թաքնվեց կաղինը։
5. Կաղինը մինչև ե՞րբ քնած մնաց։
6. Ինչպե՞ս ավարտվեց պատմվածքը։
7. Մտքերի մեջ ընկնել արտահայտությունը ո՞ր բառով կփոխարինեիր։
8. Ինչպե՞ս կբացատրես տերևակալել բառի իմաստը։
9. Ի՞նչ ես հասկանում շուռումուռ ասելով։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Ուրիշի ուղղակի խոսքի կետադրությունը, առանձնացնել հերոսի խոսքը։
   Կաղնին ուրախանում էր, քանի որ գեղեցիկ էր, շապիկը դիմացկուն է, ոչ մի անձրև նրան չի թրջում։ Գլխարկը ամուր է։
2. Բնագրից առանձնացնել հարցի պատասխանը։
   Հանկարծ մի կատաղած քամի սկսվեց, կաղինը պոկվեց ու ընկավ գետնին։
3. Կաղինը տխրել էր, քանի որ հարազատ ծառից էր պոկվել ու նույնիսկ թաքնվելու տեղ չուներ։
4. Կաղինին թաքնվեց ոսկեգույն տերևների տակ։
5. Կաղինը քնած մնաց, մինչև արևը տաքացրեց, առվակները քչքչացին։
6. Կաղինին ոտքեր ու գլխին տերևներ էին աճել։ Կաղինը դարձել էր կաղնի։
7. Մտատանջվել։
8. Տերևներով պատվել՝ ծածկվել։
9. Շրջվել։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Կարդալ բնագրից համապատասխան տողերը։
2. Կարդալ բնագրից համապատասխան տողերը։
3. Բնագրից օգտվելով՝ պատասխանել հարցին կամ ընթերցել համապատասխան տողերը։

4. Բնագրից օգտվելով՝ պատասխանել հարցին կամ ընթերցել համապատասխան տողերը։
5. Բնագրից օգտվելով՝ պատասխանել հարցին կամ ընթերցել համապատասխան տողերը։
6. Բնագրից օգտվելով՝ պատասխանել հարցին կամ ընթերցել համապատասխան տողերը։
7. Իր բառերով կբացատրի՝ բնագրից օգտվելով կամ կօգտվի բառարանից։
8. Իր բառերով կբացատրի՝ բնագրից օգտվելով կամ կօգտվի բառարանից։
9. Իր բառերով կբացատրի՝ բնագրից օգտվելով կամ կօգտվի բառարանից։

Դաս 45. 2/1 Կաղինը

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Կաղինն իրեն ինչպե՞ս էր զգում հարազատ ծառի վրա։ Հիմնավորի՛ր կարծիքդ պատմվածքի տողերով։
2. Նկարագրի՛ր՝ ինչպիսին էր կաղինը։
3. Կաղինն ինչո՞ւ էր վատ զգում քնից արթնանալուց հետո։
4. Ըստ քեզ՝ պատմվածքի ավարտին ինչպիսի՞ն էր կաղնիի տրամադրությունը։ Ի՞նչ է արտահայտում «Վա՛յ, ինձ ոտքեր են աճել» նախադասությունը.
   - ուրախություն,
   - վախ,
   - զարմանք,
   - տխրություն։

   Ընտրի՛ր այս տարբերակներից մեկը, հիմնավորի՛ր և նախադասությունը կարդա՛ համապատասխան հնչերանգով։
5. Կաղինն ինչպե՞ս կաղնի դարձավ։
6. Բնագրից ընտրի՛ր սիրուն, խոնավ, ջերմացնել, տրտում բառերի հոմանիշները։
7. «Ուզո՞ւմ ես ավելին իմանալ» տեքստից դո՛ւրս գրել թվերը, դասավորել աճման կարգով և գրել բառերով։

ՈՒԶՈ՞ՒՄ ԵՍ ԱՎԵԼԻՆ ԻՄԱՆԱԼ

Վարդան Զորավարը, Իջևանում կանգ առած ժամանակ, մի կաղնի է տնկել Ակնաղբյուրի մոտ։ Կաղնին, 1500 տարի ապրելուց հետո, 1974 թվականին կայծակնահար եղավ և տապալվեց (բարձրությունը 50 մետր էր, ուներ փչակ, որտեղ կարող էր տեղավորվել 25–30 մարդ)։

1975 թվականին Ակնաղբյուրում մի նոր կաղնի տնկեց մարշալ Բաղրամյանը։ Ծառն օրեցօր աճում է ու զորանում։

8. Կաղնու կամ մեկ այլ ծառի մասին հորինի՛ր մի պատմվածք կամ հեքիաթ։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Կաղինն իրեն ուրախ էր զգում հարազատ ծառի վրա։

2. Շապիկը դիմացկուն էր, գլխարկը՝ ամուր։
3. Կաղինը քնից արթնանալուց հետո իրեն վատ էր զգում, քանի որ թաց գետնին էր պառկած։
4. Սովորողը կարող է նշել զարմանք՝ կարդալով զարմանք արտահայտող զայնային երանգով։

   Վա՛յ, ինձ ոտքեր են աճել։
5. Կաղինն ընկավ ծառից, ծածկվեց տերևներով, անցավ աշունը, ձմեռը, եկավ գարունը. կաղինի վրա տերևներ ու ոտքեր էլին աճել։ Այսպես նա դարձավ կաղնի։
6. սիրուն - գեղեցիկ,
   խոնավ - թաց,
   ջերմացնել - տաքացնել
   տրտում - տխուր
7. 11-99 թվերի բաղադրիչները գրվում են միասին, թվականների ուղղագրությունը։
8. Ստեղծագործական մտքերը կապակցված խոսքով շարադրել։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Կարդալ բնագրից համապատասխան տողերը։
2. Կարդալ բնագրից համապատասխան տողերը։
3. Կարդալ բնագրից համապատասխան տողերը։
4. Եզրահանգում կատարել և նախադասությունը կարդալ համապատասխան հնչերանգով։
5. Բնագրից օգտվելով՝ պատասխանել հարցին։
6. Բնագրից գտնել և գրել տրված բառերի հոմանիշները։
7. Տարբերակի թվերը և ճիշտ ուղղագրությամբ գրի։
8. Տրված պատմվածքի հիման վրա գրել փոքրիկ պատմությունը։

Դաս 46. 2/1 Եղեգնը, որը շատ էր ուզում դառնալ սրինգ

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Ինչպիսի՞ն էր Կարմիր եղեգնիկը։
2. Ի՞նչ էին դառնում եղեգները։
3. Ի՞նչ էր ցանկանում դառնալ Կարմիր եղեգնիկը։
4. Ի՞նչ էր անում եղեգնիկը, որպեսզի նկատվեր։
5. Ինչո՞ւ եղեգնիկի բախտը բերեց։
6. Ինչպե՞ս էին վերաբերվում իրենց ճակատագրին մյուս եղեգները։
7. Ինչպե՞ս էր ճանապարհին իրեն պահում Կարմիր եղեգնիկը։
8. Ի՞նչ է նշանակում գեղանի, խսիր, հուզիչ, հատել։
9. Ի՞նչ դժբախտություն պատահեց։
10. Ի՞նչ արեց գյուղացին եղեգների հետ։
11. Ի՞նչ տարօրինակ բախտ բաժին ընկավ եղեգնիկին։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Կարմիր եղեգնիկը նուրբ էր ու կարմրավուն։
2. Եղեգները դառնում էին սրինգ, զամբյուղ, խսիր, տան ծածկ և այլ բաներ։
3. Կամիր եղեգնիկը ցանկանում էր սրինգ դառնալ։
4. Եղեգնիկը, որպեսզի նկատվեր, ձգվում էր ոտքի վրա, բարակ տերևներով ծափ զարկում ու գեղանի ճոճվում։
5. Մի օր եղեգնիկի բախտը բերեց, քանի որ մարդը նրան նկատեց, հատեց սուր դանակով, խնամքով դրեց կապոցի մեջ և շալակն առած տարավ տուն։
6. Կապոցի եղեգներն անտարբեր էին իրենց ճակատագրի հանդեպ։
7. Կարմիր եղեգնիկն անչափ երջանիկ էր, աշխատում էր դարձյալ գեղանի երևալ ու քամու շունչն իր միջով անցկացնելով՝ վերածել հուզիչ երգի։

8. Բառարանից օգտվել և դուրս գրել հետևյալ բառերի բացատրությունը կամ հոմանիշները։

   գեղանի - գեղեցիկ, չքնաղ

   խսիր - եղեգնից հյուսված կարպետ

   հուզիչ - հուզող, հուզմունք առաջացնող

   հատել - կտրել, բաժանել

9. Կարմիր եղեգնիկից չպատրաստեցին սրինգ։
10. Գյուղացին եղեգներից պատրաստեց սրինգ, զամբյուղ ու խսիր հյուսեց, մնացածն էլ դարձրեց տանիքի ծածկ։
11. Գյուղացին նրանից մի շերտիկ անցկացրեց զամբյուղի մեջ, մի շերտիկ հյուսեց խսիրին, իսկ մնացած մասը դրեց ծածկի մեջ։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Բնագրից օգտվելով պատասխանել հարցին։
2. Կարդալ բնագրից համապատասխան տողերը։
3. Բնագրից օգտվելով պատասխանել հարցին։
4. Կարդալ բնագրից համապատասխան տողերը։
5. Կարդալ բնագրից համապատասխան տողերը։
6. Կարդալ բնագրից համապատասխան տողերը։
7. Կարդալ բնագրից համապատասխան տողերը։
8. Կարդալ բնագրից համապատասխան տողերը։
9. Բնագրից օգտվելով պատասխանել հարցին։
10. Կարդալ բնագրից համապատասխան տողերը։
11. Կարդալ բնագրից համապատասխան տողերը։

Թեմատիկ պլանավորում

Դաս 47. 2/1 Եղեգնը, որը շատ էր ուզում դառնալ սրինգ

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Տեքստից նշի՛ր այն բառերն ու բառակապակցությունները, որոնց միջոցով արտահայտվում է հեղինակի համակրանքը եղեգնիկի նկատմամբ։
2. Քո կարծիքով՝ իրականացա՞վ արդյոք եղեգնիկի երազանքը։ Հիմնավորի՛ր։
3. Եղեգնիկը սրինգ չդարձավ, այսինքն իր երազանքին չհասավ։ Ասա՝ նրա մեջ լռե՞ց երգը, երգելու, լավ գործ կատարելու ցանկությունը, թե՞…
   Կարդա՛ համապատասխան տողերը։
4. Ձեզ դուր եկա՞վ եղեգնիկը։ Ինչո՞ւ։
5. Շարունակի՛ր նախադասությունը. Ես զգացի…
6. Կա՞ տեքստում մի բան, որը ձեզ զարմացրեց կամ ստիպեց մտածել։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. նուրբ, կարմրավուն եղեգ, ամենանրբագեղ, գեղանի ճոճվել և այլն
2. Սեփական կարծիքն արտահայտել։
3. Ո՛չ չլռեց նրա մեջ երգելու, լավ գործ կատարելու ցանկությունը։
   Հետագայում ոչ մեկը գլխի չէր ընկնում, թե այգուց միրգ բերելուց ինչու է երգում զամբյուղը, կամ ինչու է նվագում խնձորենու տակ փռված խսիրը։ Իսկ ամենատարօրինակը՝ ո՞վ էր տեսել, որ տանիքը երգի գեղեցիկ ու հուզիչ երգեր։
4. Իր կարծիքն արտահայտել։
5. Իր զգացմունքներն արտահայտել։
6. Իր կարծիքն արտահայտել։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Բնագրից ընտրել համապատասխանաբար բառեր և բառակապակցություններ։
2. Արտահայտել իր կարծիքը և հիմնավորել։
3. Կարդալ բնագրից համապատասխան տողերը։
4. Արտահայտել իր կարծիքը և հիմնավորել։
5. Արտահայտել իր կարծիքը, զգացմունքները։
6. Արտահայտել իր կարծիքը և հիմնավորել։

Թեմատիկ պլանավորում

Դաս 48. 2/1 Գետը: Թվական

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Ըստ բանաստեղծության՝ նկարագրել լեռնային գետի ճանապարհը և կատարած գործերը:
2. Ի՞նչ ես կարծում՝ ուժ ունի՞ գետը: Եվ ե՞րբ է այն ավելի ուժով հոսում:
3. Բանաստեղծության մեջ գտնել այն նախադասությունը, որով հեղինակը խորհուրդ է տալիս քեզ:
4. Որոշել բանաստեղծության հենակետային բառերը:
5. Հեղինակը՝ Համո Սահյանը, բանաստեղծության մեջ գործածել է այսպիսի հանգաբառեր. ***գալիս-տալիս, մտնում-գտնում***: Շարունակել շարքը՝ բանաստեղծությունից դուրս գրելով այլ հանգաբառեր:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Գետը լեռներից շառաչով գալիս է:

Գետը անց է կենում դաշտերի միջով:
Ափերն է զուգում զմրուխտ կանաչով:
Պաղ ջուր է տալիս մարդուն ու բույսին: .....

2. Այո, գետն ուժ ունի: Այն ավելի ուժեղ է գարնանը, երբ ջրերը վարարում են, երբ տեղանքը թեք է:
3. Դու էլ գետի պես անցիր քո ճամփան
   Եվ նման եղիր գետի հոսանքին,
   Որ կյանքիդ վերջին կայանում անգամ
   Ինչ—որ մի բանով պետք լինես կյանքին:
4. Հենակետային բառերը կարևոր բառերն են,առանց որոնց չեն կարող հիմնական միտքն արտահայտել:

Դրանք են՝ լեռներ, գետ, հորձանք, ափեր, զուգել, ջուր, մարդ, բույս, լույս տալ,վաստակած, ծով, հանգստ, վերջին կայան, լույսի կայան,պետք լինել:

5. Հանգավորումը նույն կամ գրեթե նույն վերջավորությունն ունեցող բառերի օգտագործումն է տողի վերջում:

Միջով- կանչով, բույսին- լույսի, կորցնում- գնում, նրա- վրա, ճամփան- անգամ, հորձանքին- կյանքին:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Տեքստից հերթականությամբ կարդա գետի ճանապարհը և անցած ուղին նկարագրող տողերը։
2. Նշել մայն ճիշտ պատասխանները.
ա. Այն ավելի ուժեղ է գարնանը։
բ. Այն ավելի ուժեղ է ամռանը։
գ. Երբ տեղանքը թեք է։
դ. Երբ ջրերը վարարում են։
ե. Երբ տեղանքը հարթ է։
3. Կարդալ վերջին քառատողը։
4. Դուրս բերել հենակետային բառերը։
5. Դուրս բերել հանգավորված տողերի վերջին բառերը

Դաս 49. 2/1 Գետը: Թվական

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Ի՞նչ ես կարծում՝ տարվա ո՞ր եղանակն է պատկերված նկարում:
2. Դուք ի՞նչ պարտականություններ ունեք:
3. Քո կարծիքով՝ ինչո՞վ է մարդու կյանքը նման գետի հոսանքին:
4. Բանաստեղծության ո՞ր հատվածն է պատկերված նկարում:
5. Վերնագրել նկարը:
6. Ի՞նչ կապ կա «Կո՛ւժ, քեզ ասեմ, կուլա՛, դու լսիր» ասացվածքի և բանաստեղծության իմաստի միջև:
7. 2, 7, 1, 1000 թվերը գրել բառերով՝ տեղադրելով առածների մեջ:
   Մի խելքը լավ է, …. ավելի:
   ….անգամ չափիր, …. անգամ կտրիր:
   Մի գնդակով ….. նապաստակ չես խփի:
   Խելոքին … ասա, անխելքին՝ ….. ու ….:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Նկարում գարուն է, որովհետև գետը վարար է:
2. Պետք է դեռ սովորենք, օգնենք մայրիկին, հայրիկին, ընկերներին:
3. Մարդն էլ է արարում,աշխատում, օգնում այլ մարդկանց՝ իր երիտասարդ ժամանակ ավելի եռանդուն, իսկ ծեր ժամանակ մի քիչ ավելի հանգիստ, հոգնած՝ դանդաղ:
4. Գետը լեռներից շառաչով գալիս….
5. Կայտառ գետը կամ Վարար գետը, Աշխատասեր գետը…
6. Գետն իր օրինակով խրատում է լինել աշխատասեր և պիտանի:
7. Թվերը գրել բառերով և տեղադրել առածների մեջ.

   Մի խելքը լավ է, երկուսն ավելի:
   Յոթ անգամ չափիր, մեկ անգամ կտրիր:
   Մի գնդակով երկու նապաստակ չես խփի:
   Խելոքին մեկ ասա, անխելքին՝ հազար ու մեկ:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Կպատասխանի և կպատճառաբանի։
2. Կթվարկիր իր անելիքները, ցանկությունները։
3. Համեմատել մարդու և գետի գործունեությունը։
4. Կհիշի առաջին քառատողը։
5. Կառաջարկի իր տարբերակը։
6. Կպատասխանի և կպատճառաբանի։
7. Թվերը գրել բառերով և տեղադրել առածների մեջ։

Դաս 50. 2/1 Ախ, այս Մասիսը: Թվական

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Ըստ բանաստեղծության՝ ամբողջացրո՛ւ միտքը.
   -քար է, բայց .....
   -սառն է, բայց .....
   -այստեղ չէ, բայց .....
   -կիսված է, բայց .....
   -ո՛չ հեռանում է, ո՛չ էլ .....
2. Մեկնաբանե՛ք «Երբ որ կիսված է» տողերի իմաստը:
3. Հեղինակը մեզ ինչպե՞ս է հասկացնում, որ սիրում է Մասիս սարը:
4. Ընթերցե՛ք բանաստեղծությունն այնպես, որ երևա, որ դուք էլ եք շատ սիրում Մասիս սարը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. -քար է, բայց փափկացնում է բոլորի սրտերը,
   -սառն է, բայց ջերմացնում է մոլոր սրտերը,
   -այստեղ չէ, բայց աշխարհներից հեռավոր-հեռու, բոլոր հայերին այստեղ է բերում,
   -կիսված է, բայց միաբանության քարոզ է կարդում աշխարհում ցրված անտուն հայերին,
   -ո՛չ հեռանում է, ո՛չ էլ գալիս է, ա՜խ, այս Մասիսը:
2. Լեռն այժմ գտնվում է Թուրքիայի Հանրապետության վերահսկողության ներքո, Հայաստանի և Թուրքիայի սահմանում:
3. Հասկանում ենք բանաստեղծության տողերից. փափկացնում է բոլորի սրտերը, ջերմացնում է մոլոր սրտերը, մեծ սիրո հետ է համեմատում:
4. Արտահայտիչ ընթերցել, ձայնին հաղորդել երանգներ:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Բանաստեղծությունից օգտվելով՝ ամբողջացնել մտքերը։
2. Դասարանում կազմակերպված զրույցից, բանստեղծության վերլուծությունից հետո մեկնաբանել նշված տողերի իմաստը։
3. Վերլուծել ու կարդալ տողերը։
4. Արտահայտիչ ընթերցել։

Թեմատիկ պլանավորում

Դաս 51. 2/1 Ախ, այս Մասիսը: Թվական

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Անգիր ասել այն հատվածը, որն առավել դուր է եկել:
2. Ի՞նչ զգացողություններ ունեցաք: Շարունակե՛ք նախադասությունը. Ես զգացի….
3. Ի՞նչ ես կարծում՝ հայերն ինչո՞ւ են սիրում Մասիսը և ինչպե՞ս են այդ սերը դրսևորում:
4. Օգտվելով տառերի թվային արժեքների աղյուսակից՝ վերծանի՛ր ծածկագրված բառերը:

   8690, 6690, 4690, 2801, 4091

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Արտահայտիչ արտասանել:
2. Նախադասություն կազմել, միտքը շարունակել:
3. Կապակցված, պարզ նախադասություններով խոսք կազմել:
4. Հայերենի յուրաքանչյուր տառ ունի իր թվային արժեքը, կա համապատասխան աղյուսակ:

   8690=8000+600+90=փ+ռ+ղ=փռղ

   6690=6000+600+90=ց+ռ+ղ=ցռղ

   4690=4000+600+90=տ+ռ+ղ=տռղ

   2801=2000+800+1=ս+պ+ա=սպա

   4091=4000+90+1=տ+ղ+ա=տղա

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Արտահայտիչ անգիր ասել իր դուր եկած հատվածը:
2. Իր հույզերն ու զգացողություններն արտահայտել:
3. Իր կարծիքն արտահայտել:
4. Օգտվել տառերի թվային արժեքների աղյուսակից և կարդա բառերը:

Թեմատիկ պլանավորում

Դաս 52. 2/1 Հայրենիք: Թվական

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Ինչի՞ց իմացաք, որ բանաստեղծություն է:

2. Ո՞ւմ է դիմում հեղինակն իր բանաստեղծությամբ:

3. Ընթերցե՛ք բանաստեղծությունն այնպես, որ երևա, որ դուք էլ եք շատ սիրում հայրենիքը:

4.Վերընթերցի՛ր գլխավոր միտքն արտահայտող տողերը և բացատրի՛ր իմաստը:

5. Բացատրել ***փառք, վեհ, հողմ, գովք, անմահ, գուսան*** բառերի իմաստը:

6. Բաժանել չորս խմբի և տալ դրանց ընդհանուր անուններ.

քար, առաջին, փափկել, սիրտ, տասնհինգ, հինգերորդ, ջերմացնել, կարդալ, քառասուն, անտուն, չորրորդ, մոլոր, հազար, բարձր, հեռավոր, սար, երկու, աշխարհ, կանչել:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Բանաստեղծութունը հանգավորված, չափածո ստեղծագործություն է:
2. Հեղինակը դիմում է հայրենիքին:
3. Հնչերանգի միջոցով կարող է արտահայտել վերաբերմունքը, հույզերը:
4. Վերջին տողերում կարծես ամփոփված է ամբողջ իմաստը: Հայրենիքի զավակները իրենց արարքներով, նույնսկ կյանքով պաշտպանում են հայրենիքն ու նրա փառքը:

5. Բացատրել բառերի իմաստը:

   փառք -համբավ, վեհ -վսեմ, բարձր, հողմ- ուժեղ քամի, գովք գովասանք, ձոն, ներբող, անմահ- հավերժ, գուսան- աշուղ, ժողովրդական երգիչ :

6. Խոսքի մասերից՝ գոյականի, ածականի, բայի, թվականի առանձնահատկություններով խմբավորել.

գոյական	ածական	բայ	թվական

քար,սիրտ, սար,աշխարհ	անտուն,մոլոր, բարձր,հեռավոր,	փափկել,ջերմացնել,կարդալ,կանչել	առաջին,տասնհինգ,հինգերորդ,քառասուն,չորրորդ, հազար,երկու

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1.Ընտրել բանաստեղծության հատկությունները.

Ա. Հանգավորված է։ Բ. Չափածո է՝ կարճ տողերով է։ Գ. Արձակ է։

2.Կարդա համապատասխան տողերը։

3. Կարդա համապատասխան հնչերանգով։

4. Կարդա վերջին տողերը և մեկնաբանի։

5. Բառարանի օգնությամբ բացատրի բառերի իմաստը։

6.Կարողանա խմբավորել բառերն ըստ խոսքի մասերի։

Թեմատիկ պլանավորում

Դաս 53. 2/1 Հայրենիք: Թվական

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Ի՞նչ զգացում համակեց ձեզ բանաստեղծությունն ընթերցելիս: Հիմնավորի՛ր:

2. Հեղինակը մեզ ինչպե՞ս է հասկացնում, որ սիրում է հայրենիքը:

3.. Ըստ բանաստեղծության՝ ինչ են անում.

Ա. լեռները Բ. արծիվները Գ. հովերն ու հողմերը Դ. աղբյուրն ու գուսանը

4. **Հայրենիքը հենց այն է, որ** անհնար է հասկանալ խելքով, չափել մետրերով, նրան կարելի է և պետք է հավատալ միայն:

Շարունակել.

Հայրենիքը հենց այն է, որ .....

5. Բառակապակցություններն արտահայտի՛ր մեկ բառով.

2 թև ունեցող
7 գլուխ ունեցող
8 ոտք ունեցող
4 հարկ ունեցող

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Հայրենասիրական զգացում առաջացավ, ուզեց ինքն էլ հայրենքի համար պիտանի լինել:

2. Երբ խոսում է հայրենքի փառքից և ուզում է որ բոլորն իմանան նրա մասին:

3. Ա. Լեռները հպարտ վե՛ր են բարձրանում,

Որ փառքդ վերև՛ տանեն , հայրենի՛ք:

Բ. Արծիվները վես երկինք են հասնում,

Որ փառքդ երկի՛ նքտանեն , հայրենի՛ք:

Գ. Հովերն ու հողմերն աշխա՛րհ են շրջում,

Որ փառքդ չորս կողմ տանեն , հայրենի՛ք:

Դ. Աղբյուր ու գուսան ե՛րգ են կարկաչում,

Որ փառքիդ գովքը անեն , հայրենի՛ք:

4.Շարունակել.

Հայրենիքը հենց այն է, որ անմնացորդ սիրում ես ու այնտեղ դու տանն ես։

5. Բառակապակցություններն արտահայտել մեկ բառով.

2 թև ունեցող- երկթևանի
7 գլուխ ունեցող- յոթգլխանի
8 ոտք ունեցող- ութոտանի
4 հարկ ունեցող- չորսհարկանի կամ քառահարկ

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Կարողանա ամբողջական նախադասությամբ արտահայտել միտք և հիմնավորել։

2. Կարդա համապատասխան տողերը և մեկնաբանի։

3. Կարդա համապատասխան տողերը և մեկնաբանի։

4. Շարունակի միտքը իր տարբերակով։

5. Կազմել բարդ բառեր։

Դաս 54. 2/1 Նոր տարվա գիշեր: Թվական

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Ի՞նչ է ուզում հեղինակն ասել ***փակ դռներ*** արտահայտությամբ:

2. Ի՞նչ եք հասկանում ***օջախ*** ասելով:

3.***Բախտի փշոտ ճամփեք*** արտահայտության մեջ ***փշոտ*** բառն ի՞նչ իմաստով է գործածված:

4. Բացատրել ***խանդավառվեն, մոլորված, դարձի գան, պանդուխտները ողջագուրվեն, արարչագործ*** բառերի իմաստը:

5. Ի՞նչ բառով է բնութագրում ժողովրդին: Ինչո՞ւ:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. ***Փակ դռներ*** արտահայտությամբ ուզում է ասել, որ ընտանիքը լքել է հայրենիքը և տունը դատարկ է:
2. ***Օջախ*** ասելով հասկանում ենք ընտանիք, տուն:
3. ***Բախտի փշոտ ճամփեք*** արտահայտության մեջ ***փշոտ*** բառը գործածված է փոխաբերական իմաստով ,այսինքն՝ դժվարություններով :
4. ***Խանդավառվեն, մոլորված, դարձի գան, պանդուխտները ողջագուրվեն, արարչագործ*** բառերի իմաստը.

   Խանդավառվեն - ուրախանան,

   մոլորված - ճանապարհից շեղված/փոխ. իմաստ/,

   դարձի գան- ճիշտ ապրեն,

   պանդուխտները ողջագուրվեն- գրկախառնվեն,

   արարչագործ - ստեղծագործ

5. Արարչագործ իմ ժողովուրդ- հայը միշտ ստեղծագործում է արարում, որքան էլ դժվար լինի, տխուր լինի ր որտեղ էլ լինի։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Բացատրել ամբողջական նախադասությամբ։
2. Բացատրել ամբողջական նախադասությամբ։
3. Բացատրել ամբողջական նախադասությամբ։
4. Բառարանի օգնությամբ բացատրել բառերի իմաստը։
5. Բացատրել ամբողջական նախադասությամբ։

Թեմատիկ պլանավորում

Դաս 55. 2/1 Նոր տարվա գիշեր։ Թվական

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1.Ի՞նչ եք հասկանում ***«ուրիշի ուրախ կյանքով խանդավառվեն այս գիշեր»*** արտահայտությամբ :

2. ***Սեր, հայրենիք, ընտանիք, հայրենադարձություն*** բառերից յուրաքանչյուրը ո՞ր քառատողին են համապատասխանում:

3. Ընտրի՛ր երեք դրվագ, որոնք հատկապես քո ուշադրությունը գրավեցին նկարում: Կազմի՛ր նախադասություններ այդ դրվագների շուրջ։

4.Ի՞նչ կցանկանայիր քո հայրենիքին , գրի՛ր մի քանի նախադասությամբ։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Պետք է բարեգործություն կամ լավություն անել մեկին և դրանով ուրախանալ։

2. Թե աշխարհում փակ դռներ կան,թող որ բացվեն այս գիշեր,

Ու Նոր տարին նոր խնդությամբ թող ներս մտնի այս գիշեր,

Թե կան դատարկ, համր տներ՝ մանկան ճիչով թող լցվեն,

Ով փնտրում է սրտանց մեկին՝ հանկարծ գտնի այս գիշեր: - ***ընտանիք***

Թե կան լացող, տխուր աչքեր, թող ծիծաղեն այս գիշեր,

Կանչող ձեռքերն իրար հասնեն, հրաշք ապրեն այս գիշեր:

Թե կան սրտեր՝ չար նախանձով, դառնան բարի ու ներող,

Եվ ուրիշի ուրախ կյանքով խանդավառվեն այս գիշեր:- ***սեր***

Թե մոլորված անցորդներ կան, դարձի թող գան այս գիշեր,

Սրբագործված սիրով մտնեն իրենց օջախն այս գիշեր,

Թե կան բախտի փշոտ ճամփեք, թող ծաղկունքով կանաչեն

Ու երջանիկ սպասումով բոլորն արբեն այս գիշեր…***-հայրենիք***

Թե աշխարհում պանդուխտներ կան, թող տուն դառնան այս գիշեր,

Հայրենական հավերժությամբ ողջագուրվեն այս գիշեր:

Արարչագո՛րծ իմ ժողովուրդ, թող որ խմենք մինչև լույս

Թափվող ձյունի նման մաքուր խղճիդ կենա՛ցն այս գիշեր.. ***-հայրենադարձություն***

3. Իմանա, որ դրվագն ասես առանձին նկար լինի մի նկարում:

1.Երեխաները շրջապատել են Ձմեռ պապին:

2.Հայրիկն իր որդիների հետ հրապարակում դիմավորեց Նոր Տարին:

3.Մայրիկն ամուր գրկել է իր փոքրիկին ու շնորհավորում է Ամանորը:

4. Ես ցանկանում եմ, որ խաղաղություն լինի իմ հայրենիքում:

Ես ցանկանում եմ, որ բոլորը ապահով ու երջանիկ զգան Հայաստանում:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Բացատրել ամբողջական նախադասությամբ:
2. Ճիշտ կռահել քառյակների հիմնական միտքը:
3. Կազմել նախադասություններ նկարի վերաբերյալ:
4. Արտահայտել իր ցանկությունները ամբողջական նախադասությամբ:

Դաս 56 - 58. 2/1 Ամփոփի՛ր իմացածդ, ստուգի՛ր

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Բացատրել բառերի, արտահայտությունների իմաստները

«Բառը՝ բանալի, բառը՝ աշխարհ» ձևաթերթ 1	
Բառ - բառակապակցություն	*Արտահայտություն - դարձվածք*
ավանդություն	ականջները սրել
նահապետ	կյանքի վերջին կայան
նախապապ	հոգու խավարը վանել
խոհեմ	բարության սերմեր ցանել
թիկնեղ	մեջքը պինդ պահել
գեղեցկադեմ	մաղով ջուր կրել

կամ

«Բառը՝ բանալի, բառը՝ աշխարհ» ձևաթերթ 2	
Բառ - բառակապակցություն	*Արտահայտություն - դարձվածք*
շեն տուն	ձի հեծնել
արծվաբույն	ունկը բաց պահել
ամրոց	փշոտ ճափա
բարեմաղթել	սիրտը փափկել
հորձանք տալ	բախտը բերել
պանդուխտ	ցորեն լեզու ունենալ

2. Լրացնել աղյուսակը.

Անունը	Թորգոմ	Արշակ
Ո՞վ է…	Հայկ նահապետի հայրը։	
Ինչպիսի՞ն է (նկարագրել արտաքինը)…		
Ինչպիսի՞ն է (բնութագրել ներքինը)..		
Ի՞նչ է արել… /Ինչո՞վ է «հայտնի»…		

3. Ընթերցել նախադասու-թյուն-ների սկիզբը և ավարտել դրանք՝ գրելով նաև, թե ո՛ր տեքստից են դրանք.

Անավարտ նախադասություններ 1	
Միտք	*Տեքստի վերնագիր*
Մեր ամեն ինչի դասատուն ասում է՝ ____ _____:	_____ _____
Նա է հայը, ով _____ _____ :	_____ _____
Դու բռած մեր ձեռքը՝ տանում ես _____ _____ :	_____ _____

Անավարտ նախադասություններ 2	
Միտք	*Տեքստի վերնագիր*
Դու էլ գետի պես անցիր քո ճամփան, որ _____ _____ :	_____ _____
Բոլոր հայերին այստեղ է բերում, որովհետև _____ _____ :	_____ _____
Թող որ Նոր տարվա այս գիշերը _____ _____ :	_____ _____

Անավարտ նախադասություններ 3	
Միտք	*Տեքստի վերնագիր*
Մեսրոպ Մաշտոցն ասաց՝ որդի՛ս, _____ _____ :	_____ _____
Զգացի, որ ամեն ինչ՝ _____ _____ :	_____ _____
Հաճախ էր հայրս ինձ բարեմաղթում. _____ _____ :	_____ _____

4. Գտնել ընդհանրություններ սլաքներով միացրած ստեղծագործություններում ու ներկայացնել:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Հիշելով և օգտվելով դասագրքից՝ բացատրել բառերի և արտահայտությունների իմաստը:

«Բառը՝ բանալի, բառը՝ աշխարհ» ձևաթերթ 1	
Բառ - բառակապակցություն	*Արտահայտություն - դարձվածք*
ավանդություն-հին զրույց,առասպել	ականջները սրել ուշադիր լսել
նահապետ- նախնի, նախահայր	կյանքի վերջին կայան-վերջին օրեր, տարիներ,ծերություն
նախապապ- նախահայր, նահապետ	հոգու խավարը վանել- կրթել
խոհեմ- իմաստուն, խելացի	բարության սերմեր ցանել- բարի գործեր սովորեցնել
թիկնեղ- հաղթանդամ	մեջքը պինդ պահել- դիմանալ
գեղեցկադեմ- գեղեցիկ արտաքինով	մաղով ջուր կրել-անիմաստ գործ անել

«Բառը՝ բանալի, բառը՝ աշխարհ» ձևաթերթ 2	
Բառ - բառակապակցություն	*Արտահայտություն - դարձվածք*
շեն տուն- բնակիչներով տուն	ձի հեծնել- նստել ձիու վրա
արծվաբույն- արծվի բնի նման	ունկը բաց պահել-ուշադիր լսել
ամրոց- դղյակ, պալատ, բերդ	փշոտ ճափա- դժվարին ճամփա
բարեմաղթել- ցանկանալ,մաղթել	սիրտը փափկել-մեղմանալ, հանգստանալ
հորձանք տալ- վարարել	բախտը բերել-հաջողել
պանդուխտ- օտար երկրում ապրող, աշխատող	ցորեն լեզու ունենալ -քաղցր լեզու ունենալ

2.Դասանյութի հերոսներին հիշել և լրացնել աղյուսակը՝ օգտվելով դասգրքից։

Անունը	Թորգոմ	Արշակ
Ո՞վ է…	Հայկ նահապետի հայրը։	պապ
Ինչպիսի՞ն է (նկարագրել արտաքինը)…	բարձրահասակ, լայնաթիկունք, ուժեղ, հաղթանդամ, հաստաբազուկ, …	ճերմակահեր, ծեր, կորամեջք, խորունկ ու թաց աչքերով, կնճռապատ դեմքով, …
Ինչպիսի՞ն է (բնութագրել ներքինը)..	իմաստուն, խոհուն, մտահոգ, հեռատես, բարի, …	բարի, ընտանեսեր, աշխատասեր, իմաստուն, գյուղացի, …
Ի՞նչ է արել… /Ինչո՞վ է «հայտնի»…	Հայկ նահապետի հայրն է: Հայ ժողովրդի նախահայրերից մեկն է:	Սիրում է իր հայրենիքը, իր տունը, իր ընտանիքը:

3. Ընթերցել նախադասու-թյուն-ների սկիզբը և ավարտել դրանք՝ գրելով նաև, թե ո՛ր տեքստից են դրանք.

Անավարտ նախադասություններ 1	
Միտք	*Տեքստի վերնագիր*
Մեր ամեն ինչի դասատուն ասում է՝ կռվում են հանուն հայրենիքի,զոհվում են հանուն հայրենիքի,զոհվում են իրենց պատվի, արժանապատվության համար։	Ա՛յ քեզ բան. Ինչ կա-չկա, ինչ երևում-չի երևում՝հա՛յ-րե՛-նի՛ք է
Նա է հայը, ով հովազի արնախում երախումն էլ իր մայրենի լեզվով կխոսի։	Հայոց լեզուն
Դու բռած մեր ձեռքը՝ տանում ես դեպի նոր բարձունքներ,սովորեցնում օտարից ոչինչ չհայցել և մեր երազած տունը ինքնուրույն կառուցել։	Հայոց ուսուցիչ

Անավարտ նախադասություններ 2	
Միտք	*Տեքստի վերնագիր*
Դու էլ գետի պես անցիր քո ճամփան, որ կյանքիդ վերջին կայանում ինչ-որ մի բանով պետք լինես կյանքին։	Գետը
Բոլոր հայերին այստեղ է բերում, որովհետև բոլորն ուզում են այն տեսնել, հիանալ նրանով։	Ա՛խ, այս Մասիսը
Թող որ Նոր տարվա այս գիշերը բոլոր տները լցվեն ուրախությամբ, մանուկների լացով ու ծիծաղով։	Նոր տարվա գիշեր

Անավարտ նախադասություններ 3	
Միտք	*Տեքստի վերնագիր*
Զգացի, որ ամեն ինչ՝ ինչ կա, չկա հայրենիք է:	Ա՛յ քեզ բան. Ինչ կա-չկա, ինչ երևում-չի երևում՝հա՛յ-րե՛-նի՛ք է
Հաճախ էր հայրս ինձ բարեմաղթում. ունկդ բաց պահիր, որ շատ բան լսես,լեզուդ քեզ պահիր, որքիչ բան խոսես:	Հայրս

4. Գտնել ընդհանրություններ սլաքներով միացրած ստեղծագործություններում ու ներկայացնել: Օրինակ՝
Առաջին երկու ստեղծագործություններում էլ երկու սերունդների զրույցն է, որտեղ ավագները սովորեցնում են փոքրերին:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Հիշելով, գրքից օգտվելով՝ լրացնել աղյուսակը:
2. Հիշելով, գրքից օգտվելով՝ լրացնել աղյուսակը:
3. Հիշելով, գրքից օգտվելով՝ լրացնել աղյուսակը:
4.Համեմատել , գտնել նմանությունները և ներկայացնել:

Թեմատիկ պլանավորում

Դաս 59. 1/1«Ես այսպես ասեմ, դու այնպես հասկացիր» թեմայի մուտք

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Ի՞նչ հատկանիշներ ունի առակը,նշել ճիշտ պատասխանները։
2. Հիշել մի քանի առակներ 3-րդ դասարանի դասագրքից՝ կռահել հատվածներից։
3. Ի՞նչ է դարձվածը, նշել դարձվածներ։
4. Բացատրել հետևյալ դարձվածների իմաստը և նշել՝ որոնք են համապատասխանում նկարներին.

- *ցամաք ձորի աղվես*
  ոտքի վրա հալվել
- *վիզը տանձի պոչ էր դարձել*
  ոտքի վրա չորացել է
  մենակ քիթն էր մնացել
  քթից բռնեիր՝ շունչը կտար

5. Գուշակի՛ր՝ ինչպիսին էին ընկերները և բնութագրի՛ր այն ընկերոջը, որը դարձվածքներով է խոսում և այն ընկերոջը, որը չի հասկանում դարձվածքների իմաստները։

6. Այսպիսով, ո՞ր թեմատիկ խումբն ենք ուսումնասիրելու։ Ինչպե՞ս եք հասկանում այդ թեմատիկ խմբի վերնագրի իմաստը։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. 1. Այն կարող է լինել և՛ արձակ, և՛ չափածո։

2. Այն ժողովրդական բանահյուսության հնագույն տեսակներից է և առկա է գրեթե բոլոր ժողովուրդների բանավոր ստեղծագործության մեջ։

3. Նրա հերոսները կենդանական և բուսական աշխարհի ներկայացուցիչներ են, իրեր, լուսատուներ և այլն։

4. Սովորաբար այն բաղկացած է 2 մասից՝ սյուժեից և բարոյախոսությունից։

5. Դրա վարպետներ են Եզովպոսը, Իվան Կռիլովը, հայ հեղինակներից՝ Մխիթար Գոշը, Վարդան Այգեկցին, Խնկո Ապերը։

2. 1. Քիթը տնկած

Ճանճը ասաց.

-Մենք՝ որտեղի՞ց,

Վարում էինք,

Վարատեղի՛ց: *Աթաբեկ Խնկոյան «Ճանճը»*

2. Հաղթողը թռավ տանիք և ամբողջ կոկորդով սկսեց ծուղրուղու կանչել ու պարծենալ իր հաղթանակով: *Հովսեփ Ասորի «Երկու աքլոր»*

3. -Ես սև եմ, և բոլորն ինձ արհամարհում են: Խնդրում եմ ինձ սովորեցնես, որ քեզ պես սպիտակեմ: *Մխիթար Գոշ «Ճայը և սագը»*

4. Մարդն ասում է, որ ընկույզի տեղ ձմերուկ պիտի լիներ ծառին, և ընկույզը՝ ձմերուկի թփի վրա: *Վարդան Այգեկցի «Մարդը, ընկույզը և ձմերուկը»*

5.Գետնին տապալեց

Ծառերը փտած

Եվ, ինքն իր ուժով

Հպարտ, պարծեցավ:

6. Զարթնեց քնից ու տակից

Ծառը փորեց արմատից:

Խնկո Ապեր «Խոզն ու ագռավը»

Հրաչիկ Մնոյան «Անտառն ու քամին»

3. Այն կայուն բառակապակցություն կամ նախադասություն է, որի բաղադրիչները կորցնում են իրենց բառային ուղղակի իմաստը, ձեռք են բերում փոխաբերական իմաստ, միավորվում են մի միասնական ամբողջության մեջ, որի արդյունքում բառակապակցությունը վերաիմաստավորվում, ձեռք է բերում նոր իմաստ:

Օրինակ՝ *աշխարհով մեկ լինել, ականջ դնել, բերանը ջուր առնել, մաղով ջուր բերել, ականջները սրել:*

4. Բացատրել հետևյալ դարձվածքների իմաստը և նշել՝ որոնք են համապատասխանում նկարներին.

- *ցամաք ձորի աղվես - նիհար*
  ոտքի վրա հալվել -նիհարել
- *վիզը տանձի պոչ էր դարձել - նիհարել էր*

ոտքի վրա չորացել է -նիհարել է
մենակ քիթն էր մնացել- նիհարել էր
քթից բռնեիր՝ շունչը կտար -նիհարած էր

5. Ընկերները տարբեր էին խելքով, բայց նման էին արտաքինով՝ որպես հաստլիկներ։ Մեկի խոսքը, բառապաշարը հարուստ էր, իսկ մյուսը լավ չէր սովորել դարձվածքները և չէր հասկանում ընկերոջը։

6. Ուսումնասիրելու ենք <<Ես այսպե՛ս ասեմ, դու այնպե՛ս հասկացիր>> թեմատիկ խումբը, որի ընթացքում կկարդանք առակներն կսովորենք նոր դարձվածքներ։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Նշել ճիշտ պատասխանները.
   1. Այն կարող է լինել և՛ արձակ, և՛ չափածո։
   2. Այն ժողովրդական բանահյուսության հնագույն տեսակներից է և առկա է գրեթե բոլոր ժողովուրդների բանավոր ստեղծագործության մեջ։
   3. Լինում է հրաշապատում, իրապատում։
   4. Նրա հերոսները կենդանական և բուսական աշխարհի ներկայացուցիչներ են, իրեր, լուսատուներ և այլն։
   5. Միշտ բարին հաղթում է չարին։
   6. Սովորաբար այն բաղկացած է 2 մասից՝ սյուժեից և բարոյախոսությունից։
   7. Դրա վարպետներ են Եզովպոսը, Իվան Կռիլովը, հայ հեղինակներից՝ Մխիթար Գոշը, Վարդան Այգեկցին, Խնկո Ապերը։

2.Կռահի և նշի վերնագիրը՝ օգտվելով տարբերակներից։

1. Քիթը տնկած

Ճանճը ասաց.

-Մենք՝ որտեղի՞ց,

Վարում էինք,

Վարատեղի՛ց։

2. Հաղթողը թռավ տանիք և ամբողջ կոկորդով սկսեց ծուղրուղու կանչել ու պարծենալ իր հաղթանակով։

3. -Ես սև եմ, և բոլորն ինձ արհամարհում են: Խնդրում եմ ինձ սովորեցնես, որ քեզ պես սպիտակեմ:

4. Մարդն ասում է, որ ընկույզի տեղ ձմերուկ պիտի լիներ ծառին, և ընկույզը՝ ձմերուկի թփի վրա:

5.Գետնին տապալեց

Ծառերը փտած

Եվ, ինքն իր ուժով

Հպարտ, պարծեցավ:

6. Զարթնեց քնից ու տակից

Ծառը փորեց արմատից:

Աթաբեկ Խնկոյան «Ճանճը», *Հովսեփ Ասորի «Երկու աքլոր»*, *Մխիթար Գոշ «Ճայը և սագը»*, *Վարդան Այգեկցի «Մարդը, ընկույզը և ձմերուկը»*, *Հրաչիկ Մնոյան «Անտառն ու քամին»*, *Խնկո Ապեր «Խոզն ու ագռավը»:*

3. Ընտրել ճիշտ ձևակերպումը և բերել օրինակներ.

Ա. Այն կայուն բառակապակցություն կամ նախադասություն է, որի բաղադրիչ-ները կորցնում են իրենց բառային ուղղակի իմաստը, ձեռք են բերում փոխաբերական իմաստ, միավորվում են մի միասնական ամբողջության մեջ, որի արդյունքում բառակապակցությունը վերաիմաստավորվում, ձեռք է բերում նոր իմաստ:

Բ. Հին ժողովրդական զրույց աստվածների ու դիցաբանական հերոսների և աշխարհի ու կյանքի ծագման մասին:

4. Բացատրի դարձվածքների իմաստն քու նկատի, որ դրանք հոմանիշներ են:

5. Ամբողջական նախադասությամբ պատասխանել՝ մեկնաբանելով հասկացածը:

6. Ամբողջական նախադասությամբ պատասխանել՝ մեկնաբանելով հասկացածը:

Դաս 60. 2/1 Արջն ու օձը

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Ի՞նչ պայմանավորվեցին արջն ու օձը:
2. Ի՞նչը դուր չեկավ արջին:
3. Ինչպե՞ս վարվեց արջը:
4. Իրո՞ք օձն ուզում էր վնասել արջին: Ո՞ր արտահայտությունը կօգնի քեզ պատասխանելու այս հարցին :
5. Բացատրել բառերի իմաստը.

շահել
վայելել
սողք
բեկ-բեկ
թիկն տվել
կաթնախպեր
դի
սուրալ
արևկող

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. <<Մեկս քնի,
Մեկս հսկի,
Իրար շահենք,
Իրար պահենք,
Ընկերովի կյանք վայելնք>>:
2. Սակայն օձի սողքը բեկբեկ
Դուր չէր գալիս արջին երբեք:
3. Դրեց, սեղմեց օձի գլխին
Ու մյուս թաթն օձի մարմնով
Մինչև պոչը քաշեց թափով.
Ապա մոտիկ հոսող գետին
Հանձնեց օձի անկենդան դին:

4. Եկավ, ***ասես,*** գաղտագողի արտահայտությունից կարելի է հասկանալ, որ ուղղակի արջը կասկածեց, նրան թվաց ։
5. Բառերի բացատրությունը.
շահել -լավ վերաբերմունք վաստակել /փոխ. իմաստ./
վայելել- արժանանալ
սողք- սողալով ընթացքը, սողալը
բեկբեկ- ոլոր- մոլոր, ծուռումուռ
թիկն տվել- հենվել
կաթնախպեր- նույն կաթով են սնված ոչ հարազատ եղբայր
դի- անկենդան մարմին
սուրալ- արագ ընթանալ
արևկող - արևոտ կողմով

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.
1. Բնագրից կարդա համապատասխան հատվածը։
2. Բնագրից կարդա համապատասխան հատվածը։
3. Բնագրից կարդա համապատասխան հատվածը։
4. Բնագրից կարդա համապատասխան հատվածը, մեկնաբանի։
5. Բառարանից օգտվելով, բնագրի թեմայից կռահելով բացատրի։

Թեմատիկ պլանավորում

Դաս 61. 2/1 Արջն ու օձը

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Ի՞նչ ես կարծում՝ ովքե՞ր կարող են ընկերություն անել։
2. Քո կարծիքով՝ ընկերության համար պե՞տք է բնավորությամբ նման լինել։
3. Նկարագրե՛ք արջին և օձին։
4. Գրե՛ք արջին բնութագրող մի քանի բառեր։
5. Առակը բաժանի՛ր դրվագների, վերնագրի՛ր և շարադրի՛ր արձակ ։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Ընկերություն կարող են անել նրանք, ովքեր ազնիվ են , նվիրված և վստահում են իրար։
2. Պետք է, բայց լրիվ չի կարող։
3. Արջը բրդոտ էր, մեծ,ոժեղ, իսկ օձը բարակ էր, երկար նախշազարդ։
4. Արջը կասկածամիտ էր, փնթփնթան,վախկոտ, դաժան։
5. 1.Արջի ու օձի պայմանը
   2. Ընկերություն
   3.Կասկած
   4. Օձի դաժան մահը
   5. Վախկոտ արջը

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Արտահայտի իր կարծիքը։ Օրինակ՝
Ընկերություն կարող են անել նրանք, ովքեր ազնիվ են , նվիրված և վստահում են իրար։
2. Արտահայտի իր կարծիքը։ Օրինակ՝
Պետք է, բայց լրիվ չի կարող։
3.Նկարագրել արջի և օձի արտաքինը։
Օրինակ՝
Արջը բրդոտ էր, մեծ,ոժեղ, իսկ օձը բարակ էր, երկար նախշազարդ։
4. Բնութագրել արջին ՝ օգտվելով նրա արարքներից։
Օրինակ՝
Արջը կասկածամիտ էր, փնթփնթան,վախկոտ, դաժան։
5. Պետք է գտնի իմաստային դրվագները, դրանց հիմնական միտքը և վերնագրի։

Թեմատիկ պլանավորում

Դաս 62. 2/1 Վեճը։ Թվական

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Ինչո՞ւ էին վիճում գայլն ու աղվեսը:
2. Ի՞նչ էր խրատում նրանց ագռավը:
3. Քանի՞ հերոսներ են գործում հեքիաթում:
4. Ինչպե՞ս եղավ, որ որսորդներն ու շները բռնեցին գայլին ու աղվեսին։
5. Ո՞ր դարձվածքներին հանդիպեցիք, բացատրեք դրանց իմաստը ։
6. Առակում գտի՛ր և կարդա՛ այն արտահայտությունը, որով հեղինակը ցույց է տալիս, թե ինչ արեցին շները գայլին և աղվեսին ։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Վիճում էին, թե ում մորթու համար են որսորդներն անտառ եկել։
2. Նրանց ասում էր.
   -Հե՛յ, ժամանա՞կ եք գտել վիճելու,փախ՛ք-փրկվե՛ք, շները հասա՛ն…
3. Առակի հերոսները երեքն են՝ ագռավը, աղվեսը, գայլը ։
4. Բայց Գայն ու աղվեսն ուշադրություն չդարձրին և շարունակեցին հաշվել։ Մեկ էլ ծառերի հետևից վրա պրծան որսորդների շները և գայլին ու աղվեսին այնպե՛ս գզեցին,նրանց բուրդն այպե՛ս քամուն տվեցին, որ նրանք հազիվհազ մազապուրծ փախան։

5. Հանդիած դարձվածքներն են.

Իրար անցնել- խառնվել, շփոթվել
բուրդը գզել- գզգզել
քթի տակ խնդալ- քմծիծաղել
բուրդը քամուն տալ- գզել, ծեծել
մազերը հաշվել- ծեծել

6. Մեկ էլ ծառերի հետևից վրա պրծան որսորդների շները և գայլին ու աղվեսին այնպե՛ս գզեցին,նրանց բուրդն այպե՛ս քամուն տվեցին, որ նրանք հազիվհազ մազապուրծ փախան։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Ամբողջական նախադասությամբ պատասխանել. Վիճում էին, թե ում մորթու համար են որսորդներն անտառ եկել։
2. Բնագրից կարդա համապատասխան հատվածը։
3. Նշել հերոսներին։
4. Բնագրից կարդա համապատասխան հատվածը։
5. Դուրս գրել դարձվածքներն ու բացատրել։
6. Բնագրից կարդա համապատասխան հատվածը։

Թեմատիկ պլանավորում

Դաս 63. 2/1 Վեճը: Թվական

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1· Քո կարծիքով՝ ինչո՞ւ է հեղինակը հենց այս հերոսներին ընտրել:

2. Ի՞նչ ես կարծում՝ ինչո՞ւ պատժվեցին հերոսները:

3. Ի՞նչն է դատապարտվում առակում: Ընտրի՛ր ճիշտ պատասխանը.

- վախկոտությունը
- սնապարծությունը
- ստախոսությունը
- դավաճանությունը

4. Առակը բաժանի՛ր երեք մասի: Գրի՛ր առակի պլանը հարցական նախադասություններով:

5. Պատասխանները գրել բառերով.

1) Ո՞ր թիվն է փոքր տասնչորսից, մեծ տասներկուսից:
2) Եթե քառակուսու մի կողմը 6 սմ է, որքա՞ն կլինի նրա մակերեսը:
3) Ո՞ր թվականն է այժմ:
4) Ո՞րն է ամենամեծ եռանիշ թիվը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Նրանք նման են իրար, միշտ մրցակցում են:
2. Նրանց սնապարծությունը խանգարեց:Կրկին մրցում էին ու չէին լսում ագռավին:
3. Առակում դատապարտվում է սնապարծությունը:
4. 1. Ի՞նչ իրարանցում էր անտառում:
   2. Ինչո՞ւ էին վիճում աղվեսն ու շունը:
   3. Ի՞նչ արեցին շները:
5. Պատասխանները գրել բառերով.

1) Տասներեք
2) Երեսունվեց
3) Երկու հազար քսանմեկ
4) Ինը հարյուր իննսունինը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Արտահայտել սեփական կարծիքը։ Օրինակ՝ *Նրանք նման են իրար, միշտ մրցակցում են։*
2. Արտահայտել սեփական կարծիքը։ Օրինակ՝ *Նրանց սնապարծությունը խանգարեց։Կրկին մրցում էին ու չէին լսում ագռավին։*
3.Ընտրել ճիշտ պատասխանը.

- վախկոտությունը
- ~~սնապարծությունը~~
- ստախոսությունը
- դավաճանությունը

4. Կազմել պլան հարցերով։

1. Ի՞նչ իրարանցում էր անտառում։
2. Ինչո՞ւ էին վիճում աղվեսն ու շունը։
3. Ի՞նչ արեցին շները։

5. Պատասխանները գրել բառերով.

1) Տասներեք
2) Երեսունվեց
3) Երկու հազար քսանմեկ
4) Ինը հարյուր իննսունինը։

Դաս 64.2/1 Ճպուռն ու մրջյունը: Թվական

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1.Վերընթերցի՛ր այն տողերը, որտեղ նկարագրվում են ճպուռի ամառային օրերը:
2.Կարդացե՛ք այն հատվածը, ուր նկարագրվում է ձմեռային բնությունը:
3. Տեքստից ընտրի՛ր այն հատվածները, որոնք վերաբերում են նկարների բովանդակությանը և կարդա:
4. Կարդացե՛ք այն տողերը, որտեղ մրջյունը խիստ դատապարտում է ճպուռին:
5. Որոշե՛ք առակի հենակետային բառերը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Թռի-վռի մի ճպուռ,
   Ողջ ամառը շուռ ու մուռ,
   Երգեց, ճռռաց.
   Ճռճռաց:
2. Մին էլ, ըհը՜, ձմեռը,
   Փռեց իրա թևերը.
   Բացեց գորգը սպիտակ,
   Դաշտերն առավ ձյունի տակ:

3. 1. Թռի-վռի մի ճպուռ,
   Ողջ ամառը շուռ ու մուռ,
   Երգեց, ճռռաց.
   Ճռճռաց:

2. Զընգր-զընգր դողալով,
   Ծանր-ծանր սողալով՝
   Նա մրջյունին ասում էր.
   - Գլխիդ մատաղ, սանամե՛ր,
   Մի ճա՛ր արա շունչ առնեմ,
   Ցրտից, սովից չմեռնեմ:
   Կերակրի՛, տաքացրու՛,
   Մինչև գարուն ապրեցրու:

4. - Ի՜նչ խաբար է, սանի՛կս,
Զարմանում եմ, ջանի՛կս,
Չաշխատեցի՞ր ամառը,
Ասա՛, ի՞նչ էր պատճառը:
- Երգո՞ւ մ էիր... Շատ բարի,
Այժմ էլ բռնի վեր-վերի,
Քամին ծափ տա, դու պարի՛:

5. Հենակետային բառերը կարևոր բառերն են , որոնցով կկարողանան պատմել առակը, օրինակ՝ ճպուռ, մրջյուն, երգում էինք, պարի, ճռռաց,ճռճռաց,ամառ, զընգր-զընգր դողալով, սանամեր,սանիկ, ամառ, ձմեռ, խոտեր, բուրավետ, սպիտակ գորգ:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Գտնել և ընթերցել համապատասխան տողերը:
2. Գտնել և ընթերցել համապատասխան տողերը:
3. Գտնել և ընթերցել համապատասխան տողերը:
4. Գտնել և ընթերցել համապատասխան տողերը:
5. Դուրս բերել հենակետային բառերը:

Դաս 65.2/1 Ճպուռն ու մրջյունը: Թվական

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Պատմե՛ք, թե ինչ էր անում ճպուռն ամռանը:
2. Ի՞նչ պատահեց, երբ ձմեռը եկավ:
3. Ինչը՞ ստիպեց ճպուռին գնալ մրջյունի մոտ:
4. Ի՞նչ պատասխանեց մրջյունը ճպուռին:
5. Վերականգնի՛ր առածները և նշի՛ր՝ որն է արտահայտում առակի իմաստը:

Աջով տուր, *այն էլ կինձես:*

Ինչ որ ցանես, *որ ձախով առնես:*

Լավություն արա, *մարդը մարդուն կհանդիպի:*

Սարը սարին չի հանդիպի, *ջուրը ցցիր:*

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Ճպուռն ամռանը իր ընկերների հետ երգում էր ու պարում ողջ օրը:Եղանակը լավն էր, ամեն թփի տակ լի սեղաններ կային:
2. Երբ ձմեռը եկավ, ցրտերն ընկան, ձյունը ծածկեց ամեն բան: Ուտելիք չկար, ապրելու, գիշերելու տեղ չկար:
3. Քանի որ ցուրտ էր ու ճպուռը բույն չուներ, ուտելիք չուներ պաշարած, ստիպված գնաց մրջյունի մոտ:
4. Մրջյունը նրան հասկացրեց, որ չի օգնելու, քանի որ ճպուռը միայն վայելել է ամառը ու չի աշխատել ձմռան համար:

5. Վերականգնել առածները և նշել ճիշտ պատասխանը.

Աջով տուր, *որ ձախով առնես:*

- *Ինչ որ ցանես,* *այն էլ կհնձես:*

Լավություն արա, *ջուրը գցիր:*

Սարը սարին չի հանդիպի *մարդը մարդուն կհանդիպի:*

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Պատմելով վերարտադրի համապատասխան հատվածը:
2. Պատմելով վերարտադրի համապատասխան հատվածը:
3. Պատմելով վերարտադրի համապատասխան հատվածը, եզրակացություն անի:
4. Հետևություն անի և իր բառերով պատասխանի:
5. Վերականգնիլ առածները և նշի ճիշտ պատասխանը:

Դաս 66.2/1 Առյուծն ու մուկը: Թվական

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Ի՞նչ պատահեց առյուծին:
2. Ի՞նչ առաջարկեց մուկը առյուծին:
3. Ինչու՞ առյուծը քահ-քահ ծիծաղեց, բայց բաց թողեց նրան :
4. Մուկն ինչպե՞ս օգնեց առյուծին ինչու՞:
5. Ընթերցի՛ր՝ որ տողերում է թաքնված առակի հիմնական իմաստը:
6. Երախտիք և հատուցել բառերով կազմել բարդ բառ և բացատրել իմաստը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Քնած առյուծի մարմնի վրայով մի մուկ վազեց: Առյուծը զարթնեց, բռնեց նրան և, այն է, ուզում էր խժռել, բայց մուկը խնդրեց բաց թողնել իրեն:
2. Մուկը խնդրեց բաց թողնել իրեն՝ հավատացնելով, որ բարությամբ կհատուցի իր փրկության համար:
3. Նա չհավատաց, որ մուկը, որ այդքան փոքր է, կարող է իրեն օգնել:
4. Մուկը, լսելով, նրա հառաչանքները, իսկույն ևեթ վազեց, կրծեց պարանը և ազատեց նրան: Նա խոստացել էր, որ բարությամբ կհատուցի:
5. -Այն ժամանակ դու ծիծաղեցիր ինձ վրա և կարծես թե չհավատացիր ինձ, իսկ հիմա իմացիր, որ մուկն էլ կարող է երախտահատույց լինել լավության համար: ***Առակը ցույց է տալիս, որ նույնիսկ ամենից ուժեղներին ճակատագիրը երբեմն ստիպում է ամենից թույլերի կարիքն զգալ:***
6. Երախտիք + հատուցել = երախտահատույց - շնորհակալ

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Բնագրից կարդալ համապատասխան նախադասությունը:
2. Բնագրից կարդալ համապատասխան նախադասությունը:
3. Պատասխանել սեփական բառապաշարով:
4. Բնագրից կարդալ համապատասխան նախադասությունը: Մեկնաբանել:
5. Բնագրից կարդալ համապատասխան նախադասությունները:
6. Կազմել բարդ բառ և բացատրել իմաստը:

Դաս 67.2/1 Առյուծն ու մուկը: Թվական

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Ինչո՞ւ է այս ստեղծագործությունը կոչվում առակ:
   Ապացուցե՛ք, որ այն առակ է:
2. Բաժանել դրվագների և կազմել պլան հարցերով:
3. Տրված բառերով կազմել բարդ բառեր: Ո՞ր հերոսին կվերագրեք :

Արագ, ահեղ, քաջ, դանդաղ, թավ, արքա:

Մազ, վազել, քայլ, վայել, գոչ, սիրտ:

4. Բնութագրել մկանը:
5. Դուրս գրի՛ր «Ուզո՞ւմ ես ավելին իմանալ» տեքստի քանակական թվականները, գրի՛ր բառերով:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Նրա հերոսները կենդանիներ են, որ խոսում են, մտածում են մարդու պես:Վերջում ունի բարոյախրատական մաս: Գովաբանում է ազնվությունը, բարությունը, երախտահատույց լինելը և քննադատում է մեծամտությունը:
2. Կազմել պլան՝ հարցերով:
   1. Ի՞նչ էր վազում առյուծի վրայով:
   2. Ի՞նչ խնդրեց մուկը:
   3. Ի՞նչ արեց առյուծը:
   4. Ի՞նչ պատահեց առյուծին:
   5. Ինչպե՞ս օգնեց մուկը:
   6. Ի՞նչ հասկացավ առյուծը:
3. Տրված բառերով կազմել բարդ բառեր: Հերոսին վերագրել :

Արագավազ, ահեղագոչ, քաջասիրտ, դանդաղաքայլ, թավամազ, արքայավայել:

Այս բառերը վերաբերում են առյուծին:

4. Մուկը բարի, շնորհակալ, խոստումը պահող կենդանի էր: Պստիկ էր , բայց ճստիկ էր:
5. Քանակական թվականները ցույց են տալիս առարկայի քանակ:Տեքստի քանակական թվականներն են՝ 50- հիսուն, 900-ինը հարյուր, 3-երեք, 80- ութսուն, 1200- հազար երկու հարյուր, 2100- երկու հազար հարյուր:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Նշել առակի կարևորագույն հատկանիշները։ Օրինակ՝ *Նրա հերոսները կենդանիներ են, որ խոսում են, մտածում են մարդու պես։Վերջում ունի բարոյախրատական մաս։ Գովաբանում է ազնվությունը, բարությունը, երախտահատույց լինելը և քննադատում է մեծամտությունը։*
2. Կազմել պլան՝ հարցերով։
3. Տրված բառերով կազմել բարդ բառեր։ Հերոսին վերագրել ։
4. Բնութագրել մկանը։ Օրինակ՝ *Մուկը բարի, շնորհակալ, խոստումը պահող կենդանի էր։ Պստիկ էր , բայց ճստիկ էր։*
5. Դուրս գրել տեքստից քանակական թվականները և գրել բառերով։

50- հիսուն, 900-ինը հարյուր, 3-երեք, 80- ութսուն, 1200- հազար երկու հարյուր, 2100- երկու հազար հարյուր։

Դաս 68.2/1 Տակառի լողը: Թվական

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Ի՞նչ էր քշվում հսկա գետում:
2. Ի՞նչ մեծամիտ ձայն էր հնչում տակառից:
3. Ի՞նչ արձագանք լսվեց նավից:
4. Ուշադի՛ր դիտեք նկարը: Տեքստից առանձնացրե՛ք այն հատվածը, որը վերաբերում է նկարի բովանդակությունը:
5. Տրված բառաշարքից ընտրի՛ր ***հաղթ, անշեղ*** բառերի հոմանիշները:
   Հաղթական, ուղիղ, չշեղվող, ուղղագիծ, մեծամիտ, սրընթաց, հզոր, ուղղամիտ, զորավոր:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Հսկա գետում հոսանքն ի վար
   Քշվում էր մի դատարկ տակառ:
2. Եվ մեծամիտ ձայն էր տալիս.

- Ճամփա՛ տվեք, ե՛ս եմ գալիս՝
  Իմ մեծ լողով հաղթ ու անշեղ,
  Նավերն իմ դեմ ի՞նչ են՝ տաշեղ…



3. - Ո՛վ բթամիտ, դատա՛րկ տակառ,
   Կյանքը գործ է և ոչ թե ճառ.
   Դու որպեսզի ապացուցես,
   Որ իսկապես լողալ գիտես
   Եվ հզոր ես՝ մեծ ուժի տեր,
   Պիտի լողաս հոսանքն ի վեր…

4. Հսկա գետում հոսանքն ի վար
   Քշվում էր մի դատարկ տակառ:
   Եվ մեծամիտ ձայն էր տալիս.
   -Ճամփա՛ տվեք, ե՛ս եմ գալիս՝
   Իմ մեծ լողով հաղթ ու անշեղ,
   Նավերն իմ դեմ ի՞նչ են՝ տաշեղ…

5. Տրված բառաշարքից ընտրել ***հաղթ, անշեղ*** բառերի հոմանիշները:

Հաղթ- հաղթական, զորավոր, հզոր,
անշեղ- ուղղամիտ, ուղիղ, չշեղվող, ուղղագիծ:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Բնագրից կարդալ համապատասխան հատվածը:
2. Բնագրից կարդալ համապատասխան հատվածը:
3. Բնագրից կարդալ համապատասխան հատվածը:
4. Բնագրից կարդալ համապատասխան հատվածը:
5. Տրված բառաշարքից ընտրել ***հաղթ, անշեղ*** բառերի հոմանիշները:
   Հաղթ- հաղթական, զորավոր, հզոր,
   անշեղ- ուղղամիտ, ուղիղ, չշեղվող, ուղղագիծ:

Դաս 69.2/1 Տակառի լողը: Թվական

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Վերընթերցի՛ր նավի խոսքերը համապատասխան հնչերանգով (քմծիծաղով):
2. Առակի բովանդակությունը ներկայացրո՛ւ ուրախ, զայրացած, ծաղրանքով, տխուր:
3. Ընթերցի՛ր առակը՝ ձայնի միջոցով ներկայացնելով վախ, զարմանք, թախիծ:
4. Փակագծերից ընտրի՛ր ճիշտ բառը և լրացրո՛ւ նախադասությունները:

Մեկ րոպեն…… վայրկյան է։ (վացուն, վաթսուն)

Մեկ դարը …..տարի է։ (հարուր, հարյուր)

…..ը բաղկացած է ութ արմատից և սուն ածանցից։ (ութսուն, ութանասուն)

….ն ոչ թե օղակ է չնչին, այլ նշանն է ոչնչի։ (զերո, զրո)

5. Ընտրել, ո՞ր առածն է արտահայտում առակի հիմնական միտքը:

- Ինքը՝ պստիկ, լեզուն՝ մեծ:
  Մեծախոսի ձեռքից բան չի գա:
  Քամին փչի՝ անտառը խշշա:
  Քամին քարից բան չի տանի:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Հնչերանգը խոսքային արտահայտչականության գլխավոր միջոցն է: Գեղարվեստական ստեղծագործության ընթերցանության ընթացքում հնչերանգն ընտրվում է ըստ տեքստի իմաստի, հեղինակի ասելիքի: Պետք է ուշադրություն դարձնել ձայնին, տրամաբանական շեշտին, կետադրությանը, հույզերին:
2. Հնչերանգը խոսքային արտահայտչականության գլխավոր միջոցն է: Գեղարվեստական ստեղծագործության ընթերցանության ընթացքում հնչերանգն ընտրվում է ըստ տեքստի իմաստի, հեղինակի՝ ընթերցողի, պատմողի ասելիքի:
3. Հնչերանգը խոսքային արտահայտչականության գլխավոր միջոցն է: Գեղարվեստական ստեղծագործության ընթերցանության ընթացքում հնչերանգն ընտրվում է ըստ տեքստի իմաստի, հեղինակի՝ ընթերցողի, պատմողի ասելիքի:
4. Փակագծերից ընտրել ճիշտ գրությամբ բառը և լրացնել նախադասությունները:

Մեկ րոպեն վաթսուն վայրկյան է։ (վացուն)

Մեկ դարը հարյուր տարի է։ (հարուր)

Ութսունը բաղկացած է ութ արմատից և սուն ածանցից։ (ութանասուն)

Զրոն ոչ թե օղակ է չնչին, այլ նշանն է ոչնչի։ (զերո)

5. Ընտրել, ո՞ր առածն է արտահայտում առակի հիմնական միտքը։

- Ինքը՝ պստիկ, լեզուն՝ մեծ

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Ճիշտ հնչերանգով կարդա։
2.Ճիշտ հնչերանգով ներկայացնի։
3.Ճիշտ հնչերանգով կարդա։
4. Փակագծերից ընտրել ճիշտ գրությամբ բառը և լրացնել նախադասությունները։
5. Ընտրել, ո՞ր առածն է արտահայտում առակի հիմնական միտքը։

- Ինքը՝ պստիկ, լեզուն՝ մեծ։
  Մեծախոսի ձեռքից բան չի գա։
  Քամին փչի՝ անտառը խշշա։
  Քամին քարից բան չի տանի։

Դաս 70.3/1 Այրի կինը և որդին: Թվական

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Ի՞նչ էր անում այրի կինը: Ընթերցե՛ք այդ տողերը:
2. Ինչպե՞ս բացատրեց իր արարքը տղային այրի կինը: Ընթերցե՛ք այդ տողերը:
3. Ինչո՞ւ որդին շուտ եկավ տուն: Ընթերցե՛ք համապատասխան տողերը:
4. Որդին ի՞նչ պարզաբանում տվեց մորը: Ընթերցե՛ք համապատասխան տողերը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Մի այրի կին ուներ տասը այծ և մի որդի: Եվ ամեն օր որդին այծերին տանում էր արոտ և մայրն ամեն օր մի շերեփ ջուր էր լցնում կաթի մեջ և փոխ տալիս հարևաններին:
2. Մայրն ասաց. «Որդի, մեր կաթը քիչ է, նրա համար եմ անում, որ մեր կաթը մի քիչ ավելի լինի, որ ձմռանը մեզ Թացան լինի»:
3. Իսկ մի օր, երբ որդին այծերին արոտ էր տարել, երկնքում ծնվեց մի փոքր ամպ, և անձրև եկավ, և հեղեղ եկավ և այծերը սրբեց լցրեց գետը: Որդին տուն եկավ արևով և դատարկ և ձեռքին միայն փայտը:
4. Որդին ասաց. «Մայրիկ, այն մի շերեփ ջուրը, որ խառնում էիր կաթին և փոխ տալիս հարևաններին, հավաքվեց և հեղեղ դարձավ և եկավ մեր այծերը տարավ լցրեց գետը»:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Բնագրից ընտրել և ընթերցել համապատասխան տողերը:
2. Բնագրից ընտրել և ընթերցել համապատասխան տողերը:
3. Բնագրից ընտրել և ընթերցել համապատասխան տողերը:
4. Բնագրից ընտրել և ընթերցել համապատասխան տողերը:

Թեմատիկ պլանավորում

Դաս 71.3/1 Այրի կինը և որդին: Թվական

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Կազմել պլան հարցական նախադասություններով:
2. Պատմել իբրև դեպքերի մասնակից՝ ըստ պլանի:
3. Եթե հանդիպեիր այրի կնոջը կամ որդուն, ի՞նչ կասեիր նրանց: Գրի՛ր այն նամակի ձևով:
4. Քո կարծիքով՝ իսկապես մի շերեփ ջո՞ւրն էր հեղեղ դարձել, թե՞…
5. Ի՞նչ սովորեցրեց ձեզ այս առակը:
6. Վերականգնի՛ր խառնագիրը և գտի՛ր, թե «ինչն է թափվում երկնքից և դառնում հեղեղ» :

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Կազմել պլան հարցական նախադասություններով:Օրինակ՝

1.Ի՞նչ էր անում այրի կինը:

2. Ինչպե՞ս բացատրեց իր արարքը տղային այրի կինը:

3. Ինչո՞ւ որդին շուտ եկավ տուն:

4. Որդին ի՞նչ պարզաբանում տվեց մորը:

2. Պատմել իբրև դեպքերի մասնակից՝ ըստ պլանի: Պատմել առաջին դեմքով, այսինքն՝ պատմել այնպես, կարծես իրենք էլ այդ ստեղծագործության հերոսներից են և մասնակցել են դեպքերին: Իբրև մասնակից պատմելիս սովորողները ներկայացնում են իրենց կարծիքն ու վերաբերմունքը գործող անձանց ու դեպքերի վերաբերյալ, ներկայացված գործողությունները պատմում են իրենց տեսանկյունից):

3. Նամակ գրելու կանոնները. Ծանոթություն, հարգալից դիմելաձևի պահպանում, խորհուրդ, կարծիք:

4. Փոխաբերական իմաստով է տղան ասում, որ մի շերեփ ջուրն է հեղեղ դարձել, այսինքն խարդախությունը պատժվել է արդարությամբ:

5. Որ պետք է միշտ արդար աշխատել,որ չտուժես երբեք, չվնասես ոչ ոքի:

6.Վերականգնի՛ր խառնագիրը և գտի՛ր, թե «ինչն է թափվում երկնքից և դառնում հեղեղ» (տրված է «արդարություն» բառի խառնագիրը): Գրի՛ր այդ բառի հականիշները:



արդարություն- անարդարություն, խարդախություն, խաբեբայութուն,անազնվություն

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Կազմել պլան հարցական նախադասություններով։Օրինակ՝

1.Ի՞նչ էր անում այրի կինը։

2. Ինչպե՞ս բացատրեց իր արարքը տղային այրի կինը։

3. Ինչո՞ւ որդին շուտ եկավ տուն։

4. Որդին ի՞նչ պարզաբանում տվեց մորը։

2. Պատմել իբրև դեպքերի մասնակից՝ ըստ պլանի։ Պատմել առաջին դեմքով, այսինքն՝ պատմել այնպես, կարծես իրենք էլ այդ ստեղծագործության հերոսներից են և մասնակցել են դեպքերին։

3. Նամակ գրել 3-4 նախադասությամբ։

Ես …… եմ։ Կարդացի ձեր պատմությունը։Ես հասկանում եմ, որ ձեզ դժվար է մենակ պահել ձեր որդուն, բայց խարդախություն, իրոք, պետք չէ անել։ Ձեր հարևանները առանց ոչնչի էլ ձեզ կօգնեին, մի քիչ շատ մթերք կտային։ Բարի մարդիկ գնահատում են ազնվությունը։

Ձեր տղային կուզեի ասել՝ լավ է, որ հասկացել է ու ազնիվ կապրի։

4-րդ դասարանի աշակերտ

4. Ամբողջական նախադասությամբ պատասխանի,կռահի, որ փոխաբերական իմաստ ունի արտահայտությունը։

5.Եզրահանգում անել։ Օրինակ՝ *Որ պետք է միշտ արդար աշխատել,որ չտուժես երբեք, չվնասես ոչ ոքի։*

Թեմատիկ պլանավորում

Դաս 72. 2/1 Առյուծն ու նապաստակը: Թվական

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Ովքե՞ր էին առակի հերոսները:
2. Առյուծն ինչո՞ւ բաց թողեց նապաստակին:
3. Առյուծն ի՞նչ հույսով վերադարձավ նապաստակի մոտ:
4. Ի՞նչ մտածեց առյուծը, երբ նապաստակին էլ չգտավ:
5. Ո՞րն էր առակի գլխավոր միտքը:

6. Խմբավորել թվականները. քանակականները դարձնել դասական և՝ հակառակը.

չորրորդ, երեք, տասը, իններորդ, իննսուն, երեսուն, քառասուն, տասնչորս, տասներեք, հարյուրերորդ, ութսուներորդ:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Առակի հերոսներն էին առյուծը, նապաստակն ու եղջերուն:
2. Նապաստակին թողեց ու ընկավ եղջերուի ետևից, իսկ նապաստակը աղմուկից զարթնեց ու փախավ:
3. Առյուծը շատ վազեց եղջերուի ետևից, բայց չկարողացավ բռնել և վերադարձավ այնտեղ, որտեղ թողել էր նապաստակին:
4. Տեսնելով, որ նա էլ արդեն չքացել է, ասաց.«Տեղն է ինձ, ձեռքիս որսը բաց թողեցի և դատարկ հույսի ետևից ընկա»:
5. Մարդիկ, ընկնելով շատի ետևից, կորցնում են նաև քիչը:

6. Խմբավորել թվականները. քանակականները դարձնել դասական և՝ հակառակը.

քանակական թվական- երեք, տասը, իննսուն, երեսուն, քառասուն, տասնչորս, տասներեք,

դասական թվական- չորրորդ, , իններորդ, հարյուրերորդ, ութսուներորդ:

չորրորդ- չորս, երեք- երրորդ , տասը-տասներորդ, իններորդ- ինը, իննսուն- իննսուներորդ, երեսուն- երեսուներորդ, քառասուն- քառասուներորդ, տասնչորս- տասնչորսերորդ, տասներեք- տասներեքերորդ, հարյուրերորդ- հարյուր, ութսուներորդ- ութսուն:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Նշել ճիշտ տարբերակը.

Ա. Առյուծը

Բ. Առյուծը, նապաստակը, եղջերուն

Գ. Առյուծը, նապաստակը, վագրը

2. Կարդալ բնագրից համապատասխան տողերը։

3. Կարդալ բնագրից համապատասխան տողերը։

4. Կարդալ բնագրից համապատասխան տողերը։

5. Ընտրիր այն միտքը, որն արտահայտում է առակի գաղափարը (ասելիքը)։

- Երկու նապաստակի ետևից ընկնողը ոչ մեկին չի հասնի։
- Մարդիկ, ընկնելով շատի ետևից, կորցնում են նաև քիչը։
- Պետք չէ բավարարվել քչով, պետք է ձգտել ավելիին հասնել։

Դաս 73. 2/1 Առյուծն ու նապաստակը: Թվական

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Ի՞նչ նկատի ունի առյուծը, երբ ասում է, որ դատարկ հույսի հետևից ընկավ:
2. Առյուծն ինչո՞ւ հանդիմանեց ինքն իրեն:
3. Ի՞նչն է դատապարտելի առյուծի արարքի մեջ:
4. Այս առակը գրելով՝ հեղինակն ի՞նչ նպատակ էր հետապնդում:
5. Բառաշարքից ընտրի՛ր համապատասխան բառերը և տեղադրի՛ր նախադասության մեջ: Ըստ կազմության ինչպիսի՞ն են բառաշարքի բառերը:

(Ո՞ր) առյուծը (ինչպե՞ս) վազում էր եղջերվի հետևից:

(դանդաղաշարժ, հզոր, արագ, շնչակտուր, անզոր)

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Նապաստակը քնած էր և կարող էր հանգիստ բռնել, իսկ եղջերուն արթուն էր և հաստատ չգիտեր կհասնի՞ նրան:
2. Հասկացավ, որ անխելքություն է արել, ագահություն է արել և զրկվել որսից:
3. Դատապարտվում է ագահությունը:
4. Ուզում էր սովորեցնել գոհանալ քչով և ճիշտ գնահատել ունեցածն ու հնարավորությունը:
5. Ըստ հարցերի տեղադրել բառերն ու նշել դրանց կազմությունը:

Հզոր առյուծը արագ վազում էր եղջերվի հետևից:

Դանդաղաշարժ առյուծը շնչակտուր վազում էր եղջերվի հետևից:

դանդաղաշարժ -բարդ

հզոր- պարզ

արագ- պարզ

շնչակտուր- բարդ

անզոր- ածանցավոր

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Պատասխանել ամբողջական նախադասությամբ:
2. Պատասխանել ամբողջական նախադասությամբ:
3. Պատասխանել ամբողջական նախադասությամբ:
4. Պատասխանել ամբողջական նախադասությամբ:

5. Ըստ հարցերի տեղադրել բառերն ու նշել դրանց կազմությունը։

1.Հզոր առյուծը արագ վազում էր եղջերվի հետևից։

2.Դանդաղաշարժ առյուծը շնչակտուր վազում էր եղջերվի հետևից։

դանդաղաշարժ -բարդ հզոր- պարզ

շնչակտուր- բարդ արագ- պարզ

անզոր- ածանցավոր

Դաս 74. 2/1 Շախմատ

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Ո՞ր զինվորներին են անվանում անցունակ ։
2. Ի՞նչ նկատի ունի հեղինակը՝ ասելով ***մեկտեղ չեն գործում*** արտահայտությունը։
3. Ընթերցե՛ք նախ Գոռի, ապա Վաչեի խոսքերը՝ նրանց մտքերին համապատասխանող հնչերանգով։
4. Կարդա՛ ամենակարևոր նախադասությունը։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Ո՞ր զինվորներին են անվանում անցունակ

Անցունակ զինվոր – զինվոր, որի ուղղաձիգում չկան մրցակցի զինվորներ, իսկ հարևան ուղղաձիգներում կա՛մ չկան մրցակցի զինվորներ, կա՛մ դրանք չեն հարվածում այն դաշտերը, որոնցով զինվորը պետք է անցնի վերածվելու ճանապարհին։

2. Նկատի ունի միասին չեն գործում, աշխատում, միասնական չեն։

3. Ընթերցե՛ք նախ Գոռի, ապա Վաչեի խոսքերը՝ նրանց մտքերին համապատասխանող հնչերանգով։

4. Կարդալ ամենակարևոր նախադասությունը։

Իսկ որտեղ կա սեր ու միություն,
Այնտեղ չի լինի երբեք պարտություն։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Բացատրել արտահայտությունը՝ հիշելով շախմատի դասերը։
2. Բացատրել արտահայտությունը։
3. Ընթերցել երկխոսությունը։
4. Ընթերցել վերջին տողերը։

Դաս 75. 2/1 Շախմատ

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1) Գրել մեկ նախադասություն, որն արտահայտում է տեքստի հիմնական իմաստը:
2) Գրել մեկ արտահայտություն, որը կարևոր է առակի մեջ:
3) Գրել մեկ բառ, որն արտահայտում է առակի իմաստը:
4) Ի՞նչ գույն ունի առակը:
5) Ո՞րն է առակի բովանդակության լավ կողմը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1) **Գրել մեկ նախադասություն, որն արտահայտում է տեքստի հիմնական իմաստը:**
(Օրինակ՝ Սերն ու միությունն ամենուր հաղթում են):
2) **Գրել մեկ արտահայտություն, որը կարևոր է առակի մեջ:**
(Օրինակ՝ սեր ու միություն):
3) **Գրել մեկ բառ, որն արտահայտում է առակի իմաստը:**
(Օրինակ՝ միություն):
4) **Ի՞նչ գույն ունի առակը:**
(Օրինակ՝ դեղին, կարմիր):
5) **Ո՞րն է առակի բովանդակության լավ կողմը:**
(Օրինակ՝ Առակում գովերգվում է համերաշխությունը, սերը, միությունը):
Խմբերը քննարկում են իրենց գրառումները և մեկնաբանում:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1.Լրացնել.

1) **Գրել մեկ նախադասություն, որն արտահայտում է տեքստի հիմնական իմաստը:**
(Օրինակ՝ Սերն ու միությունն ամենուր հաղթում են):
2) **Գրել մեկ արտահայտություն, որը կարևոր է առակի մեջ:**
(Օրինակ՝ սեր ու միություն):
3) **Գրել մեկ բառ, որն արտահայտում է առակի իմաստը:**
(Օրինակ՝ միություն):
4) **Ի՞նչ գույն ունի առակը:**
(Օրինակ՝ դեղին, կարմիր):
5) **Ո՞րն է առակի բովանդակության լավ կողմը:**

(Օրինակ՝ Առակում գովերգվում է համերաշխությունը, սերը, միությունը):
Խմբերը քննարկում են իրենց գրառումները և մեկնաբանում:

Դաս 76. 1/1 Ամփոփի՛ր իմացածդ, ստուգի՛ր ինքդ քեզ։

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1.Լրացնել աղյուսակը.

Վերնագիր	*Հիմնական հերոս(ներ)*	*Բովանդակությունը՝ մեկ նախադասությամբ (Ինչի՞ մասին է):*	*Ի՞նչ է սովորեցնում «առակ – ուսուցիչը»:*	*Բանալի բառեր և արտահայտություններ*
Ճպուռն ու մրջյունը	Ճպուռ, մրջյուն	Մրջյունը մերժեց ճպուռին և ձմռան ցրտին ներս չթողեց իր տուն:	Ծուլությունը ամենամեծ չարիքն է:	ցրտաշունչ օրեր քաղցած սովից մեռնել կերակրել ապրեցնել աշխատել
Շախմատ				
Այրի կինը և որդին				
Արջն ու օձը				
Վեճը				
Տակառի լողը				
Առյուծն ու մուկը				
Առյուծն ու նապաստա - կը				

2. Իրար միացրո՛ւ աջ և ձախ սյունակների բառերը և ստացիր բարդ բառեր։

թանկ	գիր
հեքիաթ	արժեք
դաս	պետ
նավ	ղեկ

3. Ամիսների շարքում ո՞րերորդն են հետևյալ ամիսները՝գրել բառերով.

դեկտեմբեր

հունվար

հունիս

օգոստոս

հուլիս

մարտ

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Թեմատիկ խմբի բոլոր նյութերը։
2. Երկու պարզ բառից ստանալ բարդ բառ։
3. Ամիսների հերթականությունը։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1.Լրացնել աղյուսակը.

Վերնագիր	*Հիմնական հերոս(ներ)*	*Բովանդակությունը՝ մեկ նախադասու-թյամբ (Ինչի՞ մասին է):*	*Ի՞նչ է սովորեցնում «առակ – ուսուցիչը»:*	*Բանալի բառեր և արտահայտու-թյուններ*
Ճպուռն ու մրջյունը	Ճպուռ, մրջյուն	Մրջյունը մերժեց ճպուռին և ձմռան ցրտին ներս չթողեց իր տուն:	Ծուլությունը ամենամեծ չարիքն է:	ցրտաշունչ օրեր քաղցած սովից մեռնել կերակրել ապրեցնել աշխատել

Շախմատ				
Այրի կինը և որդին				
Արջն ու օձը				
Վեճը				
Տակառի լողը				
Առյուծն ու մուկը				
Առյուծն ու նապաստա-կը				

2. Իրար միացնել աջ և ձախ սյունակների բառերը և ստանալ բարդ բառեր։

թանկ	գիր	թանկարժեք
հեքիաթ	արժեք	հեքիաթագիր
դաս	պետ	դասղեկ
նավ	ղեկ	նավապետ

3. Ամիսների շարքում ո՞րերորդն են հետևյալ ամիսները՝գրել բառերով.

դեկտեմբեր - տասներկուերորդ
հունվար- առաջին
հունիս-վեցերորդ
օգոստոս- ութերորդ
հուլիս- յոթերորդ
մարտ- երրորդ

Թեմատիկ պլանավորում

Դաս 77. 1/1 «Յոթ սարից, յոթ ձորից այն կողմ» թեմայի մուտք:

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Ո՞րտեղ եք հանդիպում **«Յոթ սարից, յոթ ձորից այն կողմ»** արտահայտությունը:
2. Ի՞նչ հեքիաթագիրներ գիտես՝ թվարկի՛ր:
3. Ինչպե՞ս են սկսվում հեքիաթները:
4. Ո՞վքեր են հերոսները:
5. Հեքիաթի ի՞նչ տեսակներ գիտեք :

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. **«Յոթ սարից, յոթ ձորից այն կողմ»** արտահայտությունը հանդիպում են հեքաթներում:
2. Նշել հեքիաթագիրների, օրինակ՝ Հովհաննես Թումանյան, Ղազարոս Աղայան, Գրիմ եղբայրներ, Շառլ Պերո, Հանս Քրիստիան Անդերսեն:
3. Հեքիաթներն սկսվում են՝ «Լինում է , չի լինում…», «Կար-չկար…», «Ժուկով-ժամանակով…», «Յոթ սարից, յոթ ձորից այն կողմ…» արտահայտություններով:
4. Հեքիաթներն ավարտվում են՝ «Երկնքից երեք խնձոր ընկավ», «Չարն այնտեղ, բարին այստեղ», «Նրանք հասան իրենց մուրազին, դուք էլ հասեք ձեր մուրա-զին», « Ապրեցին երկար ու երջանիկ»:

5. Հեքիաթները լինում են հրաշապատում, կենդանական, արկածային, կենցաղային:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Ընտրել ճիշտ պատասխանը.

Ա. Առակ Բ. Հեքաթ

2. Նշել իր իմացած հեքիաթագիրներին։ Օրինակ՝ Հովհաննես Թումանյան, Ղազարոս Աղայան, Գրիմ եղբայրներ, Շառլ Պերո, Հանս Քրիստիան Անդերսեն։

3. Ընտրել ճիշտ պատասխանները.

Ա. «Լինում է , չի լինում…» Զ. «Յոթ սարից, յոթ ձորից այն կողմ…»

Բ.«Կար-չկար…» Է. «Երկնքից երեք խնձոր ընկավ»

Գ.«Չարն այնտեղ, բարին այստեղ» Ը. «Ժուկով- ժամանակով…»

Դ.«Նրանք հասան իրենց մուրազին, դուք էլ հասեք ձեր մուրազին»

Ե.« Ապրեցին երկար ու երջանիկ»

4. Ընտրել ճիշտ պատասխանները.

Ա. «Լինում է , չի լինում…» Զ. «Յոթ սարից, յոթ ձորից այն կողմ…»

Բ.«Կար-չկար…» Է. «Երկնքից երեք խնձոր ընկավ»

Գ.«Չարն այնտեղ, բարին այստեղ» Ը. «Ժուկով- ժամանակով…»

Դ.«Նրանք հասան իրենց մուրազին, դուք էլ հասեք ձեր մուրազին»

Ե.« Ապրեցին երկար ու երջանիկ»

5. Նշել այն տողը, որտեղ պատասխանները ճիշտ են.

Ա. հրաշապատում, պատմական, կենդանական, արկածային, կենցաղային

Բ. հրաշապատում, կենդանական, արկածային, կենցաղային, իրապատում

Թեմատիկ պլանավորում

Դաս 78. 2/1 Ամենաթանկը հավասարների մեջ։ Նախադասության տեսակներն ըստ հաղորդակցման նպատակի

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Քանի՞ հերոսներ են գործում հեքիաթում։
2. Ի՞նչ պայման դրեց թագավորը երկրի կառավարիչ ընտրելիս։
3. Իմաստունն ինչպե՞ս բացատրեց իր ընտրությունը. արձանն ինչո՞ւ էր ամենաթանկն իր հավասարների մեջ։
4. Այս առած-ասացվածքներից որն է համապատասխանում հեքիաթի գլխավոր իմաստին։

Մի ականջից մտնել մյուսից դուրս գալ։
Ականջից մտածը լեզվի ծայրին է։
Շատ գիտես, քիչ խոսիր։
Լռությունը ոսկի է։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Հեքիաթի հերոսներն են՝ թագավորը, իմաստունը։
2. - Ով այս միանման արձանիկների մեջ գտնի ամենաթանկը, նա էլ կլինի իմ երկրի կառավարիչը։
3. -Իսկ երրորդն էլ նման է այն մարդուն, որն իր ամեն լսածը խոր ըմբռնում է, պահում ներսում։
4. Այս առած-ասացվածքներից հեքիաթի գլխավոր իմաստին համապատասխանում է «*Լռությունը ոսկի է*» ասացվածքը։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Պատասխանել ամբողջական նախադասությամբ։
2. Բնագրից կարդա համապատասխան նախադասությունը։
3. Բնագրից կարդա համապատասխան նախադասությունը։
4. Ընտրել ճիշտ պատասխանը.

- *Մի ականջից մտնել մյուսից դուրս գալ։*
- *Ականջից մտածը լեզվի ծայրին է։*
- *Շատ գիտես, քիչ խոսիր։*
- *Լռությունը ոսկի է։*

Թեմատիկ պլանավորում

Դաս 79. 2/1 Ամենաթանկը հավասարների մեջ: Նախադասության տեսակներն ըստ հաղորդակցման նպատակի

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Վերարտադրել հեքիաթը երրորդ դեմքով,պատասխանելով հետևյալ հարցերին.

1. Ի՞նչ պայման դրեց թագավորը երկրի կառավարիչ ընտրելիս:

2. Ո՞վ լուծեց հանելուկը:

3. Ինչպե՞ս իմաստունը բացատրեց հանելուկի պատասխանը:

2. Ի՞նչ ես կարծում՝ հեքիաթում բնավորության ո՞ր գիծն է դատապարտվում, իսկ որն է գովաբանում:

3. Հետևյալ բառերից ընտրի՛ր հոմանիշ զույգերն ու գրի՛ր առանձին շարքերով. *չընկալել, խորհրդապահ, շատախոսել, գաղտնապահ, շաղակրատել, գաղտնամիտ, չըմբռնել*:

4. Արտագրի՛ր միայն նախադասությունները.

Փայլող աստղեր

Աստղազարդ երկինք

Աստղերը փայլում էին երկնքում:

Երկնքի փայլող աստղեր

Որքա՜ն սիրուն են երկնքի աստղերը:

Ի՞նչ են հուշում աստղերը:

Վառվել երկնքի աստղեր

Վառվե՛ք, երկնքի՛ աստղեր

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Վերարտադրել հեքիաթը երրորդ դեմքով,պատասխանելով հետևյալ հարցերին.

1. Ի՞նչ պայման դրեց թագավորը երկրի կառավարիչ ընտրելիս:

Թագավորը իր երկրի համար կառավարիչ էր փնտրում: Նա հանեց երեք միանման արձանիկներ և առաջադրեց գտնել դրանցից ամենաթանկը:

2. Ո՞վ լուծեց հանելուկը:

Շատ մարդիկ եկան-գնացին, բայց չգտան դրանց տարբերությունը: Մի իմաստուն եկավ և թելի միջոցով գտավ ամենաթանկ արձանիկը, որի ականջից թելը մտավ ու մնաց մեջը:

3. Ինչպե՞ս իմաստունը բացատրեց հանելուկի պատասխանը:

Նա թելի միջոցով գտավ ամենաթանկ արձանիկը: Թելը մտցրեց առաջինի ականջը, այն մյուս ականջից դուրս եկավ: Թելը մտցրեց երկրորդի ականջը, բերանից դուրս եկավ:Երրորդի ականջից թելը մտավ ու մնաց մեջը:

Իմաստունն ասաց, որ երրորդն է ամենաթանկը, որովհետև նա լսում է, խորը ըմբռնում և պահում ներսում:

2. Հեքիաթում գովաբանվում է գաղտնապահությունը և դատապարտվում է շատախոսությունը:

3. Հետևյալ բառերից ընտրել հոմանիշ զույգերն ու գրել առանձին շարքերով.

խորհրդապահ, չընկալել, գաղտնամիտ, շաղակրատել, չըմբռնել, շատախոսել, գաղտնապահ:

չընկալել - չըմբռնել

շաղակրատել - շատախոսել

խորհրդապահ -գաղտնամիտ, գաղտնապահ

4. Արտագրել միայն նախադասությունները: Նախադասությունը միտք արտահայտող բառերի շարքն է, որ ունի հնչերանգային ավարտվածություն:

Աստղերը փայլում էին երկնքում:
Որքա՜ն սիրուն են երկնքի աստղերը:
Ի՞նչ են հուշում աստղերը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Վերարտադրել հեքիաթը երրորդ դեմքով,պատասխանելով հետևյալ հարցերին.

1. Ի՞նչ պայման դրեց թագավորը երկրի կառավարիչ ընտրելիս:

Թագավորը իր երկրի համար կառավարիչ էր փնտրում: Նա հանեց երեք միանման արձանիկներ և առաջադրեց գտնել դրանցից ամենաթանկը:

2. Ո՞վ լուծեց հանելուկը:

Շատ մարդիկ եկան-գնացին, բայց չգտան դրանց տարբերությունը: Մի իմաստուն եկավ և թելի միջոցով գտավ ամենաթանկ արձանիկը, որի ականջից թելը մտավ ու մնաց մեջը:

3. Ինչպե՞ս իմաստունը բացատրեց հանելուկի պատասխանը:

Նա թելի միջոցով գտավ ամենաթանկ արձանիկը: Թելը մտցրեց առաջինի ականջը, այն մյուս ականջից դուրս եկավ: Թելը մտցրեց երկրորդի ականջը, բերանից դուրս եկավ:Երրորդի ականջից թելը մտավ ու մնաց մեջը:

Իմաստունն ասաց, որ երրորդն է ամենաթանկը, որովհետև նա լսում է, խորը ըմբռնում և պահում ներսում:

2. Պատասխանել ամբողջական նախադասությամբ։

3.Հետևյալ բառերից ընտրել հոմանիշ զույգերն ու գրել առանձին շարքերով.

չընկալել - չըմբռնել

շաղակրատել - շատախոսել

խորհրդապահ -գաղտնամիտ, գաղտնապահ

4. Նշելել միայն նախադասությունները.

- Փայլող աստղեր
- Աստղազարդ երկինք
- Աստղերը փայլում էին երկնքում:
- Երկնքի փայլող աստղեր
- Որքա՛ն սիրուն են երկնքի աստղերը:
- Ի՞նչ են հուշում աստղերը:
- Վառվել երկնքի աստղեր
- Վառվե՛ք, երկնքի՛ աստղեր։

Թեմատիկ պլանավորում

Դաս 80. 2/1 Թող ուրիշն անի: Նախադասության տեսակներն ըստ հաղորդակցման նպատակի

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Ինչպիսի՞ ճանապարհով էին քայլում ճանապարհորդները:
2. «***Ամայի*** ճանապարհով իրար հետևից քայլում էին երեք ճամփորդ:» նախադասության մեջ ***ընդգծված բառերը*** փոխարինե՛ք իմաստով մոտ այլ բառով:
3. Ի՞նչ պատահեց ճամփորդներին:
4. Ի՞նչ արեցին ճամփորդները:
5. Ինչպե՞ս էր իրեն պահում ճանապարհորդներից յուրաքանչյուրը տնակում:
6. Կազմել բարդ նախադասություններ տրված բառերով և պարզ նախադասություններով:

որովհետև, սակայն, և, երբ

Այգեպանի դեմքը զայրույթից կարմրեց: Նա տեսավ չորացած այգին:

Արևը լուսավորեց երկնքի ամպերը: Ներքևում դեռևս քնած էին մռայլ ժայռերը:

Ես վստահում եմ իմ ընկեր Վարդգեսին: Նա ազնիվ է և գաղտնապահ:

Կայծակը շանթահարեց կաղնին: Հաստաբուն ծառը բոցավառվեց:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Ամայի ճանապարհով իրար հետևից քայլում էին երեք ճամփորդ:

2. Ամայի բառի հոմանիշը անբնակ,անմարդաբնակ-ն է:

3. Եղանակն սկսեց վատանալ, ուժեղ քամի բարձրացավ, ձյուն տեղաց, բուք ու բորան սկսվեց:Քանի գնաց, բուքն ուժեղացավ, փոխվեց մրրիկի, իսկմինչև ամենամոտիկ գյուղը դեռ ահագին ճանապարհ կար:

4.Մտան մի լքված տուն և որոշեցին սպասել, մինչև եղանակը հանդարտվի:

5. Երեքն էլ միասին խոսում էին, բայց ոչ ոք տեղց չէր շարժվում, որ գնար փայտ բերեր:Երեքն էլ առողջ էին, բայց ամեն մեկը մտածում էր, որ մյուս երկուսը պետք է անեն այդ գործը:

Առաջինը մտածում էր. <<Ես հո սրանց ծառան չեմ, որ փայտի գնամ>>:

<<Դուք չեք գնում, ես էլ չեմ գնա>>,- մտածում էր երկրորդը:

<<Ինչո՞ւ ես պետք է գնամ, թող ուրիշը գնա>>,- մտածում էր երրորդը:

6. Կազմել բարդ նախադասություններ տրված բառերով և պարզ նախադասություններով:

Այգեպանի դեմքը զայրույթից կարմրեց, երբ նա տեսավ չորացած այգին:

Արևը լուսավորեց երկնքի ամպերը , սակայն ներքևում դեռևս քնած էին մռայլ ժայռերը:
Ես վստահում եմ իմ ընկեր Վարդգեսին , որովհետև նա ազնիվ է և գաղտնապահ:
Կայծակը շանթահարեց կաղնին և հաստաբուն ծառը բոցավառվեց:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Կարդալ բնագրից համապատասխան նախադասությունը:
Ամայի ճանապարհով իրար հետևից քայլում էին երեք ճամփորդ:
2. Ընտրել ճիշտ բառը.
Ա. անբնակ
Բ. բնակելի
3. Կարդալ բնագրից համապատասխան նախադասությունները:
4. Կարդալ բնագրից համապատասխան նախադասությունները:
5. Կարդալ բնագրից համապատասխան նախադասությունները:
6. Կազմել բարդ նախադասություններ տրված բառերով և պարզ նախադասություններով:
Այգեպանի դեմքը զայրույթից կարմրեց, երբ նա տեսավ չորացած այգին:
Արևը լուսավորեց երկնքի ամպերը , սակայն ներքևում դեռևս քնած էին մռայլ ժայռերը:
Ես վստահում եմ իմ ընկեր Վարդգեսին , որովհետև նա ազնիվ է և գաղտնապահ:
Կայծակը շանթահարեց կաղնին և հաստաբուն ծառը բոցավառվեց:

Թեմատիկ պլանավորում

Դաս 81. 2/1 Թող ուրիշն անի։ Նախադասության տեսակներն ըստ հաղորդակցման նպատակի

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Ովքե՞ր էին տեքստի հերոսները։
2. Բնութագրե՛ք ճանապարհորդներին։
3. Ի՞նչ ես կարծում՝ ինչու է հեքիաթն այդպես ավարտվում։ Ո՞րն է հեքիաթի հիմնական միտքը։
4. Այս հեքիաթը գրելով՝ հեղինակն ի՞նչ նպատակ էր հետապնդում։
5. Կազմել նախադասություններ <<խառնված բառերով>> և նշել նախադասության տեսակն ըստ հնչերանգի/ բացականչական, հրամայական, պատմողական, հարցական/։

   1. Գնա, փայտ, բեր, տաքանալու, համար,
   2. ինչ, ցուրտ է, դիմանալ, չի, լինում,
   3. ամայի, ճանապարհով, քայլում, էին, ճանապարհորդները,
   4. ախ, որքան, ցուրտ, է, այստեղ։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Տեքստի հերոսները ճամփորդներն են։
2. Ճամփորդները ալարկոտ էին և ծույլ։
3. Երևի հեղինակն ուզում է մենք պատկերացնենք, թե ինչ կլնի։ Հիմնական միտքն է՝ <<Ուրիշի ձեռքին նայողը սոված կմնա>>։
4. Նա ուզում էր սովորեցնել, որ ինքդ պիտի մտածես քո մասին, որ քո գործն ուրիշը չի անի, ով ալարի, ոչ դալարի։
5. Կազմել նախադասություններ <<խառնված բառերով>> և նշել նախադասության տեսակն ըստ հնչերանգի/ բացականչական, հրամայական, պատմողական, հարցական/։

   1. Գնա՛, փայտ բեր՝ տաքանալու համար։/հրամայական/
   2. Ի՞նչ, ցու՞րտ է, դիմանալ չի՞ լինում։/հարցական/
   3. Ճանապարհորդները քայլում էին ամայի ճանապարհով։/պատմողական/
   4. Ա՜խ, որքան ցուրտ է այստեղ։ / բացականչական/

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1.Պատասխանել ամբողջական նախադասությամբ։

2.Պատասխանել ամբողջական նախադասությամբ։
3. Հայտնի սեփական կարծիքը։ Ընտրել համապատասխան ասացվածքը.
Ա. Ուրիշի ձեռքին նայողը սոված կմնա։
Բ. Ականջից մտածը լեզվի ծայրին է։
4. Հայտնի սեփական կարծիքը։
5. Կազմել նախադասություններ <<խառնված բառերով>> և նշել նախադասության տեսակն ըստ հնչերանգի/ բացականչական, հրամայական, պատմողական, հարցական/։

1. Գնա, փայտ, բեր, տաքանալու, համար,
2. ինչ, ցուրտ է, դիմանալ, չի, լինում,
3. ամայի, ճանապարհով, քայլում, էին, ճանապարհորդները,
4. ախ, որքան, ցուրտ, է, այստեղ։

Թեմատիկ պլանավորում

Դաս 82. 2/1 Երկու եղբայր: Նախադասության տեսակներն ըստ հաղորդակցման նպատակի

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Ինչպե՞ս էին ապրում եղբայրները:
2. Ի՞նչ որոշեց մեծ եղբայրը: Ինչո՞ւ այդ որոշումը կայացրեց:
3. Ի՞նչ եք հասկանում «գյուղի ծայր» ասելով:
4. Եղբայրն ինչո՞ւ մտածելու ժամանակ չուներ:
5. Ինչպե՞ս եղբայրը ճանաչեց իր փոքր եղբորը:
6. Մեծ եղբայրն ինչպե՞ս դրսևորեց իր անհանգստությունը եղբոր նկատմամբ:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Երկուսն էլ ընտանիքի տեր էին, երկուսն էլ աղքատ:
2. Մի անգամ աշնանը մեծ եղբայրը հաշվեց իր ցորենի պաշարը և մտածեց.<<Իմ ցորենը շատ է՝ ամբողջ տասը պարկ, իսկ եղբորս բերքն ավելի քիչ է: Պետք նրան օգնել>>:
3. «Գյուղի ծայր» ասելով՝ հասկանում է՝ հեռու էր՝ գյուղի վերջում:
4. Նա պետք է հասցներ մինչև լուսանալը պարկերը տանել եղբոր տուն:
5. Լուսինն արդեն դուրս էր եկել ամպի տակից և լուսավորել ճանապարհը: Լուսնի լույսով ճանաչեց եղբորը:
6. Նա ասաց, որ ուշ է գնա տուն:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Կարդալ համապատասխան նախադասությունը:
2. Կարդալ համապատասխան նախադասությունը:
3. Ընտրել ճիշտ պատասխանը.
   Ա. հեռու
   Բ. դեմ դիմաց
4. Պատասխանել՝ եզրահանգում կատարելով:
5. Պատասխանել ամբողջական նախադասությամբ:
6. Կարդալ համապտասխան տողերը:

Թեմատիկ պլանավորում

Դաս 83. 2/1 Երկու եղբայր: Նախադասության տեսակներն ըստ հաղորդակցման նպատակի

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Ովքե՞ր են հեքիաթի հերոսները:
2. Ի՞նչ ես կարծում՝ ինչո՞ւ հեքիաթի հերոսները կոնկրետ անուն չունեն:
3. Ինչպե՞ս էր վերաբերում մեծ եղբայրը փոքր եղբորը, իսկ փոքր եղբա՞յրը: Տեքստի ո՞ր տողերից ենք մենք դա հասկանում:
4. Գրե՛ք եղբայրներին բնութագրող մի քանի բառ:
5. Պատմել որպես եղբայրներից մեկը՝ արտահայտելով իր զգացմունքներն ու հույզերը:
6. Ի՞նչ զգացմունքներ ունեցաք: Շարունակե՛ք նախադասությունը.

Ես զգացի….

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Հեքիաթի հերոսները երկու եղբայրներն են:
2. Նրանցից մեկը կարող է լինել ցանկացած մեկը՝ ես ու իմ եղբայրը , հայրս ու իր եղբայրը, եղբայր ու քույր, ուղղակի ընկերներ:
3. Թեև երկու ողբայրն էլ շատ հոգսեր ունեին, սակայն համերաշխ էին իրար հետ, սիրում ու հարգում էին միմյանց:
4. Նրանք հոգատար, բարի, աշխատասեր եղբայրներ էին:
5. Պատմել որպես եղբայրներից մեկը՝ արտահայտելով իր զգացմունքներն ու հույզերը: Օրինակ՝ Ես մի եղբայր ունեմ, որ ապրում է գյուղի ծայրին:Նա էլ իմ պես աշխատում է ծայրը ծայրին հասցնում:Երբ բերքս հավաքեց, հաշվեցի, որոշեցի օգնել եղբորս մի քանի պարկ ցորեն նվիրել նրան,բայց չէի ուզում, որ նա իմանար.չէր վերցնի: Գիշերով տարա նրա տուն:Ճանապարհին մի մարդու հանդպեցի պարկը շալակին, բայց մութ էր, չճանաչեցի:Երբ տուն եկա, տեսա իմ տասը պարկերը դեռ տեղում են:Ա՜յ քեզ բան, լավ չէ՞ի հաշվել: Նորից վերցրի պարկն ու գնացի: Այս անգամ լուսնի լույսով տեսա անցորդի դեմքը: Պատկերացնում եք, եղբայրս էր:Նա էլ էր որոշել ինձ օգնել: Երկուսս էլ հուզվեցինք, գրկախառնվեցինք և ուրախ էինք, որ այդպիսի հոգատար եղբայր ենք:

6. Շարունակել նախադասությունը.

Ես զգացի, թե ինչքան լավ է, երբ տեսնում ես, որ քո մասին մտածող կա:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Պատասխանել ամբողջական նախադասությամբ։
2. Արտահայտել սեփական կարծիքը։ Օրինակ՝ *Նրանցից մեկը կարող է լինել ցանկացած մեկը՝ ես ու իմ եղբայրը , հայրս ու իր եղբայրը, եղբայր ու քույր, ուղղակի ընկերներ։*
3. Մեջբերել բնագրի տողերը, օրինակ՝ *<<Թեև երկու ողբայրն էլ շատ հոգսեր ունեին, սակայն համերաշխ էին իրար հետ, սիրում ու հարգում էին միմյանց>>։*
4. Արտահայտել սեփական կարծիքը։ Օրինակ՝ *Նրանք հոգատար, բարի, աշխատասեր եղբայրներ էին։*
5. Պատմել որպես եղբայրներից մեկը՝ արտահայտելով իր զգացմունքներն ու հույզերը։ Օրինակ՝ *Ես մի եղբայր ունեմ, որ ապրում է գյուղի ծայրին։Նա էլ իմ պես աշխատում է ծայրը ծայրին հասցնում։Երբ բերքս հավաքեց, հաշվեցի, որոշեցի օգնել եղբորս մի քանի պարկ ցորեն նվիրել նրան,բայց չէի ուզում, որ նա իմանար.չէր վերցնի։ Գիշերով տարա նրա տուն։Ճանապարհին մի մարդու հանդիպեցի պարկը շալակին, բայց մութ էր, չճանաչեցի։Երբ տուն եկա, տեսա իմ տասը պարկերը դեռ տեղում են։Մ՚յ քեզ բան, լավ չէ՞ի հաշվել։ Նորից վերցրի պարկն ու գնացի։ Այս անգամ լուսնի լույսով տեսա անցորդի դեմքը։ Պատկերացնում եք, եղբայրս էր։Նա էլ էր որոշել ինձ օգնել։ Երկուսս էլ հուզվեցինք, գրկախառնվեցինք և ուրախ էինք, որ այդպիսի հոգատար եղբայր ենք։*
6. Շարունակել նախադասությունը.

Ես զգացի, թե ինչքան լավ է, երբ տեսնում ես, որ քո մասին մտածող կա։

Թեմատիկ պլանավորում

Դաս 84. 3/1 -2 Գրքից փախած մկնիկը

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Որտե՞ղ էր ապրում մկնիկը:
2. Ինչպիսի՞ն պետք է լիներ տունը, որպեսզի մկնիկի համար «բանի պետք լիներ»:
3. Ինչպե՞ս անվանեցին մկնիկին իրական մկները (Արի ու գլուխ հանիր): Ինչո՞ւ այդպես անվանեցին:
4. «Գլուխ հանիր» դարձվածքը ո՞ր բառով կփոխարինեիք:
5. Ինչպե՞ս էին վարվում մկները մկնիկի հետ:Ի՞նչ ես հասկանում «ձեռք առնել» դարձվածքն ասելով:
6. Ո՞ւմ հանդիպեց ջրաղացում:
7. Սովորական կատուներն ինչո՞ւ էին դուրս արել կատվին:
8. Ինչո՞ւ մկանը չէին հասկանում իր ցեղակիցները, և ինչո՞ւ նրան հասկացավ գրքակից կատուն:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Մկնիկն ամբողջ կյանքում ապրել էր բարակ, էժանագին գրքույկում, որի մեջ նկարներով փոքրիկ պատմություններ կային:
2. Նա ուզում էր գտնել այնպիսի տուն, որի թուղթը բանի պետք լիներ, գոնե նրանից պանրի հոտ կար:
3. Բա ո՞վ է նա, որտեղի՞ց է հայտնվել:
   _ Դե արի ու գլուխ հանիր, թե ով է:
   Ու խեղճ մկնիկի անունը դրեցին Արի ու գլուխ հանիր:
4. «Գլուխ հանիր» դարձվածքը կփոխարինեն հասկացիր բառով :
5. Մկները միշտ խաղում էին նրա հոգու հետ, ձեռք առնում.

_ Լսիր, ա՛յ Արի ու գլուխ հանիր, դու ինչպիսի՞ պանիր ես սիրում:

_ Սփլինգ, քրոն սիսիցաիր,-պատասխանում էր գրքի մկնիկը:

_Դե լավ, բարի՛ գիշեր,-ծիծաղում էին մկները: Իսկ ամենափոքրերը քաշում էին նրա պոչը, որ բարկացնեն ու վրան ծիծաղեն:

«Ձեռք առնել» դարձվածքը նշանակում է ծաղրել:

6. Մկնիկը որոշեց գիշերել ջրաղացում: Նա արդեն ննջում էր, երբ մթության մեջ երկու դեղին կրակ փայլեց, լսվեց չորքոտանի որսորդի ոտքերի թփթփոցը. դա կատուն էր:

7. Պարզվում է, որ նա էլ էր գրքից: Սովորական կատուները նրան դուրս էին արել, որովհետև նա չէր կարողանում սովորական «մյաու» ասել:

8. Նրանք սովորական մկներ էին, իսկ կատուն ու մկնիկը գրքային էին։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Բնագրից կարդալ համապատասխան նախադասությունը։
2. Բնագրից կարդալ համապատասխան նախադասությունը։
3. Բնագրից կարդալ համապատասխան նախադասությունը։
4. Ընտրել ճիշտ պատասխանը.

   Ա . հասկացիր

   Բ. մտածիր

   Գ. շփոթվիր
5. Բնագրից կարդալ համապատասխան նախադասությունը։

«Ձեռք առնել» - ծաղրել

6. Բնագրից կարդալ համապատասխան նախադասությունը։
7. Բնագրից կարդալ համապատասխան նախադասությունը։
8. Կատարել եզրահանգում, պատասխանել ամբողջական նախադասությամբ։

Թեմատիկ պլանավորում

Դաս 85. 3/1 Գրքից փախած մկնիկը

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Համարակալի՛ր նախադասություններն ըստ հեքիաթում նկարագրված իրադարձությունների հաջորդականության և ստացի՛ր պլան , պատմիր ըստ պլանի:

…. Մկնիկը հայտնվեց իսկական մկների մոտ:

…. Մկնիկն ու կատուն իրար լավ էին հասկանում:

….Մկնիկը որոշեց փոխել իր բնակարանը:

….Մկնիկը մենակ մնաց ջրաղացում:

….Իսկական մկները ծաղրում էին մկնիկին:

2. Վերականգնի՛ր «քանդված» առածները: Գտի՛ր տեքստի բովանդակությանը համապատասխան առածը

մկան մահ: հազար կա՝ մեկ չարժե: քան ոչխարի մի հոտը:

Էծը էծին ավելի լավ է, Կատվի խաղ՝ Մեկ կա՝ հազար արժե,

3. Տեքստում օգտագործված ո՞ր երկու դարձվածքներն են նկարված: Գրի՛ր դրանք: Յուրաքանչյուր դարձվածքի կողքին գրի՛ր, թե ինչ իմաստ են արտահայտում դրանք :

4. Կազմի՛ր նախադասություններ՝ օգտագործելով տեքստում գործածված երկու դարձվածքները:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Համարակալել նախադասություններն ըստ հեքիաթում նկարագրված իրադարձությունների հաջորդականության և ստանալ պլան , պատմել ըստ պլանի:

2. Մկնիկը հայտնվեց իսկական մկների մոտ:

5. Մկնիկն ու կատուն իրար լավ էին հասկանում:

1.Մկնիկը որոշեց փոխել իր բնակարանը:

4. Մկնիկը մենակ մնաց ջրաղացում:

3. Իսկական մկները ծաղրում էին մկնիկին:

2. Վերականգնել «քանդված» առածները: Գտնել տեքստի բովանդակությանը համապատասխան առածը.

Կատվի խաղ՝ մկան մահ:

Էծը էծին ավելի լավ է, քան ոչխարի մի հոտը:

- Մեկ կա՝ հազար արժե, հազար կա՝ մեկ չարժե:

3. Տեքստում օգտագործված են ՝ էշի ականջում քնել-անտեղյակ լինել և գլուխ հանել - հասկանալ դարձվածքները:

4. Կազմել նախադասություններ այդ դարձվածքներով:

Կատուն էշի ականջում քնած էր, մինչ մկները տանում էին ալյուրը:

Արամն էր միայն գլուխ հանում մաթեմատիկական գլուխկոտրուկներից:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1.Համարակալել նախադասություններն ըստ հեքիաթում նկարագրված իրադարձությունների հաջորդականության և ստանալ պլան , պատմել ըստ պլանի:

2. Մկնիկը հայտնվեց իսկական մկների մոտ:

5. Մկնիկն ու կատուն իրար լավ էին հասկանում:

1.Մկնիկը որոշեց փոխել իր բնակարանը:

4. Մկնիկը մենակ մնաց ջրաղացում:

3. Իսկական մկները ծաղրում էին մկնիկին:

2. Վերականգնել «քանդված» առածները: Գտնել տեքստի բովանդակությանը համապատասխան առածը.

Կատվի խաղ՝ մկան մահ:

Էծը էծին ավելի լավ է, քան ոչխարի մի հոտը:

- Մեկ կա՝ հազար արժե, հազար կա՝ մեկ չարժե:

3. Նշել դարձվածքները նկարների տակ.

էշի ականջում քնել - անտեղյակ լինել գլուխ հանել - հասկանալ

4. Կազմել նախադասություններ այդ դարձվածքներով։
Կատուն էշի ականջում քնած էր, մինչ մկները տանում էին ալյուրը։
Արամն էր միայն գլուխ հանում մաթեմատիկական գլուխկոտրուկներից։

Դաս 86. 3/1 Գրքից փախած մկնիկը

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Գրել <<Կարծիք- տեսակետ>> ՝ վերարտադրելով հեքիաթը։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Կարծիք - տեսակետը շարադրության տեսակներից է, որը հնարավորություն է ընձեռում սովորեցնել երեխային արտահայտել իր սեփական տեսակետն ընթերցած ստեղծագործության նկատմամբ, դրա մասին կարծիք գրել: Այդ շարադրության միջոցով աշակերտը կարող է ոչ միայն գնահատական տալ ընթերցած ստեղծագործությանը, այլև խորությամբ յուրացնել դրա իմաստը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Համառոտ վերարտադրել ստեղծագործության սյուժեն՝ իրադարձություններին տալով զգայական գնահատական:

Թեմատիկ պլանավորում

Դաս 87. 3/1 Բուրատինոն իմանում է ոսկե բանալու գաղտնիքը: Պատմողական նախադասություններ

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Ի՞նչ էր անում Կարաբաս Բարաբասը պանդոկում:
2. Բուրատինոն ինչո՞ւ էր թաքնվել փարչի մեջ:
3. Ի՞նչ պատահեց այն բանից հետո, երբ ճաշարանատերը փարչը շուռ տվեց:
4. Ինչո՞ւ վախեցավ Կարաբաս Բարաբասը:
5. Բուրատինոն ինչպե՞ս իմացավ Ոսկե բանալու գաղտնիքը:
6. Ո՞րն էր Ոսկե բանալու գաղտնիքը:
7. Ովքե՞ր խոստացան գտնել Բուրատինոյին և ինչպե՞ս գտան:
8. Ի՞նչ պայմանով Ալիսա աղվեսն ու Բազիլիո կատուն համաձայնեցին ասել Բուրատինոյի գտնվելու տեղը:
9. Ի՞նչ հնարամտությամբ Բուրատինոն ազատվեց հետապնդողներից: Կարդա՛ համապատասխան տողերը:
10. Ինչո՞ւ էին համագործակցում Կարաբաս Բարաբասը, Ալիսա աղվեսը և Բազիլիո կատուն: Կարդա՛ նրանց բնութագրող տողերը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Պանդոկում ճաշում էր:
2. Նա ուզում էր իմանալ Ոսկե բանալու գաղտնիքը:
3. Բուրատինոն ամբողջ ուժով սեղմվեց փարչի պատերին, որ վայր չընկնի:
4. Նա փարչի խորքից լսեց խորհրդավոր մի ձայն:
5. - Որտե՞ղ է դռնակը, որտե՞ղ է դռնակը,- նվաց ձայնը, որ նման էր աշնանային գիշերը ծխնելույզի մեջ աղմկող քամու ձայնի…

- Կասե՛մ, կասե՛մ, լռի՛ր,-շշնջաց Կարաբաս Բարաբասը:- Դռնակը ծեր Կառլոյի խցում է, նկարված օջախի հետևում:

6. - Կասե՛մ, կասե՛մ, լռի՛ր,-շշնջաց Կարաբաս Բարաբասը:- Դռնակը ծեր Կառլոյի խցում է, նկարված օջախի հետևում:
7. Աղվեսն ու կատուն խոստացան գտնել Բուրատինոյին: Գտան փարչի մեջից:
8.- Սինյո՛ր Կարաբաս Բարաբաս, նվիրեցե՛ք մեզ տասը ոսկի, և մենք սրիկա Բուրատինոյին ձեզ կտանք առանց տեղից շարժվելու:

9. Մինչ բոլորը շշված, բերանները բաց կանգնած էին…
Եվ նա պինդ կպավ աքլորի գեներալական պոչին։ աքլորը, ոչինչ չհասկանալով, թևերը ցցեց և սկսեց փախչել։բուրատինոն նրա պոչից կախված, թռավ մինչև սարի տակ…..
10. - Ա՜յ վստահելի տղաներ են, սինյո՛ր, նրանք փողով սատանաներին անգամ ձեզ մոտ կբերեն…

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Պատասխանել պարզ նախադասությամբ։
2. Պատասխանել պարզ նախադասությամբ։
3. Կարդալ համապատասխան նախադասությունը։
4. Կարդալ համապատասխան նախադասությունը։
5. Կարդալ համապատասխան նախադասությունը։
6. Կարդալ համապատասխան նախադասությունը։
7. Պատասխանել պարզ նախադասությամբ։
8. Կարդալ համապատասխան նախադասությունը։
9. Կարդալ համապատասխան հատվածը։
10. Կարդալ համապատասխան նախադասությունը։

Թեմատիկ պլանավորում

Դաս 88. 3/1 Բուրատինոն իմանում է ոսկե բանալու գաղտնիքը: Պատմողական նախադասություններ

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Հեքիաթում նկարագրված դեպքերի շուրջ կազմի՛ր մի քանի պատմողական նախադասություն և գրի՛ր: Սկսի՛ր այսպես.

1) Կարաբաս Բարաբասը պանդոկում հանկարծ գտավ Բուրատինոյին:

2) ……

2. Կազմած նախադասությունները դասավորիր ըստ դեպքերի հաջորդականության, ստացիր պլան:

3. Վերարտադրել ըստ պլանի:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Հեքիաթում նկարագրված դեպքերի շուրջ կազմել մի քանի պատմողական նախադասություն և գրել:

1) Կարաբաս Բարաբասը պանդոկում հանկարծ գտավ Բուրատինոյին:

2) Նա պատահաբար ասաց նրան Ոսկե բանալու գաղտնիքը:

3) Աղվեսն ու կատուն ասացին Բուրատինոյի տեղը տասը ոսկու դիմաց:

4) Բուրատինոն փարչի խորքց խորհրդավոր ձայնով վախցրեց Կարաբասին:

5) Բուրատինոն աքլորի պոչից կպած փախավ:

2. Կազմած նախադասությունները դասավորել ըստ դեպքերի հաջորդականության, ստանալ պլան:

1) Բուրատինոն փարչի խորքց խորհրդավոր ձայնով վախցրեց Կարաբասին:

2) Նա պատահաբար ասաց նրան Ոսկե բանալու գաղտնիքը:

3) Աղվեսն ու կատուն ասացին Բուրատինոյի տեղը տասը ոսկու դիմաց:

4) Կարաբաս Բարաբասը պանդոկում հանկարծ գտավ Բուրատինոյին:

5) Բուրատինոն աքլորի պոչից կպած փախավ:

3.Վերարտադրել ըստ պլանի:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Հեքիաթում նկարագրված դեպքերի շուրջ կազմել մի քանի պատմողական նախադասություն և գրել։
1) Կարաբաս Բարաբասը պանդոկում հանկարծ գտավ Բուրատինոյին։
2) Նա պատահաբար ասաց նրան Ոսկե բանալու գաղտնիքը։
3) Աղվեսն ու կատուն ասացին Բուրատինոյի տեղը տասը ոսկու դիմաց։
4) Բուրատինոն փարչի խորքց խորհրդավոր ձայնով վախցրեց Կարաբասին։
5) Բուրատինոն աքլորի պոչից կպած փախավ։

2. Կազմած նախադասությունները դասավորել ըստ դեպքերի հաջորդականության, ստանալ պլան։
1) Բուրատինոն փարչի խորքց խորհրդավոր ձայնով վախցրեց Կարաբասին։
2) Նա պատահաբար ասաց նրան Ոսկե բանալու գաղտնիքը։
3) Աղվեսն ու կատուն ասացին Բուրատինոյի տեղը տասը ոսկու դիմաց։
4) Կարաբաս Բարաբասը պանդոկում հանկարծ գտավ Բուրատինոյին։
5) Բուրատինոն աքլորի պոչից կպած փախավ։

3.Վերարտադրել ըստ պլանի։

Թեմատիկ պլանավորում

Դաս 89. 3/1 Բուրատինոն իմանում է ոսկե բանալու գաղտնիքը: Պատմողական նախադասություններ

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1.Կարելի՞ է արդյոք նրան համարել դրական հերոս:

2. Ընդգծե՛ք Բուրատինոյի բնավորության լավ կողմերը՝

Ուրախ
Կենսախինդ
Բարի
Չարաճճի
Անդաստիարակ
Իսկական ընկեր
Համարձակ
Չի ուզում սովորել
Վճռական
Լավատես
Չենթարկվող
Հետաքրքրասեր
Արկածախնդիր

3. Կուզենայի՞ք արդյոք Բուրատինոյի նման ընկեր ունենալ: Ինչո՞ւ:

4. Իսկ հեքիաթի տվյալ հատվածում ովքե՞ր են բացասական հերոսները:: Ինչպիսի՞ն էին նրանք:

5.Ի՞նչ հարց կտաս, որոնց պատասխանները լինեն հետևյալ նախադասությունները:

Ո՛չ, ես վախենում եմ:

Այո՛, ես դա կարող եմ:

Ես դժվարանում եմ խոստովանել:

Այո՛, ինձ համար հաճելի է:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1 Կարելի է ,որովհետև նա ուզում էր օգնել տիկնիկներին:

2.Ընդգծել Բուրատինոյի բնավորության լավ կողմերը.

- Ուրախ
- Կենսախինդ
- Բարի

- Չարաճճի

Անդաստիարակ

- Իսկական ընկեր
- Համարձակ

Չի ուզում սովորել

- Վճռական
- Լավատես

Չենթարկվող

- Հետաքրքրասեր
- Արկածախնդիր

3. Այո՛, որովհետև նա ուրախ է, չարաճճի, ազնիվ, հետաքրքրասեր…

4. Բացասական հերոսներ էին Կարաբաս Բարաբասը, Ալիսա աղվեսը և Բազիլիո կատուն: Կարաբաս Բարաբասը դաժան էր և միևնույն ժամանակ վախկոտ, Ալիսա աղվեսը՝ խորամանկ, Բազիլիո կատուն՝ ագահ:

5. Տալ հարցեր, որոնց պատասխանները կլինեն հետևյալ նախադասությունները:

-Կգա՞ս տանիքից թռչենք ցած:

-Ո՛չ, ես վախենում եմ:

-Կարո՞ղ ես դասերդ ինքնուրույն անել:

-Այո՛, ես դա կարող եմ:

-Քանի՞ անգամ ես ստել:

-Ես դժվարանում եմ խոստովանել:

-Հաճելի՞ է բարձր երաժշտությունը :

-Այո՛, ինձ համար հաճելի է:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Պատասխանել ամբողջական նախադասությամբ:

2.Ընդգծել Բուրատինոյի բնավորության լավ կողմերը.

- Ուրախ
- Կենսախինդ
- Բարի
- Չարաճճի

Անդաստիարակ

- Իսկական ընկեր
- Համարձակ

Չի ուզում սովորել

- Վճռական
- Լավատես

Չենթարկվող

- Հետաքրքրասեր
- Արկածախնդիր

3. Պատասխանել ամբողջական նախադասությամբ։
4. Նշել բացասական հերոսներին և բնութագրել նրանց։ Օրինակ՝ *Բացասական հերոսներ էին Կարաբաս Բարաբասը, Ալիսա աղվեսը և Բազիլիո կատուն։ Կարաբաս Բարաբասը դաժան էր և միևնույն ժամանակ վախկոտ, Ալիսա աղվեսը՝ խորամանկ, Բազիլիո կատուն՝ ագահ։*
5. Տալ հարցեր, որոնց պատասխանները կլինեն հետևյալ նախադասությունները։

-Կգա՞ս տանիքից թռչենք ցած։ -Կարո՞ղ ես դասերդ ինքնուրույն անել։
-Ո՛չ, ես վախենում եմ։ -Այո՛, ես դա կարող եմ։

-Քանի՞ անգամ ես ստել։ -Հաճելի՞ է բարձր երաժշտությունը։ -Ես դժվարանում եմ խոստովանել։ -Այո՛, ինձ համար հաճելի է։

Թեմատիկ պլանավորում

Դաս 90. 2/1 Մև արկղի գաղտնիքը։ Հարցական նախադասություն

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Ինչպիսի՞ մարդ էր թագավորը, և ինչպե՞ս էին ապրում նրա հպատակները։
2. Ի՞նչ զարհուրելի բան մտածեց թագավորի զորավարը։
3. Ի՞նչ պատահեց թագավորի իմաստունների հետ։
4. Ի՞նչ մտածեց ծեր իմաստունը։
5. Ինչը՞ ստիպեց թագավորին հավատալ ծեր իմաստունին։
6. Ինչպե՞ս վարվեց թագավորն իր զորավարի և վեզիրի հետ։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Կար և հաստատ կար մի դաժան թագավոր։ Նրա իշխանության մեջ մարդը վախենում էր մարդուց, ձին՝ ձիուց, ծաղիկը՝ ծաղկից։
2. - Ուրեմն այսպես. կպատրաստենք մի սև փքրիկ արկղ, նրա մեջ ոչինչ չենք պահի և կկանչենք երկրի իմաստուններին, թող գուշակեն՝ ի՞նչ կա և չկա արկղի մեջ։ Համոզված եմ՝ նրանցից ոչ մեկը ճշգրիտ չի պատասխանի և, խնդրեմ, կցրենք ձեր ձանձրույթը, այսինքն կգլխատվեն բոլորը։
3. Ծեր իմաստունները հերթով մոտենում, փորձում էին գուշակել, ապա գլխիկոր հեռանում կարմրազգեստ դահիճի ուղեկցությամբ։
4. Քնելուց առաջ քթի տակ մրմնջաց. <<Եթե թագավորը դաժան է, ուրեմն վախկոտ է>>։
5. Մահվան վախը ստիպեց հավատալ իմաստունին։
6. Դահճի ուղկցությամբ և պահակախմբի հսկողությամբ դուրս տարան զորավարին և վեզիրին։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Կարդալ համապատասխան նախադասությունը։
2. Կարդալ համապատասխան նախադասությունը։
3. Կարդալ համապատասխան նախադասությունը։
4. Կարդալ համապատասխան նախադասությունը։
5. Հետևություն անել և պատասխանել ամբողջական նախադասությամբ։
6. Կարդալ համապատասխան նախադասությունը։

Թեմատիկ պլանավորում

Դաս 91. 2/1 Մև արկղի գաղտնիքը։ Հարցական նախադասություն

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Որոշել հեքիաթի հենակետայն բառերը կամ բառակպակցությունները։
2. Կազմել պլան պատմողական նախադասություններով։
3. Ուրիշ ի՞նչ առածով կավարտեք հեքիաթը։ Ընտրեք։

Լավ անես, քեզ կանես, վատա անես, քեզ կանես։

Խելքը բնովի է ոչ թե դնովի։

Ով ինչ ան, իրեն կան։

Արդարը, որ մազ դառնա, րի կրվի, խարդախը, որ գերան դառնա, կկոտրվի։

4.Պատմողական նախադասությունները դարձնել հարցական։

Կար մի դաժան թագավոր։

Իմաստունը գտավ լուծումը։

Արկղը դատարկ էր։

Փոս փորողը փոսն է ընկնում։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Հենակետային բառերն այն բառերն ու բառակապակցություններն են առանց որոնց պատմել հեքիաթը չի լինի՝ դաժան թագավոր, ցրել ձանձրույթը, սև արկղ, կարմրազգեստ դահիճ, ամենագիտուն իմաստուն, թունավոր ճանճ։

2. Կազմել պլան պատմողական նախադասություններով։

1.Դաժան թագավորի զորավարը հանելուկ է առաջադրում իմաստուններին։

2. Ծեր իմաստունները մեկը մյուսի հետևից գլխատվում են։

3. Վերջին իմաստունը գիշերը գտնում է ելքը։

4. Գլխատում են զորավարին։

3. Ճիշտ ընտրել առածն ըստ հեքիաթ իմաստի։

- ✓ Լավ անես, քեզ կանես, վատ անես, քեզ կանես։

Խելքը բնովի է ոչ թե դնովի։

- ✓ Ով ինչ ան, իրեն կան։

Արդարը, որ մազ դառնա, րի կրվի, խարդախը, որ գերան դառնա, կկոտրվի։

4.Իմանա պատմողական նախադասությունը դարձնել հարցական։

Կար մի դաժան թագավոր։ Կա՞ր մի դաժան թագավոր։
Կար մի՞ դաժան թագավոր։
Կար մի դաժա՞ն թագավոր։
Կար մի դաժան թագավո՞ր։

Իմաստունը գտավ լուծումը։ Իմաստու՞նը գտավ լուծումը։
Իմաստունը գտա՞վ լուծումը։
Իմաստունը գտավ լուծու՞մը։

Արկղը դատարկ էր։ Արկղը դատա՞րկ էր։
Ա՞րկղն էր դատարկ ։

Փոս փորողը փոսն է ընկնում։ Փո՞ս փորողը փոսն է ընկնում։
Փոս փորո՞ղն է փոսն ընկնում։
Փոս փորողը փո՞սն է ընկնում։
Փոս փորողը փոսն ընկնու՞մ է ։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Որոշել հեքիաթի հենակետային բառերը կամ բառակպակցությունները։
2. Կազմել պլան պատմողական նախադասություններով։
   1.Դաժան թագավորի զորավարը հանելուկ է առաջադրում իմաստուններին։
   2. Ծեր իմաստունները մեկը մյուսի հետևից գլխատվում են։
   3. Վերջին իմաստունը գիշերը գտնում է ելքը։
   4. Գլխատում են զորավարին։

3. Ուրիշ ի՞նչ առածով կավարտեք հեքիաթը։Ընտրեք։

- ✓ Լավ անես, քեզ կանես, վատա անես, քեզ կանես։
  Խելքը բնովի է ոչ թե դնովի։
- ✓ Ով ինչ անի, իրեն կան։

Արդարը, որ մազ դառնա, րի կրվի, խարդախը, որ գերան դառնա, կկոտրվի։

4. Պատմողական նախադասությունը դարձնել հարցական։

Կար մի դաժան թագավոր։	Կա՞ր մի դաժան թագավոր։ Կար մի՞ դաժան թագավոր։ Կար մի դաժա՞ն թագավոր։ Կար մի դաժան թագավո՞ր։
Իմաստունը գտավ լուծումը։	Իմաստու՞նը գտավ լուծումը։ Իմաստունը գտա՞վ լուծումը։ Իմաստունը գտավ լուծու՞մը։
Արկղը դատարկ էր։	Արկղը դատա՞րկ էր։ Ա՞րկղն էր դատարկ։
Փոս փորողը փոսն է ընկնում։	Փո՞ս փորողը փոսն է ընկնում։ Փոս փորո՞ղն է փոսն ընկնում։ Փոս փորողը փո՞սն է ընկնում։ Փոս փորողը փոսն ընկնու՞մ է։

Դաս 92. 3/1 Քաջ արտուտիկը

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Ինչպե՞ս էր քաջ արտուտիկը արևածագը ողջունում:
2. Ի՞նչ պատահեց նրան մի առավոտ:
3. Ինչո՞ւ բազեն չհոշոտեց արտուտիկին:
4. Ատուտիկն ինչպե՞ս արձագանքեց բազեի խոսքերին:
5. Ինչո՞ւ արտուտիկը շարունակեց ճախրել:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Լույսը չբացված՝ մի ժիր արտուտիկ՝
   Պստլիկ ու սիրուն, ինչպես քաջ մարտիկ,
   Մոխրագույն, ամուր իր թևիկներով,
   Ծղոտե բարակ, պինդ տոտիկներով,
   Երգը կտուցին վեր է սլանում,
   Արևածագն է երգով ողջունում…
2. Մի առավոտ էլ նա վաղ արթնացավ,
   Աշխույժ ճախրանքով երկինք բարձրացավ,
   Նրա դեմ ելավ հավագող բազեն…
3. - Բախտդ բերել է ,
   Ա՛յ անխելք, անզեն,
   Կհոշոտեի
   Քեզ հենց այս պահին,
   Ափսոս՝ փախչում եմ
   Կայծակի ահից։
4. Ասաց, որ բազեի պես չի վախենում կայծակից և որքան ուժը պատի երկինքը կպահի։
5. Որ բարի լույս մաղթի մարդկանց ու աշխարհին։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Կարդալ համապատասխան տողերը։
2. Կարդալ համապատասխան տողերը։
3. Կարդալ համապատասխան տողերը։
4. Պատասխանել ամբողջական նախադասությամբ։
5. Պատասխանել ամբողջական նախադասությամբ։

Թեմատիկ պլանավորում

Դաս 93. 3/1 Քաջ արտուտիկը

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Որոշե՛ք հեքիաթի հենակետային բառերը կամ բառակապակցությունները։
2. Այս հեքիաթը գրելով՝ հեղինակն ի՞նչ նպատակ էր հետապնդում։
3. Ի՞նչ զգացմունքներ ունեցաք։ Շարունակե՛ք նախադասությունը.

Ես զգացի…

4. Կա՞ տեքստում մի բան, որը ձեզ զարմացրեց կամ ստիպեց մտածել։
5. Լրացնել աղյուսակը՝ օգտվելով բնագրից.

արտուտիկ	բազե
երգեցիկ	գիշատիչ
քնքուշ	որսորդ

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1.Հենակետային բառերն այն բառերն ու բառակապակցություններն են առանց որոնց պատմել հեքիաթը չի լինի՝ ժիր արտուտիկ, արևաճագ, առավոտ, վաղ արթնացավ, կայծակ, որոտ, վտիտ թռչուն, բարի լույս, երգով բացվեց առավոտ….

2. Հեղինակն ուզում է, որ նպատակներին հասնելու համար մինչև վերջ պայքարեն և անգամ փոքրիկ գործը սիրով անեն, հավատան դրա կարևորությանը։

3. Զարմանք, անհանգստություն, վախ, ուրախություն։

Ես զգացի վտանգ , զարմանք, վախ, ուրախություն։

4. Տեքստում կարող է զարմացնել բազեի վախկոտությունը, արտուտիկի քաջությունը, համառությունը։

5. Լրացնել աղյուսակը՝ օգտվելով բնագրից.

արտուտիկ	բազե
երգեցիկ	գիշատիչ
քնքուշ	որսորդ
պստլիկ	հավագող
մոխրագույն	վախկոտ
վտիտ	
քաջ	

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Որոշել հեքիաթի հենակետային բառերը կամ բառակապակցությունները:
2. Արտահայտել կարծիքն ամբողջական նախադասությամբ:
3.Ընտրել զգացումները և լրացնել նախադասությունը.

զարմանք հուսահատություն անհանգստություն
վախ ուրախություն վտանգ

4. Պատասխանել՝ արտահայտելով իր կարծիքը:
5. Լրացնել աղյուսակը՝ օգտվելով բնագրից.

արտուտիկ	բազե
երգեցիկ	գիշատիչ
քնքուշ	որսորդ
պստլիկ	հավագող
մոխրագույն	վախկոտ
վտիտ	
քաջ	

Դաս 94. 3/1 Քաջ արտուտիկը

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Համառոտ շարադրի՛ր հեքիաթը՝ սկսելով այսպես.

Մի առավոտ ժիր արտուտիկը վաղ արթնացավ և աշխույժ ճախրանքով երկինք բարձրացավ։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1.Համառոտ շարադրել հեքիաթը՝ սկսելով այսպես.

Մի առավոտ ժիր արտուտիկը վաղ արթնացավ և աշխույժ ճախրանքով երկինք բարձրացավ։ նրան հանդիպեց հավագող բազեն և ասաց, որ կհոշոտեր նրան, եթե կայծակից չվախենար։Արտուտիկն էլ ասաց, չի վախենում կայծակից և պետք է իր երգով բարի լույս մաղթի մարդկանց ու աշխարհին։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1.Համառոտ շարադրել հեքիաթը՝ սկսելով այսպես.

Մի առավոտ ժիր արտուտիկը վաղ արթնացավ և աշխույժ ճախրանքով երկինք բարձրացավ։ նրան հանդիպեց հավագող բազեն և ասաց, որ կհոշոտեր նրան, եթե կայծակից չվախենար։Արտուտիկն էլ ասաց, չի վախենում կայծակից և պետք է իր երգով բարի լույս մաղթի մարդկանց ու աշխարհին։

Դաս 95. 2/1 Թագավորն ու խաբեբան: Հրամայական նախադասություն

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Ովքե՞ր են տեքստի հերոսները:
2. Ի՞նչ արտասովոր մարդ էր հայտնվել քաղաքում:
3. Ի՞նչ է ուզում ասել հեղինակը «փող էր կորզում» արտահայտությամբ:
4. Ինչո՞ւ էր թագավորն ուզում հանդիպել նրան:
5. «Թագավորը դաժան էր» դատողությունը կարծի՞ք է, թե՞ փաստ: Պատասխանդ հիմնավորի՛ր տեքստի համապատասխան տողերով:
6. Ի՞նչ հնարամտությամբ նա խաբեց թագավորին:
7. Թագավորի մտքով անգամ չէր անցնում, որ իրեն խաբում են: Սա փա՞ստ է, թե՞ կարծիք: Պատասխանդ հիմնավորի՛ր տեքստի համապատասխան տողերով:
8. Ինչպե՞ս էր վերաբերում թագավորն իր խորհրդատուին: Տեքստի ո՞ր տողերից ենք մենք դա հասկանում:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Տեքստի հերոսներն են՝ թագավորը, խաբեբան, խորհրդատուն:
2. Քաղաքում մի արտասովոր մարդ էր հայտնվել, որ բլբլացնելով ազնիվ մարդկանցից փող էր կորզում:
3. Փող կորզել նշանակում է խաբեությամբ փող վերցնել:
4. Չէր հավատում, որ ամենախորամանկ մարդուն էլ է խաբել իրեն էլ խելացի էր համարում:
5. «Թագավորը դաժան էր» դատողությունը փաստ է, որովհետև խորհրդականն ասում է, որ եթե չգնան թագավորի մոտ և խաբեբան չխաբի նրան, երկուսին էլ կգլխատեն:
6. Նա թագավորին ասաց՝ իբր գործիքները գրավ են դրված, փող չունի, որ հանի, գա նրան խաբի:
7. Թագավորի մտքով անգամ չէր անցնում, որ իրեն խաբում են: Սա փա՞ստ է:

-Խորհրդակա՛ն,- հրամայում է թագավորը,-այդ երիտասարդին երկու հարյուր ոսկի՛ տուր, թող գնա իր գործիքները բերի, տեսնենք ո՞նց է ինձ խաբում:

8. Նա չէր վստահում նրան և չէր գնահատում:

-Խելքին մոտ բաներ չես խոսում,- ասում էր թագավորը:

-Դե լավ, գնա էդ մարդուն բե՛ր, տեսնենք, թե ինձ ոնց է խաբում: Եթե նրան չհաջողվի այդ բանն անել, զգուշացնում եմ՝ գլուխ ուսերիդ չի մնա:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Նշել բոլոր հերոսներին։
2. Բնագրից կարդա համապատասխան նախադասությունը։
3. Բացատրել արտահայտության իմաստը՝ օգտվելով բառարանից։
4. Կարդալ համապատասխան հատվածը։

-Խելքին մոտ բաներ չես խոսում,- ասում էր թագավորը։

-Դե լավ, գնա էդ մարդուն բե՛ր, տեսնենք, թե ինձ ոնց է խաբում։ Եթե նրան չհաջողվի այդ բանն անել, զգուշացնում եմ՝ գլուխ ուսերիդ չի մնա։

Ես շատ եմ հպարտանում իմ խելքով և ուզում եմ, որ ինձ էլ խաբես։

5. Պատասխանել՝ կարդալով համապատասխան տողերը։
6. Բնագրից կարդա համապատասխան նախադասությունը։
7. Բնագրից կարդա համապատասխան նախադասությունը։
8. Բնագրից կարդա համապատասխան նախադասությունը։

Դաս 96. 2/1 Թագավորն ու խաբեբան: Հրամայական նախադասություն

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1.Կազմել պլան հարցական նախադասություններով:

2. Գրե՛ք թագավորին բնութագրող մի քանի բառ:

3. Այս հեքիաթը գրելով՝ հեղինակն ի՞նչ նպատակ էր հետապնդում:

4. Ընտրի՛ր ճիշտ տարբերակը և կարդա՛ համապատասխան հնչերանգով: Հեքիաթից ընտրված այս նախադասություններով թագավորը.

ա) պատմում է, բ) հարցնում է, գ) բացականչում է:

Գնա էդ մարդուն բե՛ր:

Գնա գործիքներդ բե՛ր:

Այդ երիտասարդին երկու հարյուր ոսկի՛ տուր:

5. Օգտվելով նկարներից՝ հարցերին պատասխանի՛ր հրամայական հնչերանգի նախադասություններով: Գրի՛ր պատասխան նախադասությունները: Ո՞ր բառի վրա կդնես շեշտը.

- Կառլո հայրիկն ի՞նչ է հորդորում Բուրատինոյին:
- Սև թագուհին ի՞նչ է հրամայում Ալիսին:
- Պարոն Լոլիկն ի՞նչ է կարգադրում Մաստինո շանը:
- Դնչիկն ի՞նչ է խրատում Վինի Թուխին:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1.Հարցական նախադասություններով պլանը գրվում է հարցերի տեսքով: Յուրաքանչյուր հարց վերաբերում է տեքստի որոշակի հատվածին: Հարցերը պետք է ձևակերպվեն այնպես, որ պատասխանները նպաստեն որևէ իմաստային ամփոփ հատվածի վերականգմանը: Հարցական նախադասությունների կազմման համար անհրաժեշտ է կիրառել հարցում արտահայտող բառեր:

2. Բնութագրել թագավորին:

Թագավորը դաժան, անխելք, մեծամիտ մարդ էր:

3. Եզրահանգում կատարել կարդացածից, իր կարծիքն արտահայտել: Օրինակ՝

Կարծում եմ նրա նպատակն էր ցույց տալ՝ ինչպես մարդկանց անխելքությունը, մեծամտությունը կարող է նրանց վնասել: Ինչպես կարող է մարդն իր խոսքով, հնարամտությամբ խաբել հիմարներին:

4. Ընտրել ճիշտ տարբերակը և կարդալ համապատասխան հնչերանգով: Հեքիաթից ընտրված այս նախադասություններով թագավորը.

ա) պատմում է, բ) հարցնում է, գ) բացականչում է, դ) հրամայում է :

Գնա էդ մարդուն բե՛ր:

Գնա գործիքներդ բե՛ր:

Այդ երիտասարդին երկու հարյուր ոսկի՛ տուր:

5. Օգտվելով նկարներից՝ հարցերին պատասխանել հրամայական հնչերանգի նախադասություններով: Գրել պատասխան նախադասությունները: Հրաման, հորդոր, խրատ արտահայտող բառի վրա կդնեն շեշտը:

- Կառլո հայրիկն ի՞նչ է հորդորում Բուրատինոյին:
- Դպրոցում քեզ լա՛վ կպահես, Բուրատինո:
- Սև թագուհին ի՞նչ է հրամայում Ալիսին:
- Լռի՛ր, դու չգիտես՝ ինչ ես խոսում:
- Պարոն Լոլիկն ի՞նչ է կարգադրում Մաստինո շանը:
- Գնա՛, գտի՛ր Չիպոլինոյին:
- Դնչիկն ի՞նչ է խրատում Վինի Թուխին:
- Այդքան շատ մի՛ կեր, փորդ կցավի:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Կազմել պլան հարցական նախադասություններով։
   1.Ու՞մ մասին է խորհրդատուն պատմում թագավորին։
   2.Ինչպե՞ս է արձագանքում թագավորը։
   3.Ինչպե՞ս է խորհրդատուն համոզում խաբեբային խաբել թագավորին։
   4.Ինչպե՞ս է խաբվում թագավորը։
2. Բնութագրել թագավորին։ Օրինակ՝
   Թագավորը դաժան, անխելք, մեծամիտ մարդ էր։
3. Եզրահանգում կատարել կարդացածից, իր կարծիքն արտահայտել։ Օրինակ՝
Կարծում եմ նրա նպատակն էր ցույց տալ՝ ինչպես մարդկանց անխելքությունը, մեծամտությունը կարող է նրանց վնասել։ Ինչպես կարող է մարդն իր խոսքով, հնարամտությամբ խաբել հիմարներին։
4. Ընտրել ճիշտ տարբերակը և կարդալ համապատասխան հնչերանգով։ Հեքիաթից ընտրված այս նախադասություններով թագավորը.

ա) պատմում է, բ) հարցնում է, գ) բացականչում է, դ) հրամայում է :

Գնա էդ մարդուն բե՛ր։

Գնա գործիքներդ բե՛ր։

Այդ երիտասարդին երկու հարյուր ոսկի՛ տուր։

5. Օգտվելով նկարներից՝ հարցերին պատասխանել հրամայական հնչերանգի նախադասություններով։ Գրել պատասխան նախադասությունները։ Հրաման, հորդոր, խրատ արտահայտող բառի վրա դնի շեշտը։

- Կառլո հայրիկն ի՞նչ է հորդորում Բուրատինոյին։
- Դպրոցում քեզ լա՛վ կպահես, Բուրատինո։
- Սև թագուհին ի՞նչ է հրամայում Ալիսին։
- Լռի՛ր, դու չգիտես՝ ինչ ես խոսում։
- Պարոն Լոլիկն ի՞նչ է կարգադրում Մաստինո շանը։
- Գնա՛, գտի՛ր Չիպոլինոյին։
- Դնչիկն ի՞նչ է խրատում Վինի Թուխին։
- Այդքան շատ մի՛ կեր, փորդ կցավի։

Դաս 97. 4/1 Քաջ Նազարը: Բացականչական նախադասություն/ I մաս/

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Ինչպիսի՞ն էր Նազարը:
2. Ի՞նչ անուն են դնում Նազարին:
3. Ի՞նչ է ուզում անել Նազարը:
4. Ինչը՞ ստիպեց կնոջը Նազարին տուն չթողել:
5. Ի՞նչ պատահեց այն բանից հետո, երբ Նազարը մնաց դրսում:
6. Նազարն ինչո՞ւ չգնաց քարվան կտրելու:
7. Ի՞նչ է նշանակում քարվան կտրել:
8. Ի՞նչ եք հասկանում ***ալարկոտ, լեղապատառ*** ասելով: Ո՞ր բառերով կփոխա-րինեիր:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Էս Նազարը մի անշնորհք ու ալարկոտ մարդ է լինում. է՜նքան էլ վախկոտ, է՜նքան էլ վախկոտ, որ մենակ ոտը ոտի առաջ չէր դնիլ, թեկուզ սպանեիր: Օրը մինչև իրիկուն կնկա կողքը կտրած՝ նրա հետ դուրս գնալիս դուրս էր գնում, տուն գալիս՝ տուն գալի:
2. Դրա համար էլ անունը դնում են Վախկոտ Նազար:
3. Ուզում է քարվան կտրի, բերի տունը լցնի:
4. Որ շատ կռվում է՝ կնիկը տուն է մտնում, դուռը փակում:
   — Հո՛ղեմ էդ վախկոտ գլուխդ, դե հիմի գնա քարվան կտրի:
5. Ճարը կտրած գնում է մի պատի տակի կուչ է գալի, դողալով գիշերն անց է կացնում, մինչև լուսը բացվում է: Նազարը խռոված պատի տակին արևկող արած սպասում է, որ կնիկը գա տուն տանի ու միտք է անում: Ամառովա շոգ օ՜ր՝ գազազած ճանճեր. ինքն էլ էնքան ալարկոտ, որ ալարում է քիթը սրբի— ճանճերը գալիս են սրա քիթ ու պռունգին վեր գալի, լցվում: Որ շատ նեղացնում են՝ ձեռը տանում է երեսին զարկում: Որ երեսին զարկում է՝ ճանճերը ջարդվում են, առաջին վեր թափում:
6. Նա չգնաց, որովհետև մտածեց, որ ինք ավելի ուժեղ է և ուրիշ գործեր կարող է անել, նույնիսկ կնոջից հեռացավ:
7. Քարվան կտրել- բեռ փոխադրող ուղտերի շարանը թալանել
8. Ալարկոտ - ծույլ, լեղապատառ - վախեցած, սարսափած

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Բնագրից կարդա համապատասխան հատվածը։
2. Պատասխանի ամբողջական նախադասությամբ։Օրինակ՝ *Դրա համար էլ անունը դնում են Վախկոտ Նազար։*
3. Բնագրից կարդա համապատասխան հատվածը։
4. Բնագրից կարդա համապատասխան հատվածը։
5. Բնագրից կարդա համապատասխան հատվածը։
6. Պատասխանի ամբողջական նախադասությամբ։ Օրինակ՝ *Նա չգնաց, որովհետև մտածեց, որ ինք ավելի ուժեղ է և ուրիշ գործեր կարող է անել, նույնիսկ կնոջից հեռացավ։*
7. Բացատրել արտահայտության իմաստը։

Քարվան կտրել- բեռ փոխադրող ուղտերի շարանը թալանել

8. Բացատրել բառերի իմաստը՝ օգտվելով բառարանից։

Ալարկոտ - ծույլ,

լեղապատառ - վախեցած, սարսափած

Դաս 98. 4/1 Քաջ Նազարը: Բացականչական նախադասություն/II մաս/

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Ինչո՞ւ են ճանճերը նստում Նազարի քիթ ու պռունգին:
2. Ի՞նչ է նշանակում պռունգ:
3. Ի՞նչ «քաջագործություն» կատարեց Նազարը:
4. Ինչո՞ւ է զարմանում Նազարը:
5. Նազարն ինչո՞ւ գնաց տերտերի մոտ:
6. Տերտերն ինչո՞ւ է գրում հայտնի երկտողը փալասի կտորի վրա:
7. Նազարն ինչպե՞ս է գյուղից հեռանում:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Ամառովա շոգ օ՛ր՝ գազազած ճանճեր. ինքն էլ էնքան ալարկոտ, որ ալարում է քիթը սրբի— ճանճերը գալիս են սրա քիթ ու պռունգին վեր գալի, լցվում: Որ շատ նեղացնում են՝ ձեռը տանում է երեսին զարկում: Որ երեսին զարկում է՝ ճանճերը ջարդվում են, առաջին վեր թափում:
2. Պռունգ – շրթունք
3. Որ շատ նեղացնում են՝ ձեռը տանում է երեսին զարկում: Որ երեսին զարկում է՝ ճանճերը ջարդվում են, առաջին վեր թափում:
   — Վա՛հ, էս ինչ էր… մնում է զարմացած:
   Ուզում է համրի թե մի զարկով քանիսն սպանեց՝ չի կարողանում: Մտածում է, որ հազարից պակաս չի լինիլ:
4. — Վա՛հ, ասում է, ես էսպես տղամարդ եմ էլել ու մինչև էսօր չեմ իմացե՛լ… Ես, որ մի զարկով կարող եմ հազար շունչ կենդանի ջարդել, էլ ի՞նչ եմ էս անպիտան կնգա կողքին վեր ընկել…
5. Պատմում է իր քաջագործութիւնը ու հետն էլ հայտնում է, որ պետք է իր կնգանից կորչի, միայն խնդրում է՝ իր արածը տերեէրը գրի, որ անհայտ չմնա, ամենքն էլ կարդան իմանան: Տրտերն էլ, կատակի համար, մի փալասի կտորի վրա գրում է.
   Անյաղթ հերոս Քաջ Նազար,
   Որ մին զարկի ջարդի հազար:
   Ու տալիս է իրեն:
6. Կատակի համար, բայց Նազարի խնդրանքով, որ բոլորն իմանան:

7. Նազարս էս փալասի կտորը մի փետի ծերի ամրացնում է, մի ժանգոտած թրի կտոր կապում մեջքը, իրենց հարևանի իշին նստում ու գյուղից հեռանում։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Բնագրից կարդալ համապատասխան հատվածը։
2. Բացատրի բառի իմաստը՝ օգտվելով բառարանից։
3. Բնագրից կարդալ համապատասխան հատվածը։
4. Բնագրից կարդալ համապատասխան հատվածը։
5. Բնագրից կարդալ համապատասխան հատվածը։
6. Բնագրից կարդալ համապատասխան հատվածը։
7. Բնագրից կարդալ համապատասխան հատվածը։

Դաս 99. 4/1 Քաջ Նազարը: Բացականչական նախադասություն
Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Որոշե՛ք հեքիաթի հենակետային բառերը կամ բառակապակցությունները:
2. Կազմել պլան՝ պատմողական նախադասություններով:
3. Օգտվելով հենակետային բառերից, պլանից՝ պատմել հեքիաթը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. *Հենակետային բառերը տեքստում արտահայտում են ամենագլխավոր իմաստը: Հենակետային բառերի օգնությամբ հնարավոր է վերհիշել հեքիաթի բովանդակությունը:*

Նազար, ալրկոտ վախկոտ, քարվան կտրել, դուրս անել, պռունգ, ճանճեր, ջարդել , տերտեր, վախից լեղապատառ լինել,անհաղթ հորոս, Քաջ Նազար, որ մին զարկի, ջարդի հազար:

2. Կազմել պլան՝ պատմողական նախադասություններով:

1. Նազարը մտածում է քարվան կտրի:
2. Կինը դրսում է թողնում Նազարին:
3. Նազարը ջարդում է մի քանի ճանճ:
4. Նազարը գնում է տերտերի մոտ:
5. Վերցնում է դրոշն ու հեռանում կնկանից էլ, գյուղից էլ:

3. Օգտվելով հենակետային բառերից, պլանից՝ պատմել հեքիաթը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Որոշել հեքիաթի հենակետային բառերը կամ բառակապակցությունները:

Նազար, ալրկոտ վախկոտ, քարվան կտրել, դուրս անել, պռունգ, ճանճեր, ջարդել , տերտեր, վախից լեղապատառ լինել,անհաղթ հորոս, Քաջ Նազար, որ մին զարկի, ջարդի հազար:

2. Կազմել պլան՝ պատմողական նախադասություններով:

1. Նազարը մտածում է քարվան կտրի:
2. Կինը դրսում է թողնում Նազարին:
3. Նազարը ջարդում է մի քանի ճանճ:

4. Նազարը գնում է տերտերի մոտ։
5. Վերցնում է դրոշն ու հեռանում կնկանից էլ, գյուղից էլ։

3. Օգտվելով հենակետային բառերից, պլանից՝ պատմել հեքիաթը։

Դաս 100. 4/1 Քաջ Նազարը: Բացականչական նախադասություն

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Կազմել նախադասություններ՝ արտահայտելով ներկայացված դեմքերի զգացմունքները և նախադասություններում օգտագործելով հետևյալ բառերը. Վայ, վահ, ախ, երանի, օյ, ուխ, վույ

Ուրախ	
Վախեցած	
Զայրացած	
Հպարտ	
Զարմացած	
Տխուր	
Ցանկություն	
Ափսոսանք	

2. Բնագրից դուրս գրել բացականչական նախադասությունները:
3.Ո՞ր նկարը, ինչ հույզով է արտահայտվում: Տեղադրել բառերը նկարների տակ:
Վախ, ցանկություն, ուրախություն, ափսոսանք:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Կազմել նախադասություններ՝ արտահայտելով ներկայացված դեմքերի զգացմունքները և նախադասություններում օգտագործելով հետևյալ բառերը. Վայ, վահ, ախ, երանի, օյ, ուխ, վույ

Ուրախություն, հիացմունք, ցանկություն, զարմանք, ափսոսանք, վախ և այլ զգացմունքներ արտահայտող նախադասությունը կոչվում է բացականչական նախադասություն:

Բացականչություն արտահայտող բառի վերջին վանկի ձայնավորի վրա դրված է բացականչական նշան (՛):

2. *Ուրախություն, հիացմունք, ցանկություն, զարմանք, ափսոսանք, վախ և այլ զգացմունքներ արտահայտող նախադասությունը կոչվում է բացականչական նախադասություն:*

Բացականչություն արտահայտող բառի վերջին վանկի ձայնավորի վրա դրված է բացականչական նշան (՛):

Օրինակ՝ -Ա՛յ կնիկ, ի՛նչ քարվան կտրելու գիշեր է…
- Վա՛հ, - ասում է ,- ես էսպես տղամարդ եմ եղել ու մինչև էսօր չեմ մացել…

3. Ո՞ր նկարը, ինչ հույզով է արտահայտվում։ Տեղադրել բառերը նկարների տակ։

1. ուրախություն
2. ցանկություն
3. ափսոսանք
4. վախ

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Կազմել նախադասություններ՝ արտահայտելով ներկայացված դեմքերի զգացմունքները և նախադասություններում օգտագործելով հետևյալ բառերը. Վայ, վահ, ախ, երանի, օյ, ուխ, վույ

Ուրախ	Ու՛խ, դասերս ավարտեցի։
Վախեցած	Վա՛յ, ես չեմ կարող անցնել կամուրջը։
Զայրացած	
Հպարտ	
Զարմացած	
Տխուր	
Ցանկություն	
Ափսոսանք	

2. Բնագրից դուրս գրել բացականչական նախադասությունները։

Օրինակ՝ -Ա՜յ կնիկ, ի՜նչ քարվան կտրելու գիշեր է…

- Վա՜հ, - ասում է ,- ես էսպես տղամարդ եմ եղել ու մինչև էսօր չեմ մացել…

3. կռահել՝ ո՞ր նկարը, ինչ հույզով է արտահայտվում: Տեղադրել բառերը նկարների տակ:

1. ուրախություն 3. ափսոսանք
2. ցանկություն 4. վախ

Դաս 1. Ղազարոս Աղայան, «Անահիտ» Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Ո՞վ է գրել «Անահիտ» հեքիաթը։
2. Ո՞ւր էին գնում պալատականները։
3. Ինչո՞ւ գնացին պալատականները Հացիկ գյուղ։
4. Ի՞նչ էին բերել իրենց հետ պալատականները։
5. Ինչո՞վ էր զբաղվում Անահիտը։
6. Անահիտը համաձայնե՞ց ամուսնանալ Վաչագանի հետ։
7. Ինչո՞ւ Անահիտը չցանկացավ ամուսնանալ Վաչագանի հետ։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Անահիտ հեքիաթը գրել է Ղազարոս Աղայանը։
2. Պալատականները գնում էին Հացիկ գյուղ՝ Անահիտենց տուն։
3. Պալատականները գնացին Հացիկ գյուղ՝ հարսնախոսության։
4. Պալատականները բերել էին ընծաներ, ոսկե զարդարանքներ և մետաքսե հագուստներ։
5. Անահիտը զբաղվում էր գորգագործությամբ, սովորեցնում էր իր աշակերտներին գորգ գործել և կարդալ։
6. Ո՛չ։
7. Անահիտը չցանկացավ ամուսնանալ Վաչագանի հետ, քանի որ Վաչագանը ոչ մի արհեստ չգիտեր։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Հիշել և մյուս հեղինակներից առանձնացնել նշված հեքիաթի հեղինակին։
Օրինակ՝ Տրված հեղինակներից ո՞վ է գրել Անահիտ հեքիաթը։

   ա. Հովհաննես Թումանյան
   բ. Ղազարոս Աղայան
   գ..Սիլվա Կապուտիկյան
2. Բնագրի սկզնամասից գտնել և առանձնացնել այն հատվածը, որում նշված է, թե ո՛ւր էին գնում պալատականները։
3. Նշել հերոսների գործողությունների պատճառը։
4. Տեքստից փաստեր նշել, նախադասության մտքից փորձել կռահել բառի իմաստը։

5. Բնագրից տեղեկատվություն դուրս բերել և նշել հերոսի զբաղմունքի, մասնագիտության վերաբերյալ։
6. Տեղեկատվություն դուրս բերել և նշել հերոսների արարքները։
7. Նշել հերոսների արարքների պատճառները։ Վեր հանել տեքստի հիմնական միտքը։

Դաս 2. Ղազարոս Աղայան, «Անահիտ»: Նախադասության տեսակները՝ ըստ արտասանության երանգի

Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Ի՞նչ գիտես Ղազարոս Աղայանի մասին։
2. Ո՞վ էր Առանը։
3. Առանն ինչպե՞ս դիմավորեց պալատականներին։
4. Ի՞նչ պայման դրեց Անահիտը թագավորի որդու հետ ամուսնանալու համար։
5. Առանն ինչպե՞ս վերաբերեց Անահիտի պահանջին։
6. Թագավորն ու թագուհին համաձա՞յն էին Վաչագանի ընտրության հետ։
7. Որո՞նք են ըստ հնչերանգի նախադասությունների տեսակները։
8. Տեքստի ո՞ր նախադասությունն է հարցական։
9. Տեքստի ո՞ր նախադասությունն է պատմողական։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Ղազարոս Աղայանը հայ գրող է, մանկավարժ, հեքիաթագիր։
2. Առանը Անահիտի հայրն էր։
3. Առանը սիրով ընդունեց պալատականներին և շնորհավորեց նրանց գալը։
4. «Եթե կամենում է, որ ես իր կինը լինեմ, թող նախ և առաջ մի արհեստ սովորի»։
5. Առանը հավանություն տվեց աղջկա ասածին։
6. Ո՛չ։
7. Ըստ հնչերանգի՝ նախադասությունները լինում են պատմողական, հարցական, հրամայական և բացականչական։
8. Կարելի՞ է, արդյոք, իմանալ, թե այդ պատիվն ինչո՞ւ է արել ինձ թագավորը։
9. Իշխանները վեր կացան գնացին և ինչ որ տեսել, լսել էին, մի առ մի պատմեցին թագավորին։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Ճանաչել, տեղեկություն հայտնել իրեն ծանոթ հայ գրողների մասին։
2. Նշել տեղեկություն հերոսների ազգակցական կապի վերաբերյալ։

3. Նշել հերոսի վերաբերմունքը տվյալ իրադարձության հետ կապված։
4. Բնագրից առանձնացնել և կարդալ հերոսի խոսքը։
5. Նշել հերոսի վերաբերմունքը տվյալ իրադարձության հետ կապված։
6. Նշել հերոսի վերաբերմունքը տվյալ իրադարձության հետ կապված։
7. Խոսքում ճիշտ հնչերանգով կիրառի տարբեր նախադասություններ։
8. Տարբերակել և խոսքում ճիշտ հնչերանգով կիրառել տարբեր նախադասություններ։
9. Տարբերակել և խոսքում ճիշտ հնչերանգով կիրառել տարբեր նախադասություններ։

Թեմատիկ պլանավորում

Դաս 3. Ղազարոս Աղայան, «Անահիտ»:Նախադասության տեսակները՝ ըստ արտասանության երանգի

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Ո՞րն է այս հեքիաթի հիմնական միտքը:
2. Երբ Վաչագանն իմանա Անահիտի պահանջի մասին, ինչպե՞ս կարձագանքի:
3. Դու էլ ես կարծում, որ թագավորի որդուն անհրաժեշտ է որևէ արհեստ իմանալ:
4. Կա մի բան, որի հետ դու համաձայն չէիր:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Այս հեքիաթի հիմնական միտքն այն է, որ ցանկացած մարդ պետք է որևէ արհեստ իմանա:
2. Սովորողը կարտահայտի սեփական կարծիքը:
3. Սովորողը կարտահայտի սեփական կարծիքը:
4. Սովորողը կարտահայտի սեփական կարծիքը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Վեր հանել և առանձնացնել այն տողերը, որում ամփոփված է հեքիաթի հիմնական միտքը:
2. Սովորողը բանավոր կապակցված խոսքով արտահայտի սեփական մտորումները:
3. Սովորողը բանավոր կապակցված խոսքով արտահայտի սեփական մտորումները:
4. Ինքնուրույն արտահայտի սեփական տեսակետը:

Շարունակել նախադասությունը:

Ես համաձայն եմ այն մտքի հետ, որ...

Ես համաձայն չեմ այն մտքի հետ, որ...

Թեմատիկ պլանավորում

Դաս 4. «Յոթ սարից, յոթ ձորից այն կողմ» թեմայի ամփոփում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Որոշի՛ր՝ ո՛ր հեքիաթի հերոսներն են։



2. Այս բաժնի ո՞ր բնագիրը քեզ ամենաշատը դուր եկավ։
3. Ո՞րն է այս բաժնի՝ քո ամենասիրելի հերոսը։ Ինչո՞ւ։
4. Քեզ ծանոթ ո՞ր հեղինակներին հանդիպեցիր այս բաժնում։
5. Հեքիաթի ի՞նչ բնորոշ առանձնահատկություններ գիտես։
6. Ըստ արտասանության երանգի՝ քանի՞ տեսակի են լինում նախադասությունները, ո՞րոնք են դրանք։
7. Ի՞նչ չափածո ստեղծագործություն կար այս թեմայում։
8. Ո՞ր ստեղծագործությունն էր արձակ այս թեմայում։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Նկարին նայելով՝ կկողմնորոշվի և կնշի նկարի հերոսներին։
2. Սովորողը կարտահայտի սեփական կարծիքը։
3. Սովորողը կարտահայտի սեփական կարծիքը։
4. Հովհաննես Թումանյան, Ղազարոս Աղայան, Ջաննի Ռոդարի։
5. Բանահյուսական ստեղծագործություն է։ Հեքիաթը լինում է կենդանական, հրաշապատում և իրապատում։ Մեծ մասին բնորոշ է նույն սկիզբը, ինչպես՝ «Յոթ սարից, յոթ սարից այն կողմ», «Լինում է, չի լինում», «Կար-չկար», «Ժուկով ժամանակով», «Ժամանակով», «Չգիտեմ ո՛ր երկրում, ո՛ր թագավորության մեջ»։ Կարող են հեքիաթները ավարտվել նման նախադասությամբ՝ «Երկնքից ընկավ երեք խնձոր»։
6. Ըստ արտասանության երանգի՝ նախադասությունները լինում են չորս տեսակ՝ պատմողական, հարցական, հրամայական, բացականչական։

7. Չափածո ստեղծագործությունը կարճ և հանգավորված տողերով է գրվում:
8. Արձակ ստեղծագործությունը երկար տողերով է գրվում:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Համապատասխանեցնել ստեղծագործության հերոսին և վերնագիրը:

«Բուրատինոն իմանում է ոսկե բանալու գաղտնիքը»	Վաչագան
«Քաջ արտուտիկը»	Կարաբաս Բարաբաս
«Անահիտը»	արտուտիկ
«Քաջ Նազարը»	Քաջ Նազարը

2. Արտահայտել սեփական հույզերը:
   Շարունակի՛ր նախադասությունը:
   Ինձ ամենից շատ դուր եկավ ——————————————————————
   ստեղծագործությունը:
3. Արտահայտել սեփական հույզերը:
   Շարունակի՛ր նախադասությունը:
   Ինձ ամենից շատ դուր եկավ ——————————————————————
   հերոսը, որովհետև——————————————————————————:
4. Նշել տրված հեղինակների իրեն ծանոթ մեկ ստեղծագործություն:
   Հովհաննես Թումանյան - ——————————————————
   Ղազարոս Աղայան - ——————————————————
   Ջաննի Ռոդարի - ——————————————————
5. Ձեռք բերած գիտելիքները կիրառել:
   Օրինակ՝
   Ա. Հրաշքներ պատմող գրվածք:
   Բ. Կենդանիների մասին հեքիաթներն անվանում են ——————:
   Գ. Երկնքից ——————— խնձոր ընկավ:
   Դ. Լինում է, չի ——————:
   Ե. Գրողների ստեղծած հեքիաթներն անվանում են——————————:
   Զ. Հեքիաթում գործողությունները սովորաբար կատարվում են ——————
   սարից, ——————— ձորից այն կողմ:



զ.

գ.

դ.

ե.

6. Տարբերակել նախադասությունները՝ ըստ հնչերանգի։
   Օրինակ՝
   Ընդգծի՛ր նախադասությունները հետևյալ գույներով՝ պատմողական՝ դեղին, հրամայական՝ կապույտ, բացականչական՝ կարմիր, հարցական՝ կանաչ։

   Ի՜նչ ցուրտ է, դիմանալ չի լինում։
   Լսի՛ր, գոնե մկնավարի ուտե՛լ սովորիր։
   Ի՞նչ անեին ճամփորդները։
   Ամայի ճանապարհով քայլում էին երեք ճամփորդ։
   Բա՛ց արա գաղտնիքը, դժբա՛խտ, բա՛ց արա գաղտնիքը...

7. Տարբերակել արձակ և չափածո տեղծագործությունները։
8. Օրինակ՝
   «Յոթ սարից, յոթ ձորից այն կողմ» թեմայի բնագրերից ընտրի՛ր և գրի՛ր մեկ արձակ ստեղծագործություն։
   _____

9. Տարբերակել արձակ և չափածո տեղծագործությունները։
   Օրինակ՝
   «Յոթ սարից, յոթ ձորից այն կողմ» թեմայի բնագրերից ընտրի՛ր և գրի՛ր մեկ չափածո ստեղծագործություն։
   _____

Դաս 5. «Այս զարմանահրաշ մոլորակը» թեմայի մուտք

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար՝

1. Ի՞նչ ես կարծում, սկզբնանկարում ո՞ր մոլորակն է պատկերված։
2. Ի՞նչ զարմանահրաշ երևույթներ են լինում Երկիր մոլորակում։
3. Ի՞նչ զարմանահրաշ վայրեր գիտես Երկիր մոլորակի վրա։
4. Երկիր մոլորակում տեղի ունեցող զարմանալի իրադարձություններ, ի՞նչ խնդիրներ գիտես։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Պետք է իմանա, որ միայն Երկիր մոլորակի վրա կյանք կա, պատկերված առարկաները և երևույթները տեղի են ունենում Երկիր մոլորակի վրա։
2. Սովորողը կարտահայտի սեփական կարծիքը։
3. Սովորողը կարտահայտի սեփական կարծիքը։
4. Սովորողը կարտահայտի սեփական կարծիքը։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Թեմատիկ խմբի սկզբնանկարի (Երկիր մոլորակի, նրա կառուցվածքի և կյանքի մասին) վերաբերյալ զրուցել։
2. Բանավոր կապակցված խոսքով ստեղծագործաբար պատասխանել հարցերին։
3. Բանավոր խոսքով ներկայացնել իր տեսածը, լսածը, զգացածը։
4. Բանավոր խոսքով ներկայացնել իր տեսածը, լսածը, զգացածը։

Թեմատիկ պլանավորում

Դաս 6. Աղասի Այվազյան, «Խայծը»

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Ովքե՞ր են ստեղծագործության հերոսները։
2. Քո կարծիքով ո՞վ հանեց որդին հողե կացարանից։
3. Ի՞նչ ես հասկանում խայծ ասելով։
4. Ի՞նչ ես հասկանում «լուսաձեգ ասելով»։
5. Ի՞նչ է հորդորում որդը ձկանը։
6. Որդը ե՞րբ խայծ դարձավ։
7. Ինչպե՞ս ավարտվեց պատմվածքը։ Դու սպասո՞ւմ էիր այդպիսի ավարտի։
8. Ու՞մ է դիմում հեղինակը.

—Ձկնի՛կ, լո՛ղ տուր, լո՛ղ արա։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Ձուկն ու որդը։
2. Ձկնորսը հանեց որդին հողե կացարանից։
3. Խայծ ասելով հասկանում եմ միս, որդ, հաց, որն անցկացնում են կարթի վրա։
4. Լուսաձեգ ասելով հասկանում եմ լուսաբաց, այգաբաց, առավոտ։
5. Որդը ձկանը հորդորում է չուտել իրեն, քանի որ ինքը խայծ է։
6. Որդը դարձավ խայծ, երբ ձկնորսը իրեն անցկացրեց ձկնորսական կարթին։
7. Ձուկը կուլ տվեց խայծը։
8. Հեղինակը դիմում է ձկնիկին։ Ձկնիկ բառին կանվանենք կոչական։
   Այն բառերը, որոնք ցույց են տալիս, թե ում է ուղղված խոսքը, կոչվում է կոչական։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Առանձնացնել գլխավոր հերոսներին։
2. Կարդալ այն հատվածը, որում կա հարցի պատասխանը։
3. Մեկնաբանել տեքստի իմաստակիր բառերը։
4. Մեկնաբանել տեքստի իմաստակիր բառերը։
5. Կարդալ այն հատվածը, որում կա հարցի պատասխանը։
6. Իմանալ տեքստի իմաստակիր բառերը և օգտագործել խոսքում։
7. Առանձնացնել պատմվածքի վերջաբանը, արտահայտել սեփական կարծիքը դրա վերաբերյալ։
8. Նախադասության մեջ ճանաչել կոչականը։

Դաս 7 - Աղասի Այվազյան, «Խայծը» Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Ի՞նչ նպատակով ձկնորսն օգտագործեց որդին։
2. Ի՞նչ զգացողություններ ունեցար։
3. Բնութագրի՛ր ձկանը։
4. Բնութագրի՛ր որդին։
5. Կա՞ տեքստում մի բան, որ քեզ զարմացրեց։
6. Խոսքդ ուղղի՛ր ձկնիկին. ի՞նչ կասեիր նրան։
7. Խոսքդ ուղղի՛ր որդին. ի՞նչ կասեիր նրան։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Ձկնորսը որդին օգտագործեց՝ որպես խայծ։
2. Սովորողը կարտահայտի սեփական կարծիքը։
3. Ընտրել ճիշտ պատասխանը։ Ձուկը.
   Ա. կասկածամիտ էր Բ. վստահում էր դիմացինին։
4. Ընտրել ճիշտ պատասխանը։ Որդը.
   Ա. ճշմատախոս Բ. ստախոս Գ. անտարբեր
5. Սովորողը կարտահայտի սեփական կարծիքը։
6. Սովորողը կարտահայտի սեփական կարծիքը։
7. Սովորողը կարտահայտի սեփական կարծիքը։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Մեկնաբանել տեքստի իմաստակիր բառերը և խոսքում կիրառել։
2. Բանավոր կապակցված խոսքով արտահայտել սեփական կարծիքը, վերաբերմունքը, հույզերը։
3. Վերլուծել հերոսների արարքները, բնութագրել նրանց, արտահայտել վերաբերմունք։
4. Վերլուծել հերոսների արարքները, բնութագրել նրանց, արտահայտել վերաբերմունք։
5. Բանավոր կապակցված խոսքով արտահայտել սեփական կարծիքը, հույզերը։
6. Կազմել կոչական պարունակող պարզ նախադասություններ։
7. Կազմել կոչական պարունակող պարզ նախադասություններ։

Թեմատիկ պլանավորում

Դաս 8. Երբ մտքերը սառչում են օդում: Թվական

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1.Որտե՞ղ էին մտքերը սառչում:
2. Ովքե՞ր էին հերոսները:
3.Ինչու՞ էր «Բևեռը դարձել իսկական հիմարիկների մի աշխարհ»:
4.Արևադարձում ի՞նչ փոփոխություն զգաց իր մեջ Ծով Ա. Ցուլը:
5.Ի՞նչ են նշանակում *միլիարդ, փոկ, բևեռ, կիսախուփ* բառերը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1.Մտքերը սառչում էին Բևեռում:
2.Հերոսները Ծով Ա. Ցուլն ու Օձ Ա. Ձուկն են:
3. Բոլորը դադարել էին որևէ բան մտածելուց, որովհետև վախենում էին, որ իրենց մտքերը կկարդան ու դարձել էին հիմարիկներ:
4.Նա զգաց, որ սկսել է մտածել:
5.Միլիարդը շատ մեծ թիվ է, փոկը ծովային կաթնասուն կենդանի է, բևեռները երկրագնդի վերևի և ներքևի ծայրակետերն են (երկրի պտտման երևակայական առանցքի ծայրակետ), կիսախուփը կիսափակն է:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1.Ընտրել ճիշտ տարբերակը՝ որտեղ էին սառչում մտքերը.
ա. Արևադարձում բ. Բևեռում
2. Կարդալ երկխոսություն, որտեղ հերոսներն են Ծով Ա. Ցուլն ու Օձ Ա. Ձուկը:
3. Տեքստի սկզբնամասում գտնել այն նախադասությունը, որտեղից իմանում ենք, որ բոլորը դադարել էին որևէ բան մտածելուց, որովհետև վախենում էին, որ իրենց մտքերը կկարդան ու դարձել էին հիմարիկներ:
4.Գտնել և ընթերցել այն նախադասությունը, որից իմանում ենք, որ Ծով Ա. Ցուլը զգաց, որ մտածում է՝ «Հանկարծ Ծով Ա. Ցուլը նկատեց, որ ինքն էլ Օձ Ա. Ձկան մասին է վատ բաներ մտածում»:
5.Կարողանա կազմել նախադասություններ նորածանոթ բառերով:

Թեմատիկ պլանավորում

Դաս 9 - Երբ մտքերը սառչում են օդում (2-րդ մաս): Թվական

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Ի՞նչ պատահեց Օձ Ա. Զկանը և ինչու՞:
2. Կատարվածից ի՞նչ եզրակացրեց Ծով Ա. Ցուլը:
3. Ծով Ա. Ցուլն ինչու՞ անմիջապես չվերադարձավ Բևեռ:
4. Ինչու՞ Բևեռում մենակ մնաց Ծով Ա. Ցուլը:
5. Ի՞նչ է թվականը: Ինչ թվականների հանդիպեցիր տեքստում:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Օձ Ա. Զուկը հրապուրվեց Ա. Ֆրիկացու երգով, ընկավ ուռկանն ու դարձավ նրա ու նրա ընտանիքի կերակուրը:
2. Ծով Ա. Ցուլը սարսափեց կատարվածից ու որոշեց, որ Բևեռում ավելի լավ է,թեկուզ չեն մտածում:
3. Նա անմիջապես չվերադարձավ Բևեռ, որովհետև նրան դուր էր եկել մտածել մի բան, անել մի այլ բան:
4. Նա մենակ մնաց, որովհետև մտածել էր սովորել և իր մտածածները սառչում էին օդում: Բոլորը տեսնում էին, նեղանում էին:
5. Պետք է իմանա,որ թվականը թվեր են:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Կարդալ բնագրում համապատասխան հատվածը:
2. Ընտրել և կարդալ Ծով Ա. Ցուլի մտորումները:
3. Կարդալ նախադասությունը:
4. Կարդալ հատվածը և մեկ նախադասությամբ շարունակել,թե ինչ է մտածում այժմ Ծով Ա. Ցուլը:
5. Բնագրից դուրս բերի թվականները՝ միլիոն, միլիարդ: Կազմի դրանցով բառակապակցություն կամ նախադասություն:

Դաս 10. Երբ մտքերը սառչում են օդում: Թվական

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Ի՞նչ իմացան, ինչ տեղեկություններ քաղեցին տեքստից:
2. Ի՞նչ լավ, դրական երևույթներ նկատեցին տեքստում:
3. Ի՞նչ բացասական, վատ երևույթները նկատեցին տեքստում:
4. Ի՞նչ զգացումներ ապրեցին Ծով Ա. Ցուլն ու Ծով Ա. Ձուկը Բևեռում, Արևադարձում:
5. Տեքստից դո՛ւրս գրիր երկուական հարցական և բացականչական նախադասություններ:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Իմացան, որ Բևեռում ցուրտ է , իսկ Արևադարձում տաք,որ Բևեռում մտքերը սառչում են, դրա համար էլ չեն մտածում և այլն:
2. Լավ էր, որ Ծով Ա. Ցուլը սկսեց մտածել, վերադարձավ իր հայրենիք:
3. Վատ էր, որ միայն վատ բաներ էի մտածում,որ Ծով Ա. Ձկանը կերան և այլն:
4. Նրանք զարմացան, ուրախացան, սարսափեցին, տխրեցին:
5. Դուրս կբերի հարցում արտահայտող,հարցական նշանով, բացականչական նշանով, հույզ արտահայտող նախադասություններ:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Ամբողջական նախադասությամբ պատասխանել՝
   Բևեռում շատ ցուրտ է, քան արևադարձում:
2. Շարունակել նախադասությունը.
   Լավ էր, որ…..
   Վատ էր, որ…..
3. Լրացնել զգացմունք արտահայտող բառը.
   Քիչ անց Օձ Ա. Ձուկն արդեն տապակված էր ու խժռված: Ծով Ա. Ցուլը դա որ տեսավ, …… /սարսափեց, ուրախացավ/: Ի վերջո Ծով Ա. Ցուլը …. /զարմացավ, ձանձրացավ/ մի բան մտածելուց և մի օր վերադարձավ Բևեռ:
4. Դուրս բերել հարցական, բացականչական նշանով նախադասություններ:

Թեմատիկ պլանավորում

Դաս 11. Երբ մտքերը սառչում են օդում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Ե՞րբ են կատարվում իրադարձությունները:
2. Ինչպիսի՞ եղանակ էր Բևեռում:
3. Ովքե՞ր էին բնակիչները:
4. Ինչպե՞ս էին ապրում նրանք:
5. Ինչու՞ վերադարձան Արևադարձից:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1.Դեպքերը կատարվում են միլիոնավոր տարիներ առաջ՝ Բևեռում:

2.Ջերմաստիճանը միլիարդ աստիճան ցածր էր զրոյից և մտքերը նույնիսկ սառչում էին:

3.Բևեռի բնակիչները արջերն էին, պինգվինները, փոկերը, մարդիկ, Ծով Ա. Ցուլն ու Ծով Ա. Ձուկը:

4.Նրանք դադարել էին մտածել, որովհետև չէին ուզում,որ տեսնեին իրենց մտքերը և հիմարացել էին:

5.Ծով Ա. Ցուլը վերադարձավ Բևեռ, որովհետև Արևադարձում ձանձրացավ մտածել մի բան, անել մի այլ բան: Հասկացավ, որ տնից լավ տեղ չկա:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Ընտրել ճիշտ պատասխանը.
   ա. մեկ բ. միլիարդ գ. միլիոն
2. Ընտրել ճիշտ պատասխանը.
   ա. տաք բ. ցուրտ գ. զով
3. Նշել բնակիչներին:
4. Նկարագրել կյանքը Բևեռում:
5. Պատմել վերջաբանը:

Դաս 12. Գուլիվերի Ճանապարհորդությունը

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Ի՞նչ են զգում մարդիկ, երբ ընկերները նրան «չեն նկատում», անտեսում են, հեգնում կամ չեն ուզում խաղալ:
2. Ի՞նչ եք զգում, երբ ընկերներն օգնում են ձեզ:
3. Ինչպիսի՞ն կուզեիք լինել ձեր ընկերները:
4. Ո՞ւր էր ընկել Գուլիվերը:
5. Ինչպե՞ս ընդունեցին Գուլիվերին մատնաչափիկ մարդկային արարածները:
6. Գուլիվերի արածներից ի՞նչը հրաշք թվաց մարդուկներին:
7. Գուլիվերը մարդուկների ո՞ր արարքն էր համարում անսովոր քաջություն:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Մարդիկ տխրում են, միայնակ են զգում իրենց, երբ իրենց հետ չեն ուզում շփվել:
2. Ուրախանում են, երբ ընկերներն օգնում են իրենց:
3. Կուզեն, որ իրենց ընկերները բարի, հոգատար ու ընկերասեր լինեն:
4. Գուլիվերն ընկել էր Թզուկների երկիր:
5. Նրանք ահաբեկված էին, վախեցած. կապկպել էին Գուլիվերին, որ իրենց չվնասի:
6. Մարդուկների համար հրաշք էր, որ Գուլիվերը կերավ ամբողջ ուտելիքն ու խմեց քնաբերով գինին:
7. Գուլիվերը զարմացել էր նրանց քաջության վրա, որ մարդուկները չեն վախենում իրենից, որ կարող է մի մատի շարժումով ոչնչացնել նրանց:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Կկարողանա նկարագրել իր զգացողությունները, կնկարագրի իր ընկերոջը:
2. Ինպե՞ս կանվանես այն երկիրը, ուր ընկել էր Գուլիվերը.
   ա. Հսկաների երկիր բ. Թզուկների երկիր
3. Կկարողանա ընթերցել համապատասխան հատվածը:
4. Կկարդա համապատասխան նախադասությունը:
5. Կգտնի և կկարդա վերջաբանը:

Դաս 13. Գուլիվերի Ճանապարհորդությունը (վերարտադրել, պատմել տեքստը)

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Գուլիվերն ինչո՞ւ չկարողացավ շարժվել:
2. Ինչո՞ւ վախեցան մարդուկները:
3. Ի՞նչ պատահեց, երբ Գուլիվերը կարողացավ ձախ ձեռքը պոկել գետնից:
4. Ի՞նչ արեցին մարդուկները մինչև մութն ընկնելը:
5. Գուլիվերն ի՞նչ խնդրեց մարդուկներից:
6. Ի՞նչ հրաշքներ արեց Գուլիվերը:
7. Մարդուկներն ինչո՞ւ էին ուրախությունից պարում:
8. Ի՞նչ էին անում մարդուկները, երբ Գուլիվերը կիսաքուն պառկած էր:
9. Ինչպե՞ս է կոչականը առանձնանում նախադասության մեջ:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Չկարողացավ շարժվել, որովհետև մարդուկները նրան կապկպել էին:
2. Նա գոռաց, և մարդուկները վախեցան:
3. Հարյուրավոր նետեր սուրացին դեպի Գուլիվերը:
4. Աստիճան էին ամրացնում նրա մոտ, որ բարձրանան վրան:
5. Գուլիվերը ուտելիք խնդրեց՝ ցույց տալով բերանը:
6. Գուլիվերը կերավ և խմեց ամբողջը, ինչ բերեցին մարդուկները:
7. Նրանք ուրախությունից պարում էին, որ կարողացան իրագործել մտածածը՝ քնեցնել Գուլիվերին:
8. Կասի իր պատկերացրածը, օրինակ, ավելի ուժեղ կապկպեցին կամ տեղափոխեցին այլ վայր:
9. Կոչականը առանձնացվում է նախադասության մյուս բառերից ստորակետով և կրում է շեշտ:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1 . Կկարողանա հարցերի օգնությամբ համառոտ պատմել պատմությունը:
Գուլիվերը ցանկացավ բարձրացնել ձեռքը, որ տրորի աչքերը, բայց չկարողացավ, որովհետև մարդուկները կապկպել էին ձեռքերը:
2. Երբ քթի տակ տեսավ մարդուկներին, վախից բարձր գոռաց:
3.Տեղադրել ճիշտ բառը.
Երբ Գուլիվերը ձեռքը պոկեց գետնից, հարյուրավոր / գնդակներ, քարեր, նետեր/ սուրացին դեպի Գուլիվերը:
4. Ընտրել ճիշտ բառը.

Մի քանի մարդուկներ / կամուրջ, սանդուղք/ էին ամրացնում նրան:
5. Վերադասավորել բառերը, ստանալ նախադասություն.
Մոտեցրեց,Գուլիվերը ,ուտել, բերանին , հասկացրեց, և, մատները,որ, է, ուզում :
6. Ընտրել , թե ինչն էր հրաշքը
Ա. քնելը Բ. ուտել և խմելը
7. Ընտրել ճիշտ տարբերակը.
Ա . Ուրախությունից պարում էին:
Բ. Որախությունից վազում էին:
Գ. Ուրախությունից լալիս էին:
8. Կարտահայտի իր տարբերակը:
9. Կկարողանա կազմել կոչական պարունակող պարզ նախադասություններ:
Օրինակ՝ Գուլիվե՛ր, դու շատ բարի գտնվեցիր: Մարդուկնե՛ր, խղճացե՛ք, Գուլիվերին:

Դաս 14։ Բարոն Մյունխհաուզենի ճանապարհորդությունը դեպի Լուսին։ (կարդալ տեքստը) Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Լրացնել խաչբառը և պարզել՝ ինչ է նշանակում <<Մյունխհաուզեն>>։
2. Մյունխհաուզենն ինչպե՞ս դարձավ մեղուների հովիվ։
3.Նա ինչու՞ և ինչպե՞ս հասավ Լուսին։
4. Ինչպե՞ս իջավ Լուսնից։
5. Ինչպե՞ս դուրս եկավ մեկ ու կես մղոն խորությունից։
6. Ի՞նչ է նշանակում հարդ, մղոն, բարոն, մագլցել, բակլա։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.



1.

2.Կռվի ժամանակ գերի ընկավ թեև կռվում էր վագրի պես և իրեն նշանակեցին մեղուների հովիվ։

3. Գնաց փնտրելու կորած մեղուներին։ Արծաթե կացնով ուզեց խփել արջերին,բայց կացինն ընկավ Լուսնի վրա։ Բակլա ցանեց, որը շուտ էր աճում ու բարձրացավ Լուսին։

4.Հարդից պարան հյուսեց և իջավ։ Պարանը կարճ ստացվեց և անընդհատ կտրեց,կպցրեց ներքևի ծայրին,մինչև երկիրը երևաց։Հանկարծ թափով ընկավ ցած՝ գետնի մեջ կես մղոն խորությամբ փոս բացելով։

5.Եղունգներով աստիճաններ սարքեց և դուրս եկավ փոսից։

6.հարդ - հացահատիկի ցողունի չորացած, մանրացրած կտորներ
մղոն- երկարության չափ,մոտ մեկ ու կես կիլոմետր
բարոն -պարոն, իշխան
մագլցել-մագիլներով կառչելով բարձրանալ վեր
բակլա- լոբազգիների բույս, որը փաթաթվում է որևէ բանի ու բարձրանում

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1.Կլրացնի խաչբառը՝ կազմելով բարդ, ածանցավոր բառեր, կնշի պահանջվող հոմանիշը,հականիշը, ածականը և այլն։
համեստ բառի հականիշը - անհամեստ
պայծառ միտք ուեցող - պայծառամիտ
ինքն իրեն հավանող - ինքնահավան
մեծ - մեծ խոսող - մեծախոս
հնարք + միտք = հնարամիտ
արկած + խնդիր = արկածախնդիր
գլուխը գովող մարդ - գլուխգովան
զարմանք գոյականից ստացված ածական - զարմանալի
պարծեցող - պարծենկոտ
սուտասան բառի հոմանիշը - փչան
2.Կկարդա համապատասխան հատվածը։
3.Կկարդա համապատասխան հատվածը։
4.Կկարդա համապատասխան հատվածը։
5.Կկարդա համապատասխան նախադասությունը։
6.Ինքնուրույն կգտնի բառարանից բառերի բացատրությունը։

Դաս 15: Բարոն Մյունխհաուզենի ճանապարհորդությունը դեպի Լուսին: (կարդալ տեքստը) Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Ո՞ր հատվածներն են նկարված:
2.Ի՞նչ հնչերանգով կկարդաս այդ հատվածները:
3.Ինչի՞ց եք իմանում, որ սուտ է պատմությունը:
4. Ի՞նչ կասեիր Մյունխհաուզենին,եթե հանդիպեիր:
5.Ի՞նչ բառեր, արտահայտություններ կավելացնես տեքստը կարդալիս:Կարդա ուրախ, զարմացած, զայրացած, տխուր:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1.Մի անգամ համրեցի ու տեսա, որ մի մեղու չկա….
…..այնպիսի թափով էի շպրտել,որ կացինը թռել էր ու ընկել Լուսնի վրա:
Բայց պարանը կարճ դուրս եկավ,ու ես մնացի ….
Այդպես սկսեցի իջնել:
2.Պետք է կարդա հպարտությամբ, պարծենկոտությամբ:
3.Ամեն առավոտ դուրս էի քշում մեղուներին,տանում բացատում….
Գնացի փնտրելու ու տեսա, որ երկու արջ հարձակվել են եղվի վրա:
Շտապ մի այդպիսի բակլա տնկեցի….
4.Սուտ խոսելը լավ բան չէ, բայց իր ստերը զվարճալի էին:
5. Այ քեզ բան, վայ, այ ,վախ, ահա, թու, ուխ …..

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Կկարողանա կարդալ համապատասխան հատվածները:
2. Կկարդա հպարտությամբ,պարծենկոտությամբ:
3. Կկարդա համապատասխան նախադասությունները:
4. Ընտրել այն պատասխանը, որն իրեն հոգեհարազատ է:
ա. Կուզեի ես էլ քեզ պես ստեր հորինել:
բ. Սուտ խոսելը լավ բան չէ, բայց քո ստերը զվարճալի էին:
գ. Ամոթ քեզ, դու սուտասան ես:
5.Ընտրել, թե որ բառերը կավելացնի կարդալիս.
ա. Որ, թե , սակայն, բայց
բ. Այ քեզ բան, վայ, այ ,վախ, ահա, թու, ուխ

Դաս 16: Բարոն Մյունխհաուզենի ճանապարհորդությունը դեպի Լուսին: (պատմել տեքստը) Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Մյունխհաուզենն ինչպե՞ս դարձավ մեղուների հովիվ:
2.Նա ինչու՞ և ինչպե՞ս հասավ Լուսին:
3. Ինչպե՞ս իջավ Լուսնից:
4. Ինչպե՞ս դուրս եկավ մեկ ու կես մղոն խորությունից:
5.Ի՞նչ բառերով կարող ենք բնութագրել Մյունխհաուզենին
6. Կարո՞ղ ենք արդյոք ասել, որ Մյունխհաուզենը խաբեբա էր, խարդախ :
7. Քո շրջապատում կա՞ն սուտլիկներ. մարդիկ նրանց սիրո՞ւմ են, թե ոչ:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Մյունխհաուզենն ընկել էր գերի և իրեն նշանակել էին մեղուների հովիվ:
2.Գնաց փնտրելու կորած մեղուներին: Արծաթե կացնով ուզեց խփել արջերին,բայց կացինն ընկավ Լուսնի վրա: Բակլա ցանեց, որը շուտ էր աճում ու բարձրացավ Լուսին:
3.Հարդից պարան հյուսեց և իջավ: Պարանը կարճ ստացվեց և անընդհատ կտրեց,կպցրեց ներքևի ծայրին,մինչև երկիրը երևաց:Հանկարծ թափով ընկավ ցած՝ գետնի մեջ կես մղոն խորությամբ փոս բացելով:
4.Եղունգներով աստիճաններ սարքեց և դուրս եկավ փոսից:
5. Սրամիտ, զվարճալի, երևակայող:
6.Ոչ: Նա բարի մտքերով էր հորինում պատմություններ և դրանով ոչ մեկին չէր նեղացնում:
7. Կան, բայց իրենց չեն սիրում:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Կկարողանա պատասխանել հարցին նախադասությամբ:
Մյունխհաուզենն ընկել էր գերի և իրեն նշանակել էին մեղուների հովիվ:
2.Կկարողանա պատասխանել հարցին նախադասությամբ:
Գնաց փնտրելու կորած մեղուներին: Արծաթե կացնով ուզեց խփել արջերին,բայց կացինն ընկավ Լուսնի վրա: Բակլա ցանեց, որը շուտ էր աճում ու բարձրացավ Լուսին:
3. Կկարողանա պատասխանել հարցին նախադասությամբ:
Հարդից պարան հյուսեց և իջավ: Պարանը կարճ ստացվեց և անընդհատ կտրեց,կպցրեց ներքևի ծայրին,մինչև երկիրը երևաց:Հանկարծ թափով ընկավ ցած՝ գետնի մեջ կես մղոն խորությամբ փոս բացելով:
4.Ընտրել ճիշտ պատասխանը.
ա. Եղունգներով աստիճաններ սարքեց և դուրս եկավ փոսից:
բ.Մարդկանց ձայն տվեց, եկան փրկեցին:

5.Ընտրել ճիշտ պատասխանը.
ա.Ազնիվ,աշխատասեր,տխուր։
բ.Սրամիտ, զվարճալի, երևակայող:
6.Կպատասխանի՝ իր կարծիքը հիմնավորելով օրինակով։
7.Կպատասխանի՝ իր կարծիքը հիմնավորելով օրինակով։

Դաս 17: Էլեկտրոնիկի [Թեմատիկ պլանավորում]

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Ո՞վ էր գիտաժողովի պատվավոր հյուրը:
2.Ինչպե՞ս դիմավորեցին պրոֆեսոր Գրոմովին: Ինչո՞ւ:
3. Ի՞նչ էր իր հետ բերել պրոֆեսոր Գրոմովը:
4. Ինչպիսի՞ն էր այն: Ի՞նչ էր ճամպրուկի մեջ:
5.Ինչպիսի՞ն էր Էլեկտրոնիկը:
6. Ինչպե՞ս Էլեկտրոնիկը փախավ:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Գիտաժողովի պատվավոր հյուրը պրոֆեսոր Գրոմովն էր:
2.Պրոֆեսոր Գրոմովին դիմավորեցին ծաղկեփնջերով, սիրալիր: Նա գիտաժողովի պատվավոր հյուրն էր:
3.Պրոֆեսոր Գրոմովը իր հետ մի ճամպրուկ էր բերել:
4.Ճամպրուկը երկարավուն էր, սև գույնի, չորս բռնակով, վրան գրված էր.<<Զգույշ սարքավորումներ են>>:
5. Կճատ քիթ, գագաթի վրա՝ ցից մազեր, երկար թարթիչներ…Կապույտ բաճկոն, վերնաշապիկ, ամառային տաբատ: Այդպիսի հարյուրավոր, հազարավոր տղաներ են վազվզում փողոցներով:
6. Պրոֆեսորը միացրել էր նրան 220 վոլտ լարումով հոսանքին՝ լիցքավորելու:Նա չդիմացավ բարձր լարումին և փախավ:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Կկարողանա ընտրել ճիշտ պատասխանը:
Ա. Բարոն Մյունխհաուզենն էր:
Բ. Պրոֆեսոր Գրոմովն էր:
Գ. Հսկա Գուլիվերն էր:

2. Ընտրել ճիշտ պատասխանը.
Ա. Դիմավորեցին ցուցանակներով և գոռգոռոցներով:
Բ. Սիրալիր դեմքերով և ծաղկեփնջերով:
3. Կկարողանա պատասխանել հարցին նախադասությամբ:
Մեքենայի բեռնոցից դուրս էր ցցվել հսկայական ճամպրուկի կլորավուն անկյունը:
4.Ընտրել ճիշտ պատասխանը.
Ա.Ճամպրուկը երկարավուն էր, սև գույնի, չորս բռնակով, վրան գրված էր.<<Զգույշ սարքավորումներ են>>:
Բ. Ճամպրուկը քառակուսի էր, սև գույնի, չորս բռնակով, վրան գրված էր.<<Զգույշ վտանգավոր է>>:

5. Կկարողանա պատասխանել հարցին նախադասությամբ։
6. Կկարողանա պատասխանել հարցին նախադասությամբ։

Դաս 18: Էլեկտրոնիկի արկածները Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1.Ինչո՞ւ էր պրոֆեսորը եկել <<Կաղնուտ>> հյուրանոց:
2. Ի՞նչ էր ներկայացնելու պրոֆեսորը գիտաժողովին:
3. Ինչպե՞ս էր աշխատում Էլեկտրոնիկը:
4. Ինչու՞ փախավ:
5. <<Ես պետք է պառկեմ ճամպրուկի մեջ >> նախադասությունը ինչպես կկարդաք տարբեր հնչերանգներով՝ զարմանք, հիացմունք, զայրույթ:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1.Եկել էր, որ մասնակցի գիտաժողովին:
2. Գիտաժողովին ներկայացնելու էր Էլեկտրոնիկին:
3. Էլեկտրոնիկը լիցքավորվում էր հոսանքով:
4. Հոսանքի լարվածությունը 220 վոլտ էր, շատ էր իր համար: Նա առույգացավ և փախավ:
5. Ես պետք է պառկե՞մ ճամպրուկի մեջ: /զարմանք/
Ես պետք է պառկե՛մ ճամպրուկի մեջ:/հիացմունք/
Ես պետք է պառկեմ ճամպրուկի՞ մեջ:/ զայրույթ/

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Կկարողանա ընտրել ճիշտ պատասխանը:
Ա. Եկել էր հանգստանալու:
Բ. Պիտի հանդիպեր ընկերներին:
Գ. Եկել էր գիտաժողովն մասնակցելու:
2. Կկարողանա ընտրել ճիշտ պատասխանը:
Ա. Ներկայացնելու էր նոր սմարթֆոնը:
Բ. Ներկայացնելու էր Էլեկտրոնիկին:
Գ. Դասախոսություն էր կարդալու:
3. Կկրողանա նշել, որ լցքավորվում էր հոսանքից:
4. Վերադասավորել բառերը և ստանալ պատասխանը.
Էլեկտրոնիկը , 220 վոլտ, հոսանքից և , փախավ, չդիմացավ, գերակտիվացավ, լարվածությանը:
5. Կկարդա համապատասխան հնչերանգով:

Դաս 19: Էլեկտրոնիկի արկածները [Թեմատիկ պլանավորում]

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Ինչպե՞ս կպատմեք որպես Գրոմովի ընկեր:
2. Ինչպե՞ս կպատմեք որպես հյուրանոցի տնօրեն:
3. Ինչպե՞ս կպատմեք որպես Գրոմով:
4.Որտե՞ղ է ռոբոտը սխալվել, ուղղի՛ր:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Կիմանա, որ պետք է պատմի և կարծիք հայտնի պրոֆեսորի աշխատանքի մասին:
2. Կպատմի իր ենթադրության մասին, թե ինչ կարող է լինել ճամպրուկում:
3. Որպես գյուտարար կպարծենա:
4.Խոսքի մասերին տրվող հարցերը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Մի քանի նախադասությամբ պատմել. օրինակ՝
Ես նրան վաղուց եմ ճանաչում: Նա միշտ աչքի է ընկել իր աշխատասիրությամբ:Հաստատ մի նոր բան էլի կներկայացնի:
2. Ճամպրուկը ծանր էր, ուրեմն մի լուրջ բան էր լինելու:…Չէր անցել մի քանի րոպե, երբ պրոֆեսորը դուրս թռավ հյուրանոցից, նստեց տաքսին ու գնաց:
3. Ես երկար էի սպասել այս պահին,որ ներկայացնեմ գյուտս, բայց ամեն ինչ փչացավ իմ անուշադրությունից:
4. Կկարողանա վերադասավորել խոսքի մասերը:

- **Համակարգչում հանդիպել ենք այսպիսի խմբավորման: Օգնի՛ր ռոբոտին՝ ճիշտ խմբավորելու բառերը:**

ական	ածական	բայ	թվական
ժպտաց մոխրագույն Ճամպրուկ երկու հարյուր քսան	չորս բաճկոն կապույտ անհետացել էր	երկրորդ նայում էր արտասովոր վազել	ռոբոտ հարյուր քսան վարդակ կանչեց

Դաս 20: Ոտնահետքեր Լուսնի վրա [Թեմատիկ պլանավորում]

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. Ի՞նչ երազանք ունեին մարդիկ։
2. Ի՞նչ զարմանալի իրադարձություն տեղի ունեցավ 1969 թվականին։
3. Տեքստն ընթերցելիս ի՞նչ իմացար Լուսնի մասին։
4. Տիեզերագնացներից ովքե՞ր ոտք դրեցին Լուսնի վրա։
5.Ընդհանուր առմամբ քանի՞ ժամ մնացին տիեզերագնացները Լուսնի վրա։
6.Տիեզերագնացները ո՞ր երկրի դրոշը ամրացրին Լուսնի մակերևույթին։
7.Ի՞նչ է նշանակում մակերևույթ, սկաֆանդր, ապար, տրտնջալ։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Մարդիկ երազում էին հասնել Լուսին, ոտք դնել Լուսնի վրա։
2. Ամերիկացիների տիեզերանավը թռավ դեպի Լուսին, մի քանի օր հետո տիեզերագնացները ոտք դրեցին Լուսնի վրա։
3. Լուսինը չունի իր սեփական լույսը, այն անդրադարձնում է Արևի լույսը և լուսավորում Երկիր մոլորակի գիշերները։ Լուսնի վրա ո՛չ օդ կա, ո՛չ ջուր, քամի և անձրև էլ չկա։ Լուսնի մակերևույթը քարքարոտ է ու պինդ, պատված է փոշիով։ Մարդու քաշը Լուսնի վրա վեց անգամ թեթև է, քան Երկիր մոլորակի վրա։
4. Տիեզերք գնացած տիեզերագնացներից Լուսնի վրա ոտք դրեցին Նիլ Արմսթրոնգը և Էդվին Օլդրինը։
5. Տիեզերագնացներն ընդհանուր առմամբ Լուսնի վրա մնացին 22 ժամ։
6.Տիեզերագնացները Լուսնի մակերևույթին ամրացրին Ամերիկայի Միացյալ Նահանգների դրոշը։
7. Մակերևույթ- առարկայի, տարածության արտաքին երեսը, սկաֆանդր- տիեզերագնացի պաշտպանիչ հագուստ, ապար-հանքատեսակ, տրտնջալ- գանգատվել, դժգոհություն արտահայտել։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1.Ընտրել ճիշտ պատասխանը.
Ա. Մարդիկ երազում էին հասնել Լուսնին, ոտք դնել Լուսնի վրա։
Բ. Մարդիկ երազում էին ոտք դնել Արևի վրա։
Գ. Մարդիկ երազում էին մեծ տիեզերանավեր կառուցել։
Կկարողանա պատասխանել հարցին նախադասությամբ։
2. Կկարողանա պատասխանել հարցին նախադասությամբ։
3. Կկարողանա պատասխանել հարցին նախադասությամբ։
4.Ընտրել ճիշտ պատասխանները.
Ա. Էդվին Օլդրին
Բ. Նիլ Արմսթրոնգը
Գ. Գուլիվերը
Դ.Մայքլ Քոլինզը

5. Ընտրել ճիշտ պատասխանը.
Ա. 22 րոպե
Բ. 44 ժամ
Գ. 22 ժամ
6. Ընտրել ճիշտ պատասխանը.
Ա. Անգլիա
Բ. Ամերիկայի Միացյալ Նահանգներ
Գ. Հայաստան
7.Գծով միացնել բառերը համապատասխան բացատրությանը կամ հոմանիշներին։

մակերևույթ	գանգատվել, դժգոհություն արտահայտել։
սկաֆանդր	տիեզերագնացի պաշտպանիչ հագուստ
ապար	առարկայի, տարածության արտաքին երեսը
տրտնջալ	հանքատեսակ

Դաս 21: Ոտնահետքեր Լուսնի վրա Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1.Ի՞նչ ազդեցություն է ունենում Լուսինը Երկրի վրա:
2.Տիեզերագնացների զրույցից ի՞նչ իմացար Լուսնի մասին:
3. Ի՞նչ կատակներ էին անում տիեզերզգնացները: Վերընթերցիր դրանցից որևէ մեկը:
4. Ի՞նչ վերցրին տիեզերագնացները Լուսնի վրայից:
5.Ի՞նչ արեցին տիեզերագնացները Լուսնի վրա:
6.Տիեզերագնացները ինչո՞ւ հուշատախտակ թողեցին Լուսնի վրա:
7.Ինչո՞ւ էր տրտնջում Քոլինզը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1.Լուսինը անդրադարձնում է Արևի լույսը և գիշերները լուսավորում է Երկիր մոլորակը:
2. Լուսնի մակերևույթը քարքարոտ է ու պինդ, պատված է փոշիով: Մարդու քաշը Լուսնի վրա վեց անգամ թեթև է, քան Երկիր մոլորակի վրա:
3. Օրինակ՝ «Մենք այստեղ հեռացատկի չեմպիոն էլ կարող ենք դառնալ՝ ցատկելով 45-50 մետր»…
4. Լուսնի վրայից տիեզերագնացները վերցրին 25 կգ ապարների նմուշներ:
5. Տիեզերագնացները տեղադրեցին հեռուստախցիկ, ամրացրին Ամերիկայի Միացյալ Նահանգների դրոշը, տեղադրեցին գիտական սարքավորումներ, հեռուստահեռախոսով խոսեցին:
6.Տիեզերագնացները Լուսնի վրա թողեցին հուշատախտակ, որ Լուսնի վրա ոտք դնող մյուս մարդիկ իմանան, թե ովքեր և երբ են առաջին անգամ ոտք դրել Լուսնի վրա:
7.Քոլինզը տրտնջում էր, քանի որ նա շատ մոտ էր Լուսնին, բայց այդպես էլ ոտք չդրեց Լուսնի վրա: Նա Լուսնից 100 կմ հեռավորության վրա մնացել էր մեծ տիեզերանավում:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Կկարողանա պատասխանել հարցին նախադասությամբ:
2. Կկարողանա տարբերակել տիեզերագնացների խոսքը և դուրս բերել տեղեկատվություն հարցի վերաբերյալ:
3. Բնագրից կընտրի և կկարդա անհրաժեշտ հատվածը:
4. Կկարողանա պատասխանել հարցին նախադասությամբ:
5. Կկարողանա պատասխանել հարցին նախադասությամբ:
6. Կվերլուծի և կպատասխանի հարցին նախադասությամբ:
7.Կվերլուծի և կպատասխանի հարցին նախադասությամբ:

Դաս 22: Ոտնահետքեր Լուսնի վրա Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1. 1 բոպեի ընթացքում պատմի՛ր, թե ի՛նչ տեղեկություն իմացար Լուսնի մասին։
2.Ստանձնել Նիլ Արմսթրոնգի կամ Էդվին Օլդրինի դերը։ Պատմել, թե ի՛նչ արեցին նրանք Լուսնի վրա գտնվելու ժամանակահատվածում, ի՞նչ զգացողություններ ունեին։
3. Նշել, թե ի՛նչ զգացողություն ուներ Մայքլ Քոլինզը։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Լուսինը չունի իր սեփական լույսը, այն անդրադարձնում է Արևի լույսը և լուսավորում Երկիր մոլորակի գիշերները։ Լուսնի վրա ո՛չ օդ կա, ո՛չ ջուր, քամի և անձրև էլ չկա։ Լուսնի մակերևույթը քարքարոտ է ու պինդ, պատված է փոշիով։ Մարդու քաշը Լուսնի վրա վեց անգամ թեթև է, քան Երկիր մոլորակի վրա։
2. Որպես Լուսնի վրա առաջին անգամ ոտք դնող մարդիկ կհպարտանան, կուրախանան։ Կնշեն այն մտքերը, որոնք տպավորվել է։
3. Որպես Լուսնին այդքան մոտ գտնվող և Լուսնի վրա ոտք չդնող մարդ կտրտնջա, կնեղսրտի։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Մի քանի նախադասությամբ կպատմի Լուսնի մասին սովորած տեղեկությունը։
2. Մի քանի նախադասությամբ ներկայացնել դիմացինը հույզերը, ներկայացնել տպավորիչ մտքերը։
3. Մի քանի նախադասությամբ ներկայացնել դիմացինը հույզերը, երբ նեղսրտած է։

.

Դաս 23: Փոքրիկ Իշխանը Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Երբ Փոքրիկ Իշխանը ընկավ երկրագնդի վրա, ի՞նչը նրան շատ զարմացրեց:
2. Ու՞մ հանդիպեց Փոքրիկ Իշխանն առաջինը Երկիր մոլորակի վրա:
3.Հետո ում հանդիպեց:
4.Ի՞նչ կարծիք ուներ ծաղիկը մարդկանց մասին:
5. Աղվեսի հետ ինչի՞ մասին խոսեցին:
6. Ի՞նչն էր աղվեսին դուր գալիս մարդկանց մեջ:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1.Նրան զարմացրեց, որ մարդ չտեսավ:
2.Առաջինը հանդիպեց լուսնի ճառագայթի գույնի մի օձի:
3.Հետո նա հանդիպեց մի եռաթերթ ծաղկի:
4.Ծաղիկը մտածում էր, որ մարդիկ ընդամենը 6-7 հոգի են, նրանց քամին քշել -տարել է:
5.Աղվեսի հետ խոսեցին մարդկանց, նրանց ընտելանալու, որսորդների մասին:
6. Նրան միայն դուր էր գալիս, որ մարդիկ հավ են պահում:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Կարողանա կարդալ համապատասխան մասը:
2. Ընտրել ճիշտ տարբերակը.
Ա. աղվեսին
Բ. օձին
Գ. օդաչուին
3.Կարողանա մեջբերել համապատասխան բառակապակցությունը, կամ նախադասությունը:
4.Ընտրել ճիշտ տարբերակները.
Ա. Մարդիկ անտարբեր են:
Բ. Նրանք 6-7 հոգի են:
Գ. Նրանց քամին քշեց տարավ:

5. Միացնել նախադասության մասերը և ստանալ ճիշտ պատասխանը:

Եթե դու ինձ ընտելացնես,	և որսի են դուրս գալիս:
Մարդիկ հրացան ունեն	ապա ինձ համար միակը կդառնաս,
	ես էլ քեզ համար:

6.Ընտրել ճիշտ տարբերակը.

Ա. Նրան դուր էր գալիս, որ մարդիկ սիրում են աղվեսի մորթուց մուշտակ։
Բ, Նրան դուր էր գալիս, որ մարդիկ հավ են պահում։
Գ. Նրան դուր էր գալիս, որ մարդիկ ընտելացնում են կենդանիներին։

Դաս 24: Փոքրիկ Իշխանը Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1. Ո՞վ էր հեքիաթի հեղինակը:
2. Ի՞նչ մասնագիտություն ուներ:
3. Ինչպիսի՞ն էր նա, ինչո՞վ էր նման իր հերոսին:
4. Ո՞ր հատվածը քեզ դուր եկավ, ինչու՞:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1.Կիմանա, որ հեղինակը Անտուան դը Սենտ Էքզյուպերին է, Ֆրանսիացի գրող:
2.Անտուան դը Սենտ Էքզյուպերին հատուկ չի ստեղծագործել երեխաների համար: Եվ ընդհանրապես, ըստ մասնագի-տության, նա գրող չէր, այլ՝ հիանալի օդաչու:
3. Անտուանը չարաճճի, հմայիչ, խելացի, ուժեղ և սրամիտ երեխա էր: Նա իր ողջ կյանքում հոգով մանուկ մնաց՝ խանդավառ ու հետաքրքրասեր:Ընտա-նիքում նրան «Արևի արքա» էին անվանում, քանի որ ուներ շեկ մա-զեր: Իսկ ընկերները նրան կոչում էին «աստղագետ», որովհետև քիթը ցցված էր դեպի վեր՝ երկինք: Իրականում նա արդեն այն ժամանակ էլ «փոքրիկ իշխան» էր՝ կենսուրախ ու անվախ:
4.Կպատասխանի, թե որ հատվածն է իրեն դուր եկել. օրինակ՝ աղվեսի հետ հանդիպումն ու զրույցը….

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1.Ընտրիր ճիշտ պատասխանը.
Ա. Էրիխ Ռասպե /Գերմանիա/
Բ. Անտուան դը Սենտ Էքզյուպերի/ Ֆրանսիա/
Գ. Ջոնաթան Սվիֆթ /Անգլիա/
2.Կկարողանա հիշել ուսուցչի կամ ընկերների պատմածներից, որ Անտուան դը Սենտ Էքզյուպերին հատուկ չի ստեղծագործել երեխաների համար: Եվ ընդհանրապես, ըստ մասնագի-տության, նա գրող չէր, այլ՝ հիանալի օդաչու:
3. Ընտրել ճիշտ պատասխանները.
Ա.Անտուանը չարաճճի, հմայիչ, խելացի, ուժեղ և սրամիտ երեխա էր:
Բ.Ընտա-նիքում նրան «Արևի արքա» էին անվանում, քանի որ ուներ շեկ մա-զեր:
Գ.Նա իր ողջ կյանքում հոգով մանուկ մնաց՝ խանդավառ ու հետաքրքրասեր:
Դ.Իսկ ընկերները նրան կոչում էին «աստղագետ», որովհետև հետաքրքրվում էր աստղագիտությամբ:
4. Կկարողանա ընտրել իրեն դուր եկած հատվածը և կկարդա, կմեկնաբանի:

Դաս 25: Փոքրիկ Իշխանը Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1.Քո ընտրությամբ վերարտադրի՛ր հեքիաթի որևէ հատվածը:
2.Ենթադրենք՝ Փոքրիկ Իշխանը հանդիպել է քեզ. դու Երկիրն ինչպե՞ս կներկայացնեիր նրան:
3. Հեքիաթի ո՞ր հատվածներն են նկարագարդված: Պատմիր։
4. Ի՞նչ կխոսեիր Փոքրիկ Իշխանի հետ, եթե հանդիպեիր նրան։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1.Կպատմի որևէ հատված. օրինակ՝ ծաղկի և Փոքրիկ Իշխանի զրույցը։
2. Երկիր մոլորակի վրա կա օդ, ջուր, մարդկություն, կենդանական և բուսական աշխարհ։ Կա գիշեր և նրան հերթագայում է առավոտը և այլն։/ կօգտվի անցյալ և այս տարի ձեռք բերած գիտելիքներից՝<<Ես և շրջակա աշխարհը >> առարկայից/
3.Կիմանա, որ նկարագարդված է այն հատվածը, երբ Փոքրիկ Իշխանը իր մոլորակում խնամում է իր վարդին և երբ աղվեսն ու Փոքրիկ Իշխանը հանդիպում են։
4.Կխոսի իր հետաքրքրություններից կամ տպավորություններից։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Կկարողանա պատմել իր բառերով, իրեն դուր եկած հատվածը։
2.Ընտրել ամբողջական պատասխանը.
Ա.Երկիր մոլորակի վրա կա օդ, ջուր, մարդկություն։
Բ.Երկիր մոլորակի վրա կա օդ, ջուր, մարդկություն, կենդանական աշխարհ։
Գ.Երկիր մոլորակի վրա կա օդ, ջուր, մարդկություն, կենդանական աշխարհ, բուսական աշխարհ։
3. Միացրու համապատասխան նկարին։
Ա.Փոքրիկ Իշխանը ապրում էր մի փոքրիկ մոլորակում, որտեղ ուներ երեք հրաբուխ և շատ սիրելի մի վարդ։ Նա միշտ մաքրում էր իր մոլորակը և սիրով խնամում իր միակ վարդին։

Բ. Աղվեսը պատմեց Փոքրիկ Իշխանին, որ մարդիկ որսի են դուրս գալիս ,դա շատ վատ է: Բայց նաև հավ են պահում,դա լավ է:

4.Օրինակ՝ ես զարմացա, թե ինչպես ես առանց տիեզերանավի ճամփորդում: Ես էլ կուզեի այդպես հայտնվել քո մոլորկում….

Դաս 26: Հանելուկային մոլորակը Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1.Ի՞նչ որոշեց Ար Մենը:
2.Ար Մենն ինչո՞ւ վայրէջք կատարեց անծանոթ մոլորակի վրա:
3.Ի՞նչը զարմացրեց Արմենին: Ընթերցի՛ր համապատասխան տողերը:
4.Ինչո՞վ էր նման մոլորակը Երկիր մոլորակին:
5.Ի՞նչ օրենքներ էին գործում Հանելուկային մոլորակում:
6.Ար Մենին ի՞նչ պայման առաջարկեց այլմոլորակայինը:
7. Ո՞րն էր այլմոլորակայինի առաջադրած խնդրի լուծման բանալին:
8.Ի՞նչ է նշանակում անծայրածիր, պարեն, ապարդյուն:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1.Արմենը որոշեց արձակուրդն անկացնել Հեռ Ավոր աստղի մոլորակներից մեկի վրա:
2.Ար Մենը վայրէջք կատարեց անծանոթ մոլորակի վրա, քանի որ վառելիքը սպառվում էր և մոտակայքում ծանոթ մոլորակ չկար:
3.Ար Մենը զարմանքով նկատեց, որ մոլորակի բնակիչների մի մասը քայլում է աչքերը փակ, մի մասը բոլորովին ճաղատ է, մի մասը ձեռքերը վերև բարձրացրած է քայլում, մի մասը նստած է ու չի խոսում:
4.Մոլորակը բնակեցված էր, շնչելու օդ կար, ջուրը քաղցրահամ էր:
5.Մոլորակում որպեսզի մի բան կատարվեր, պիտի մեկն անպայման միտքը շարժեր, մի բան գուշակեր:
6. Այլմոլորակայինը Ար Մենին առաջարկեց գնա այգի և կռահի, թե երեք վառվռուն ծաղիկներից ո՛րն է այլմոլորակայինը: Եթե կռահի, կստանա վառելիք:
7.Ար Մենի զրուցակիցը չոր էր, իսկ մյուս երկու ծաղիկը՝ թաց:
8. Անծայրածիր - անսահման, անվերջ, պարեն - մեկ մարդու օրական ուտելիք, ապարդյուն - անօգուտ

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Ընտրել ճիշտ պատասխանը.
Ա. Արմենը որոշեց արձակուրդն անկացնել Հեռ Ավոր աստղի մոլորակներից մեկի վրա:
Բ.Արմենը որոշեց արձակուրդն անկացնել Երկիր մոլորակի վրա:
Գ. Արմենը որոշեց այդպես էլ արձակուրդի չգնալ:
2. Ընտրել ճիշտ պատասխանները.
Ա. հետաքրքրությունից ելնելով
Բ.մոտակայքում ծանոթ մոլորակ չկար
Գ. վառելիքը սպառվում էր
3.Պատասխանել հարցին նախադասությամբ:

4. Համեմատել և տրվածներից ընտրել պահանջվածը։
Օրինակ՝ նշվածներից դեղին գույնով ներկել այն պայմանները, որոնցով հանելուկային մոլորակը նման է Երկիր մոլորակին։
Մոլորակը բնակեցված էր, մարդկանց մի մասը ձեռքերը վերև բարձրացրած է քայլում, շնչելու օդ կար,անձրևի ժամանակ երկնքից կոնֆետ է թափվում, ջուրը քաղցրահամ էր։
5. Շարունակել նախադասությունը։
Մոլորակում որպեսզի մի բան կատարվեր, պիտի մեկն անպայման…
6.Պատասխանել հարցին նախադասությամբ։
7.Պատասխանել հարցին նախադասությամբ։
8.Համապատասխանեցնել այն նախադասությունն ու բառը, որում կա տրված բառի հոմանիշը։
1. անսահման, անվերջ 2. մեկ մարդու օրական ուտելիք
3.անօգուտ

Վարձույթով տրվող աստղաթիռներից նա ընտրեց մի հոգու համար նախատեսվածը, պարենի պաշար վերցրեց, հանդերձավորվեց ինչպես հարկն է ու, հրաժեշտ տալով մտերիմներին, թռավ։
Տիեզերական աանծայրածիր հեռուներն անսահմանորեն ձգում էին Արմենին։
Երկար զննեց ծաղիկները, հոտոտեց, պտտվեց նրանց շուրջը, բայց ապարդյուն։

Դաս 27: Հանելուկային մոլորակը Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար։

1.Ի՞նչը ստիպեց Ար Մենին արձակուրդն անցկացնել Հեռ Ավոր աստղի մոլորակներից մեկի վրա։
2.Ինչպե՞ս պատրաստվեց Ար Մենը թռիչքին։
3.Ի՞նչ արտասովոր բաների հանդիպեց Ար Մենը այդ մոլորակում։
4.Հանելուկային մոլորակում ինչերի՞ն էին հարցեր առաջադրել ափերը, գլուխը, ամպը, ուսերը, կոպերը։
5.Ար Մենն ինչպե՞ս կռահեց, թե որն էր իր զրուցակիցը։ Կարդա՛ այն տողերը, որից դու գլխի ընկար։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1.Արմենին դուր էր գալիս տիեզերքը, չէր կարողանում զբաղվել իր սովորական աշխատանքով։
2.Վարձույթով մի հոգու համար աստղաթիռ ընտրեց, պաշար վերցրեց, հանդերձավորվեց, հրաժեշտ տվեց մտերիմներին։
3.Ար Մենը նկատեց, որ մոլորակի բնակիչների մի մասը քայլում է աչքերը փակ, մի մասը բոլորովին ճաղատ է, մի մասը ձեռքերը վերև բարձրացրած է քայլում, մի մասը նստած է ու չի խոսում։ Մոլորակում պայման կար, որպեսզի մի բան կատարվեր, պիտի մեկն անպայման միտքը շարժեր, մի բան գուշակեր։
4.Ափերը՝ գետակի ջրերին, գլուխը՝ մազերին, ամպը՝ անձրևին, ուսերը՝ ձեռքերին, կոպերը՝ աչքերին։
5.Ար Մենը վերհիշեց այլմոլորակայինի խոսքը. «Արդեն ուշանում եմ, ընկերներս հիմա լավ թրջված կլինեն, ես վազեցի»։

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1.Պատասխանի հարցին նախադասությամբ։
2.Տրվածներից ընտրել և առանձնացնել համապատասխան գործողությունները։
Օրինակ՝ Դեղին գույնով ներկել այն գործողությունները, որ կատարեց Ար Մենը Երկիր մոլորակից թռչելուց առաջ։
Վարձույթով մի հոգու համար աստղաթիռ ընտրեց, սովորեց այլմոլորակայինների լեզուներ , պաշար վերցրեց, հանդերձավորվեց, հրաժեշտ տվեց մտերիմներին։
3.Պատասխանի հարցին նախադասությամբ։
4.Տրամաբանել և համապատասխանեցնել զույգերին։
Օրինակ՝ համապատասխան զույգերը ներկել նույն գույնով։
ափեր, գլուխ, ամպ, ուսեր, կոպեր
ձեռքեր, գետակի ջրեր, աչքեր, մազեր, անձրև,

5. Բնագրից ընտրել և կարդալ հարցի պատասխանը։

Դաս 28: Հանելուկային մոլորակը Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1.Պատմի՛ր այն հատվածը, թե ինչպես եղավ, որ Արմենը հայտնվեց այլ մոլորակում:
2.Բնագրի ո՞ր հատվածը քեզ դուր եկավ, հետաքրքրեց, պատմի՛ր:
3. Ըստ քեզ՝ ո՞ր հատվածն էր կարևոր, պատմի՛ր:
4.Հանելուկային մոլորակում ինչերի՞ն էին հարցեր առաջադրել ափերը, գլուխը, ամպը, ուսերը, կոպերը, որ չէին կարողացել պատասխանել: Ձևակերպի՛ր հարցերը և պատասխանիր:
5.Հանելուկային մոլորակում ինչերի՞ն էին հարցեր առաջադրել ծառերի արմատները, արևը, երկնքի աստղերը, ատամները, որ կարողացել էին պատասխանել նրանց: Ձևակերպի՛ր հարցերը և պատասխանիր:
6.Պատմի՛ր այն հատվածը, թե ի՛նչ փորձություն տրվեց Ար Մենին և ի՞նչը օգնեց հաղթահարել այն:
7. Ի՞նչ սովորեցրեց այս պատմությունը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1.Ար Մենին ձգում էր տիեզերքը: Նա որոշեց արձակուրդն անցկացնել Հեռ Ավոր աստղի մոլորակներից մեկի վրա: Աստղաթիռի վառելիքն ավարտվեց, և նա ստիպված վայրէջք անհայտ մի մոլորակի վրա:
2.Օրինակ՝ «Մոլորակի բնակիչների մի մասը քայլում է աչքերը փակ…»
3.Կարևոր էր այն հատվածը, որ այլմոլորակայինը իր խոսքում նշեց, որ ընկերները մի լավ թրջված կլինեն, իսկ իրքը դեռ չոր է:
4.Ափերը՝ գետակի ջրերին, գլուխը՝ մազերին, ամպը՝ անձրևին, ուսերը՝ ձեռքերին, կոպերը՝ աչքերին:
Օրինակ՝
5.Ծառերի արմատները՝ ծառին, արևը՝ արևի շողերին, երկնքի աստղերը՝ երկնքին, ատամները՝ բերանին:
Օրինակ՝
6.Ար Մենին փորձություն տրվեց կռահել, թե որ ծաղիկն է իր զրուցակիցը: Արմենին օգնեց այն, որ հիշեց իր զրուցկցի և իր խոսակցությունը:
7.Երբ որևէ գործ ես անում, ուշադի՛ր եղիր. ամենափոքր մանրուքն էլ կարող է խնդրի լուծման բանալի լինել:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1.Վերարտադրել նշված հատվածը՝ խոսքում օգտագործելով նորածանոթ բառերը:
2.Սեփական կարծիքն արտահայտել, հիմնավորել:
3.Առանձնացնել գլխավորը երկրորդականից:
4.Հարցական նախադասություններ կազմել, կետադրել:

5.Հարցական նախադասություններ կազմել, կետադրել։
6.Պատասխանել ամբողջական նախադասությամբ։
7.Եզրահանգում կատարել, նշել իր կարծիքը նախադասությամբ։

Դաս 29: «Այս զարմանահրաշ մոլորակը» թեմայի ամփոփում:

Թեմատիկ պլանավորում

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:

1.Ինչո՞ւ է թեման վերնագրված «Այս զարմանահրաշ մոլորակը»:
2.Թեմատիկ շարքում դու հանդիպեցիր երևակայական շատ պատմությունների, և դրանցից միայն մեկն էր իրողություն: Ո՞րն էր դա:
3.Այս բաժնի ո՞ր բնագիրը քեզ ամենաշատը դուր եկավ:
4.Այս զարմանահրաշ պատմությունների մեջ ո՞ր հերոսի կողքին կուզենայիր հայտնվեիր և ի՞նչ կանեիր:
5.Ովքե՞ր են այս բաժնի այն հերոսները, որոնց բնորոշ է հետևյալ բառերը, բառակապակցությունները, նախադասությունները:
Մարդ-ռոբոտ, մարդ-հսկա, երկնքում լողացող «նավ», Փչան բարոն, Հանելուկային Ար …, նրա հետքը մինչև հիմա Լուսնի վրա է, …… Իշխանը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Թեմայի ստեղծագործություններում և՛ Երկիր մոլորակի, և՛ այլ մոլորակների վրա տեղի էին ունենում զարմանահրաշ երևույթներ:
2.«Ոտնահետքեր Լուսնի վրա» ստեղծագործության դեպքերն են իրողություն:
3.Յուրաքանչյուր մարդ ունի իր կարծիքը: Արտահայտել կարծիքը, հիմնավորել:
4.Արտահայտել սեփական կարծիքը, հարցին մոտենալ ստեղծագործաբար, երևակայել, հիմնավորել իր ասելիքը:
5. Մարդ-ռոբոտ - Էլեկտրոնիկ
մարդ-հսկա - Գուլիվեր
երկնքում լողացող «նավ» - տիեզերանավ
Փչան բարոն - Մյունխհաուզեն
Հանելուկային Ար … - Մեն
նրա հետքը մինչև հիմա Լուսնի վրա է - Արմսթրոնգ
…… Իշխանը - Փոքրիկ

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Վերլուծել, հասկանալ, թե ինչո՛ւ է վերնագրված թեման այդպես, պատասխանել նախադասությամբ, հիմնավորել ասելիքը:
2.Համեմատել ստեղծագործությունները, առանձնացնել հարցի պատասխանը:
3.Արտահայտել կարծիքը, հիմնավորել:
4.Արտահայտել սեփական կարծիքը, ստեղծագործել, երևակայել, հիմնավորել իր ասելիքը:
5.Լրացնել խաչբառը.
1.Մարդ-ռոբոտ,
2.մարդ-հսկա,

3.երկնքում լողացող «նավ»,
4.Փչան բարոն,
5.Հանելուկային Ար …,
6.նրա հետքը մինչև հիմա Լուսնի վրա է,
7…… Իշխանը։